3867
հայերեն

# ՅԻՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՈՒ
# ՍՈՒՐԲ
# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
# Ի ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԷ.



1838

22
գ - 56

2004

ՀՀ
Գ-56
3867 Կ.Հ
489

# ՀԱՐԻՒՐ ԵՒ ՉՈՐՍ
# ՍՈՒՐԲ
# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հաւաքեալ

'ի հին եւ 'ի նոր կտակարանաց

յօգուտ մանկանց

Աշխատասիրութեամբ Յովհաննու Գիւբներեան
Համդերձ յաւելուածովք հոգեշահ խրատուց
եւ պտղոց բարեպաշտութեան ․

'ի Ռուս լեզուէ

Հայացեալ

Աւագ քահանայ Հայոց տփխիսայ Իսահակ Մա-
հառունեան ։

'Ի Հայրապետութեան Արարատեան գերագահ
մայր Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ ԷՋ ՄԻ-
ԱԾՆԻ Տեառն ութերորդ ՅՈՎ-
ՀԱՆՆՈՒ Կարբեցւոյ սրբազնակատար Կա-
թուղիկոսի ամ․ Հայոց եւ Կայսերապատիւ Աս-
պետի ․ որոյ եւ Վեհափառ հրամանաւ Տպա-
գրեցաւ ։

1838 ․ ռմձէ ։

'ի Տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին

'ի ՍԲ ԷՋ ՄԻԱԾԻՆ ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

12438-58

ՍՐԲԱԶԱՆԱԿԱՏԱՐ ՕԾՈՒԹԵԱՆ
ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԳԻ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵ-
ՂԵՑՒՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ
ԵՒ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ
ԷՋՄԻԱԾՆԻ
ԱՐԺԱՆԱՒՈՐ ՓՈԽԱՆՈՐԴԻ
ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ
ԼՈՒՍԱՒՈՐՉԻ
ՆՇԱՆԱՒՈՐԻ ԱՍՊԵՏՈՒԹԵԱՆ
ՍՐԲՈՅՆ ԱՂԷՔՍԱՆԴ-
ՐԻ ՆԵՒԱՑԻՈՅ
ԵՒ Ս. ՎԼԱԴԻՄԻՐԻ Ա. ԱՍՏԻ-
ՃԱՆԱՑ
ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ ՌՈՒ-
ՍԱՑ
ԵՒ ԲԱԶՄԵՐԱԽՏ ՏԵԱՌՆ

[illegible]

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## Վեհափառ Հայրապետ.

'Ի քե՛զ ա՟մ ոք տեսանէ այսօր զնոր բեսե-լիէլ լցեալ յերկնաբնակ էակէ անթարգմա-նելի ձիրուք շնորհաց առ 'ի զգործ նմանական խորանաց ճարտարապետել առ 'ի բնակութ՟ե այնմ՝ որոյ ը՟ ամենայն տեղիս է անպարագիծն Տէրութիւն.

Հինն բեսելիէլ ճարտարապետեաց զմի խորան և եթ յաղագս բնակութ՟ե Տ՟ն ամե-նակալի. բայց նորդ՝ կառուցեալ հրաշագոր-ծեալ զշքեղազարդ և զազգաօգուտ դպրոց գերագահ Մայր Աթոռոյ ս՟բյ Կաթուղիկէ Էջմիածնի, արուեստագործես 'ի նմին զբա-զում խորանս, յորս զմանկունս սրբոյ եկե-ղեցւոյ մեծին Գրիգորի Նախահայրապետին մերոյ և լուսաւորչի յօրէնս Տ՟ն և 'ի գի-տութիս պանծալիս հրահանգելով, զորս ոտից ճրագ, և շաւղաց՝ լոյս՝ Աստուածազգեաց սաղ-մոսերգուն անուանակոչէ, կազմես զիւրա-քանչիւրան 'ի նոցանէ օթարան լինել անպարա-գրելւոյն ը՟ս օրինակին՝ զոր մատն բարձրելոյն է նախատպաւորեալ 'ի լուսափայլ և յանբիծն մտաց քոց տախտակ ։ Կարճառօտեսցի՛ն բանքս առ արփիապէս յայտնի գոլոյն հանրաշահ մե-ծագործութեանց քոց՝ բնաւից.

Ոչ վերստուեալ Մծաշնորհն Բեսելեւ
'ի ճարտարապետելն զգործ խորանին՝ և զդա-
լոցն ևս ընդունէր զօժանդակութի, յատայ-
նանկութի, 'ի բեհեզ և յայլսն. նմանապէս և վե-
հափառականդ Սրբազնակատար Օծութի զկրտ-
սերս 'ի բանն սպասաւորս 'ի պաշտօն՝ որում
չեմն արժանի՝ կացուցեալ գլխակարգեալ
'ի քոյինաստեղծ դպրոցի անդ Վեհափա-
ռորէն բարեհաճեցար ընդունել և զիմն գոր-
ծակցութի: Բայց իմ Թափուր յիմ յիմս կո-
չումն վերաբերեալ ձրից գտեալ, պատշաճ վար-
կայ զատուցին հատոր՝ հարիւր և չորս տբ պատ-
մութի անուանեալ մատենի, պարունակեալ
'ի յիսուն և երկու տբ պատմութիս Հին կտա-
կարանի հանդերձ յաւելուածովք հոգեշահ
խրատուց և պտղոց բարեպաշտութե 'ի Ռուս
լեզուէ հայացուցեալ Թարգմանութբ, նուի-
րել ամենահռչակ անուան Բարերարիդ իմոյ
յառանձին օգտուս և 'ի զուարճութի ուսում-
նատենչ համբակաց, որք 'ի Վեհափառութեդ
են դպրոցի:

Ոչ ինչ տարադէպ դատեալ իմ՝ յայտնել
Քումդ վեհափառութե, թէ մատեանս այս
մատեան օգտակար յոյժ համարեալ 'ի Ռուս-
սիա՝ բազում անգամ 'ի լոյս ածաւ տպագը-
րութբ 'ի պէտս ուսումնարանաց Քրիստոսազօր
Տէրութե Ռուսաց, ամենախոնարհաբար հայ-
ցեմ 'ի վեհափառութէդ բարեհաճիլ ընդունել

զայս իմ նուաստ նուէր, զոր անկեղծ գոհութեամբ զյորդնադիմի բարերարութեանց Քոց նուիրեմ Քեզ, ոչ տրիտուր ինչ, այլ ի ցոյց երախտագիտութեան. զի ըստ անշուշտ առածին, որ ոմ ուրեք սերմանէ զերախտիս՝ արժանի է ոմ ուրեք հնձել զշնորհակալութիւն:

Քաղցր ակնարկութեամբ հայեցեալ սրբազնակատարդ Օծութիւն յայս իմ երկս դուզնաքեայ, և ի նուիրագործ ողս սրբին, բարեբաղդ զանձն իմ կացուսցես, որով խրախոյս առից ոչ թէ միայն յաւարտ ածել քաջալերեալ սկսեալ զայլ միւս ևս մատենանս, զքերթուածն արարած Նոնոսի յորջորջեալ, և զքարոզսն Անդրէանի՝ տպագրեալ Կայսերազանցն հաճեհաւանութեամբ և օժանդակութեամբ, և զայլ այսպիսիս, որոց Թարգմանութիւն իմն մերձ է յաւարտ, այլ նաև մատենամուխ իսկ լինել յես գերագոյն ձեռնարկութիս յօգուտ մանկանց սրբոյ առաքելական եկեղեցւոյ Հայոց՝ Քում արթուն և բազմարդիւն հոգողութեան յանձն եղելոյ:

Վեհափառ Հայրապետ,
Սրբազնասուրբ Տէրութեանդ
ամենախոնարհ ծառայ

Խաչատուր Վ. Ջահանեան Աղահամոնեանց:

Ի 17 մարտի 1838.
Ի սբ. Էջմիածին:

# ՅԻՍՈՒ՛Ն ԵՒ ԵՐԿՈՒ
# ՄԻ
# ՊԱՏՄՈՒԹԻՒ՛Ն
# Ի ՀԻ՛Ն ԿՏԱԿԱՐԱ՛ՆԷ.

---

## Մ՝ասն առաջին .



# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ա։

## Յաղագս արարչագործութեան աշխարհի։

Ի սկզբանն արար Ած զերկին և զերկիր. և երկիր էր աներևոյթ և անպատրաստ. խաւար ՚ի վր անդնդոց, և հոգի Այ շրջէր ՚ի վր ջուրցն։ Յամ արարչագործութն ՚ի գործ էած Ած զվեց աւուրս. յառաջնում աւուր արար Ած զլոյսն. յերկրորդումն՝ զհաստատութի երկնից։ Յերրորդումն՝ զերկիր ամ բուսովք և ծառովք հանդերձ. ՚ի չորրորդումն՝ զարեգակն, զլուսին և զաստեղս. ՚ի հինգերորդումն՝ զկենդանիս լողականս ՚ի ջուրս, և թևաւորս յօդս, այսինքն զձկունս և զթռչունս. ՚ի վեցերորդումն՝ զերկրային կենդանիս և զմարդն։ Եւ յետ կատարման այսր ամի ետես, թէ ամ ինչ, զոր արար՝ բարի են. յեօթներորդումն հանգեաւ ՚ի վերջոյ յամ գործոց իւր։

## Օգտակար խրատք։

ա. Տր Ած արար զերկին և զերկիր և զամ՝ որ ՚ի նս գտանի՝ յոչ գոյից։

Ծննդ [illegible]

Ճանաչեմք զամենակարողութիւնն Այ։

Է. Այն ա͞մ, զոր արար Ա͞ծ ՚ի վեց աւուրս՝ էին յոյժ բարի։

Օ[illegible]։

Դաւանեմք զանպատում ամենիմաստութիւն Արարչին։

Գ. Ա͞ծ զայս ա͞մ արար վասն մարդոյ։

Օ[illegible]։

Դաւանեմք զանպատում բարութիւնն Ա͞յ։

## Պտուղք բարեպաշտութե͞։

Ի սկզբանն արար Ա͞ծ զերկին եւ զերկիր եւ զա͞մ յոչնչէ միով Ա͞ծային բանիւ իւրով։ Ցանկնարկելս իմ յայս ամենամեծ ստեղծագործութ͞ն, յուշ լինի ինձ յարաժամ, թէ զնա միայն իսկապէս մարթ է ա͞ծ կոչել, որ կարաց ստեղծանել զայսքան մեծագործութի͞ւ արարչութեան։

## ԳԼ. ՏԱՌՈՒԹԻՒՆ Է։

### Յաղագս արարչագործութեան մարդոյ։

Ա͞ծ ստեղծեալ զայլ ա͞մ արարածս՝ ասաց այսպէս, արասցուք մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութե͞։ Յետ այսորիկ ստեղծ նա զերկու մարդիկ զայր եւ զկ



կին

կեն. զայրն անուանակոչեաց ադամ, եւ ըզ-
կինն՝ եւայ։ Զառաջինն արար Տէր զայրն ՚ի
հողոյ երկրի՝ փչեաց յերեսս նորա շունչ կեն-
դանի։ Յետ ստեղծանելոյ այդ զադամ՝ ասաց,
ոչ է բարուոք մարդոյդ միայն լինել, արաս-
ցուք դմա օգնական. և զենի այսրիկ եած
՚ի վերայ նր զամենաթանձր նինջ, և եառ զմի
՚ի կողից նր. ՚ի կողէ աստի յօրինեաց արար
ած զկինն, և եած զնա առ ադամ. յայն-
ժամ ասաց ադամ, այս է ոսկր յոսկերաց
իմոց և մարմին ՚ի մարմնոյ իմմէ։ Այսու ա-
մենայնիւ տնօրինեաց Տէր զօր պսակն. և օրհ-
նեաց զնախահայրն և զնախամայրն այսպիսի
բանիւք, Աճեցէք և բազմացարուք, և լցէք
զերկիր և տիրեցէք դմա, և իշխեցէք ձկանց՝
որ ՚ի ջուրս, թռչնոց օդականաց և ամ գա-
զանաց՝ որք զեռուն ՚ի վերայ երկրի։

## Օգտակար խրատք։

ա. Նախամարդն ստեղծաւ ՚ի հողոյ։

Զի՞նչ ցուցանէ մեզ այս։

Թէ մարդն ո՛չ երբէք պարտի հպարտանալ։

բ. Տէր զպսակն տնօրինեաց ՚ի դրախտին, և ետ նմին զիւրն օրհնութիւն։

Զի՞նչ առաւել յայտնացուցանէ։

Թէ պսակն է սուրբ և ածահաճոյ վիճակ։

գ. Տէր ՚ի սկզբանն ստեղծ զերկուս ամուսինս և եթ։

 Զի՞նչ

Օրէնք ցայգամանէ մաքաբերերէ:

Աւէ չէ՛ պարտ առն ունել աւելի քան զմի կին, և կնոջն աւելի քան զայր մի ՚ի մի և ՚ի նոյն ժամանակի:

## Պտուղք բարեպաշտութե՟ն:

Առաջնամարդն ադամ, յորմէ մեք ամենեքեան յառաջ գամք՝ ստեղծաւ ՚ի հողոյ երկրի՝ պատկերակից ա՟յ: Իսկ արդ՝ որովհետև այսպիսի է ծագումն ազգի մարդկան, ուրեմն վասն էր ծանրաբեռնեմք զսիրտս մեր ամբարտաւանութեամբ: Ի տիրել մեզ մեծամտութե՟ն՝ իսկոյն յառեսցուք սևեռեսցուք զաչս մեր ՚ի հող:

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Գ:

Յաղագս անմեղութեան վիճակին ՚ի դրախտին:

Ադամ և եւայ կային ՚ի սկզբանն յանմեղ վիճակի. յայնժամ յանձինս բերէին նոքա ըզ պատկեր և զնմանութի՟ն ա՟յ. ուրեմն չունելով զմեղս ինչ, զարդարեալքն յարդարութեան և ՚ի սրբութե՟. ՚ի նմին ժամանակի տակաւին ոչ ուրեք երբեք էր մահ յաշխարհի, ապա ուրեմն ադամ և եւայ անմահք էին. ՚ի կատաղի գազանաց նոքա ոչ բնաւ երկնչէին,



որով

որովհետեւ գաղանք հնազանդ էին մարդոյն: Այնմ ժամանակի չունէին նոքա զպէտս ինչ հանդերձի, վա՛ զի յանմեղն վիճակի անդ մերկ էին: Տեղի բնակութեան նց էր դրախտն, վա_յելուչ այգի ծառատունկ. 'ի նմա կային ամ ազգք ազգք ախորժահաճոյ ծառոց: Նախածնօղքն գործեցին զմեծ մեղս, որոյ վա, բարկա_ցաւ ած եւ արտաքսահմանեաց զնոսա 'ի դրախ_տէ անտի, առ դրունս որոյ կացոյց զքերով_բէն բոցեղէն սրով հանդերձ, զի մի վերըս_տին մտցեն նոքա անդր: Ի ձեռն պատուի_րանազանցութեանս այսորիկ մարդիկ եղծին զպատկերն ածական, ընդ որոյ եմուտ յաշ_խարհ մեղք, եւ 'ի միասին ընդ մեղացն մահ: Ադամ ծնաւ ապա զորդիս նմանակիցս ին_քեան, եւ ամ յետագայք նր եւս ցայսօր ժա_մանակի 'ի մեղս յղանան եւ ծնանին:

## Օգտակար խրատք:

Ի պատմութենէ աստի յայսմանէ մարթ է տեսանել զմեծ փոփոխութիւն յազգի մարդ_կան ոչ յառաջ քան զպատուիրանազանցութիւն, նմանապէս եւ զկնի այնորիկ:

ա. Ի վիճակի անմեղութեան մարդիկ էին ար_դար եւ սուրբ:

Ամենայն ոք յետ պատուիրանազանցութեան իւրոյ պարտի ասել, նայեա՛ց առ իս տէ՛ր՝ քաղցր աչօք. անօրէնութեամբ յղացայ եւ 'ի մեղս

 ծնաւ

ծնաւ զիս մայր իմ։ Սաղմ. 50. է։

ե. Սուրբէն յանցանք վերաբերին անձանց էին։

Զի նորին պատուիրանազանցութեան պա՛րտէ մեզ ածել այսպէս. ցո՞յց մեզ տէ՛ր զճանապարհ, որ առաջնորդեսցէ մեզ առ բժշկութիւն հոգեկան խոցութեանց մերոց և առ ՚ի գիւտ քոյդ ողորմութեն։

դ. Սուրբէն յանցանք վերաբերին նոյին ՚ի դրախտին։

Յետ պատուիրանազանցութեն պարտիմք վշտագնիլ, զի գտանիմք ՚ի գերարտօրարանց հոլով, որ լցեալ լիացեալն է անբարեմասնութեամբք և վտանգօք։

## Պտուղք բարեպաշտութեն։

Աւաղ, ո՞ւր է այն վայելչագեղն տեղի՛ բնակարան նախահարց, որ ՚ի սուրբ գիրս դրախտ անուանի։ Այո՛, էր այն և կորեաւ ՚ի ճաշակել եւայի յարգելեալն ծառոյ զպտուղ։ Իսկ զի՞նչ մնաց մեզ. այլ դրախտ, յորում կեցցուք ընդ Փրկչին մերում։

## ԳԼ. ՏԱՍՆԵՒԹԻՆ, Դ։

### Յաղագս պատուիրանազանցութեն նախահարցն։

՚Ի մէջ դրախտին գտանէր ծառն գիտութեն բարւոյ և չարի, որոյ տուեալ պտուղք թէ



և

և գեղեցիկ էին տեսլեամբ, սակայն ադամ և եւայ ոչ զօրէին ուտել յայնցանէ, վս զի ած յանուանէ արգել նոցա զայն՝ ասելով, յորում աւուր ուտիցէք, մահու մեռանիցիք. բայց նախանձեցին զայն արկեալ ՚ի մտւացօնս զպատուէր, յարգելեալն կերին ծառոյ: Այս ամ մեղանչականութի հակամէտս արար զնս ամնյ ծպտեալ ՚ի կերպարանս օձի. օձս այս ասաց ցկինն, դուք ոչ եթէ մահու մեռանիցիք, այլ ՚ի ճաշակելն ՚ի պտղոյ յայդմանէ՝ եղիջիք իբրև զած. կարծելով կնոջն թէ ծառն այն անշուշտ պարտի գոլ յոյժ բարւոք ՚ի կերակուր, որովհետև իմաստունս գործէր, և վնկ ոչ եթէ միայն ինքն եկեր ՚ի պտղոյ անտի, այլ և ետ և առն իւրում. Ընդերեկս սկսաւ Տէրն ձայն արձակել ադամ, ուր ես. այլ ադամ և եւայ թագչէին ՚ի մէջ ծառաստանի անդ այգւոյն այնորիկ և ՚ի թզենւոյն արարին ինքեանց զածածանելիս ՚ի տերևոց, զի զամօթի հարկանէին ՚ի մերկութենէ անտի իւրեանց: Իսկ մինչ հարկ եղև նց պատասխանատու լինել առաջի աստուծոյ յաղագս պատուիրանազանց լինելոյն, յայնժամ սկսան նոքա մեղադիր միմեանց գոլ: Ադամ ասաց, թէ կինն հակեցոյց զիս առ այն. իսկ եւայ ներհակն ասէր, թէ օձն խաբեաց զիս: Այլ արարչապետին ոչ շատացեալ այսպիսի պատասխանատուութք, զերկոսին զնս արտաքսեաց ՚ի դրախտէն. և ոչ այսչափ



միայն

միայն՝ այլեւ իւրաքանչիւրումն 'ի նոցանէ
առանձինն առանձինն յայտնեցաւ պատիժ.
ցԵւայ ասացաւ, դու ցաւօք ծնցիս զորդի
եւ եղիցիս կախեալ զառնէդ կանանց, եւ նա տի_
րեսցէ քեզ. իսկ յաւարտ այսր ա͞մի ցադամ
ասացաւ, քրտամբք երեսաց կերիցես զհաց,
մինչեւ դարձցիս յերկիր՝ ուստի առար, զի
հող էիր եւ 'ի հող դարձցիս: Ի վերջոյ՝ եւ
ցօձն ասաց ա͞ծ պհեանեծայս, զաւակ կնոջդ
ջախջախեսցէ զգլուխ քո: Զաւակս կնոջն
իմացեալ լինի Յ͞ս Ք͞ս, որ 'ի լրման ժամա_
նակին ծնանելոցն էր 'ի կնոջէն: Յետ այսորիկ
հրամայեալ նոցա ա͞ծ զգեստաւորիլ մաշկե_
ղէն հանդերձիւք եւ ապա տարագրիլ 'ի դր_
րախտէ անտի:

## Օգտակար խրատք:

ա. Յա՛յսմ պատմութենէ մարթ է տեսանել, թէ
քանի՛ չար եւ քանի՛ ծանր մեղք է ո՛չ անսացո_
ղութեանն:

Աստուած արտաքսեաց զնախահարսն 'ի դրախ_
տէն, յաղագս անհնազանդութեան:

բ. Մա՛րթ է եւ այսն եւս տեսանել, թէ ո՜ չարա_
ցէնն եմոյծ յաշխարհ չարութիւն:

Այսինքն դեւն, որ ասաց Եւայի, եղիցիս
իբրեւ զաստուած:

գ. Հասոյ ցեաոյ տեսանելոյ, թէ չի՛նչ պա՛րտ է



խոյ

Խորհին 'ի շփնումն մեր յաջգուղ :
Պիտանի է մտածել զպատուիրանազանցու-
թիւնն արարեալ 'ի նախահարցն 'ի դրախտին :

## Պտուղք բարեպաշտութե̃ :

Յետ զարգելեալն ուտելոյ ադամայ և եւա-յի զպտուղ, էին մերկք : Նմին օրք եղիցուք, եթէ հպարտասցուք հանդերձիւք : Այլ, պա-հեա՛ զմեզ յունայնածաղիկ սնափառութենէ աս-տի : Ջա՛ն դիցուք դարձուցանել զհոգի մեր յամբարհաւաճութենէ յայսմանէ 'ի ճշմա-րիտն հեզանս, և յակնարկելն 'ի հանդերձս, հանապազօր զադամայն յիշատակել զպատ-ուիրանազանցութի̃ :

## ԳԼ. ՏՐՏՄՈՒԹԻՒՆ. Ե :

Յաղագս կայենի, որ սպան զաբէլ զեղբայր իւր :

Ադամ ունէր զերկուս որդիս, յորոց անդ-րանիկն կոչիւր կայէն, և էր երկրագործ. իսկ կրտսերն Հաբէլ, և էր հովիւ : Երկոքին եղ-բարքս այսոքիկ մատուցին պատարագ Աստու-ծոյ. կայէն 'ի պտղոցն երկրի, իսկ Հաբէլ յանդրանկածին խաշանց իւրոց. և 'ի վերայ այսր ամի՝ առաւել ևս հաճոյական Աստու-ծոյ գտաւ պատարագն Հաբելի քան զկայե-նին. վասն զի՝ կայէն էր ամբարիշտ, իսկ Հաբէլ



9438-58
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ–Арм. ССР

ը հակառակն՝ արդար : Ընդ այս յանցաւորս սրտմտեալ Կայենի, սպան զեղբայր իւր 'ի լինել երկոցունց նց 'ի դաշտի : Յետ գործելոյ զսպանութիւն եհարց Տր ցԿայէն, ո՞ւր է Հաբէլ եղբայր քո . պատասխանի ետ Կայէն՝ մի' թէ պահապան եմ եղբօր իմոյ . բայց Տր ոչ բաւականացեալ պատուիկ, եհարց ցնա միւսանգամ, զի՞նչ գործեցեր դու, ձայն արեան եղբօր քո գոչէ առ իս յերկրէ : Նաև որովհետև Կայէն ոչ ևս կարաց զիւրն բացասել զչարագործութիւն, վս անխծակուռ եղև 'ի տնէ Աստուծոյ և դատապարտեցաւ, զի մի' ունիցի իւրն յերկրի բնակութեան հանգիստ, այլ տատանեսցի 'ի վերայ ամ երկրի : Կայէն փոխանակ զղջանալոյ վս արարեալ մեղացն՝ եմուտ 'ի մեծամեծ յուսահատութիւն և ասաց, մեղք իմ այնքան մեծ է, մինչ զի թողութիւն այնմ անմարթ է : Կայէնս այս շինեաց զառաջին քաղաք յերկրի և անուն եդ նմին Ենովք : Մի սերունդք նորա էին արք ամբարիշտք յայտնեալք 'ի սբ գիրս անուամբս՝ որդիք մարդկան : Յետ այնորիկ ծնաւ Ադամ փոխան Հաբելի զայլ որդի՝ զոր անուանեաց Սէթ, որոյ յետագայք իւրև արք բարեպաշտք կոչին 'ի սուրբ գիրս՝ որդիք այ : Ականաւորքն 'ի մէջ սեթեանն սերնդոց էին Ենովք և Մաթուսաղայ . վս զի Ենովք կենցաղավարելով ը այ կամացն՝ կենդանութեան յերկինս վերացաւ . իսկ Մաթուսաղայ առաւել



քան

քան զնա մարդիկ եկաց յաշխարհի, այսինքն ինն հարիւր վաթսուն և ինն ամ։

## Օգտակար խրատք։

ա. Ադամ ունէր զերկուս որդիս, յորոց մին էր ամբարիշտ։

Յայսմանէ տեսանի, թէ 'ի սկզբանէ անտի յաշխարհի կային մարդիկ և բարեպաշտք և ամբարիշտք։

բ. Կայէն առանց իմ̃ պատճառանաց և հար-նէ զիւր սպան զեղբայրն։

Յայսմանէ երևի, թէ չարութի՛ն 'ի մարդուան ծածկի։

գ. Ամենաբարին Աստուած խնդրէր Կայենէ, զի հարցէ պատասխան, ուր է նայէն 'ի նմանէ եղբայր։

Յայսմանէ յերևան գայ, թէ յամենագէտն Աստուծոյ ոչինչ կարէ թագուն մնալ։

## Պտուղք բարեպաշտութեան։

Այն ինչ կայէն սպան զեղբայր իւր զՀաբէլ, և ահա լուաւ ած̃ աղաղակի արեան անմեղ նահատակին։ Արդարև ած̃ է ամենուրեք, և 'ի նմանէ ոչինչ կարէ թագչել, ոչ գործք մեր և ոչ խորհուրդք, ուրեմն զմ̃ ամ̃ փախիցուք 'ի մեղաց, զի մի՛ նոքին ածցեն թափեսցեն 'ի վր̃ մեր զբարկութիւն այ̃։

Պտ. Տ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Զ:

## Յաղագս ջրհեղեղին:

Մարդիկ հանապազ հակառակ կային Հո-գւոյն Այ. Թէեւ Ած զամս հարիւր եւ քսան սպասեաց ապաշխարութե եւ ուղղութե վա-րուց նոցա, սակայն նոքա ոչ երբէք հաճեցան ը ուղղութի. այլ ուտէին, ըմպէին, ամուսա-խմբէին եւ զուարճանային. Ի նմին ժամանա-կի էր յաշխարհի այր մի արդար՝ Նոյ անուն, որում հրամայեաց Ած շինել զտապան՝ երկայ-նութի նորա երեք հարիւր կանգուն, լայնու-թիւն նորա յիսուն կանգուն, եւ բարձրութին երեսուն: Ի սոյն յայս տապան Նոյ զառա-ջինն եմոյծ զոյգս կենդանեաց, որոց ոչն կա-րէին կեալ ի ջուրս. ապա պատրաստեաց զամենատեսակ կերակրոց այնչափ քանակութի, որչափ կարաց բաւականանալ զամ մի ողջոյն. հուսկ յետոյ ի տապան անդր եմուտ Նոյ հանդերձ կնաւ իւրով, երիւք որդւովք եւ երիւք հարսամբքն: Ամենեքեան նոքա էին թուով ութն. եւ ի մուտս գործելն նոցա անդր, իսկոյն Ած ամրափակեաց զնոսա ի տա-պանին. յետոյ բացան Ամ աղբիւրք ծովուց, եւ երկնից պատառեցան սահանք, եւ զա-ւուրս քառասուն իջանէր անձրեւ, յորմէ ջու-րըն այնքան յորդացաւ, մինչ զի բարձրաբերձ



լեր

լերինք հնգետասան կանգուն բարձրութք 'ի վեր ջրածածուկ եղեն: Մնաց այս ջուր եկաց մինչ յերեսս երկրի զաւուրս հարիւր և յիսուն, յորում հեղձան ա̃մ շնչաւորք. և այն ինչ ծփայր Նոյ տապանաւ իւրով. և ահա 'ի վերջոյ հանգեաւ տապանն 'ի վերայ Արարատեանն լերանց: Աստանօր կամք եղեն Նոյի գիտել, թէ ցամաքեա՞լ է արդեօք երկիր, և վ̃սն ը̃ ժամանակս ժամանակս արձակեաց զթռչունս 'ի տապանէն: Յառաջնումն արձակեաց նուագի՝ զագռաւն և զերիս աղաւնիս. Թռուցեալ ագռաւուն՝ ոչ ևս դարձ արար անդրէն յետս, սպասելով ցամաքելոյ երկրի: Առաջին աղաւնին դարձ արար 'ի տապան անդր. և չեբեր ինչ ընդ ինքեան. միւսըն եբեր բերանով շիւղ տերևեալ ձիթենւոյ. իսկ երրորդն ոչ ևս դարձաւ բնաւ, վասն զի՝ յայնժամ ցամաքեալ էր երկիրն: Յաւարտ ա̃մի երևեցաւ ա̃ծ, և հրաման ետ Նոյի ելանել 'ի տապանէ ընդ կնոջ իւրում, որդւոց և կանանց նոցա: Նոյ յետ ելից իւրոց յերկիր, արար սեղան և մատոյց արարչին զզոհու̃ն: Այնքան հաճոյացաւ այս ա̃յ, մինչ զի օրհնեաց 'Նա զնոյ և զերիս որդիս նորա. և ոչ այսչափ միայն, այլ և ետ զաղեղն իւր յամպս 'ի նշան այնորիկ, թէ ոչ ևս յայնմհետէ ըստ բարութե̃ իւրում զայնպիսի արասցէ զհեղեղ:

# Օգտակար խրատք։

Ա. Ադ՝ մարդկան՝ կորստեան անձնատուր եղե-
յաղագս մեղաց խորոց՝ ընդ բոլոր կենդանեաց։

Զի՞նչ ցուցանէ տեսանելիս։

Լուծ. Ած է դատաւոր արդար, որ ոչ զոք թո-
ղու անպատուհաս յաղագս մեղաց։

Բ. Ած նախ քան զջրհեղեղն շնորհեաց վասա-
կենցաղ անձանց զամս հարիւր և քսան յաղագս
ապաշխարութեան։

Զի՞նչ տեսէն ճանաչեմք։

Լուծ. Ած երկայնամիտ սպասէ դարձի մերում։

Գ. Ի համաշխարհական ջրհեղեղի պահպանե-
ցաւ Նոյ հանդերձ ըմ ընտանեօք,

Զի՞նչ ծարբեծ տեսանիմք։

Լուծ. Ած է արդար վարձահատոյց, որ ոչ կորու-
սանէ զաւուրքինս ընդ չարաց։

## Պտուղք բարեպաշտութե։

Յորժամ կամք եղեն Այ զանցաւոր պա-
տուհասել զայս աշխարհ ջրհեղեղաւ, խնայեաց
զարդարն փրկեաց զնոյ ՚ի տապանին, որ ծը-
փայր յերեսս ջուրց. ՚ի վերջոյ եթէ հաճոյա-
կան իցէ նմա անհետ կործանել զաշխարհս,
յայնժամ ո՞ւր արդեօք գտցեն արդարք ին-
քեանց զանվտանգն տեղի ապաւինի, եթէ ոչ
՚ի քեզ ո՛վ Քս փրկիչ. և մեք առ քեզ դի-



մեմք

մեծք անխախուտ յուսով առ 'ի գիւտ փր-կութեան ։

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ · Է ·

### Յաղագս աշտարակաշինութեան Բաբելոնի ։

Յետ ջրհեղեղին ամ մարդիկ միօրինակ լեզուաւ խօսէին յամ աշխարհի, և 'ի վերստին բազմամարդանալ իւրեանց ձեռնարկեցին յամենամեծ շինուած, այսինքն սկսան կանգնել զքաղաք և զաշտարակ, որոյ բարձրութիւն կարիցէ հասանել յերկինս ։ Այս ամ ձեռնարկին նոցա առ պատուասիրութ 'ի շահել ինքեանց զանուն մեծ 'ի յետագայս ։ Աջ Ած տեսանել զշինուածն, այլ այսօրինակ ձեռնարկութիւն մահացուաց՝ հակառակ գտաւ նմա. և 'ի չդադարելն մարդկան 'ի շինելոյ, խառնակեաց զլեզու նց այնպէս, մինչզի մին ոչ կարէր խելամուտ լինել բանից միւսոյն ։ Վսն այսր պատճառի ոչ ևս կարացին նոքա շարունակել զշինուածն, այլ այր իւրաքանչիւր ցրուեցան յերկիր իւրեանց ։ Այս քաղաքն առ յիշատակի կոչեցաւ Բաբելոն, որ երբայեցի բարբառով խառնակութի նշանակէ ։

### Օգտակար խրատք ։

ա. Տէր Աստուած տեսանէ զամ, զոր գործեն



մար

մարդէն չար խորհէ ։

Զայս մ՚ըթէ ապացուցանել՝ բաբելոնեանն աշտարակաշինութեամբ ։

Ե. Մարդէն թշնամէն առաջի Աստուծոյ շենե-
լով շինոյակայ տանս, երբ չայս տանէն ա-
պատուածորութէ և էր ։

Վասն զի՝ բաբելոնեանն ո՛չ սակաւ տոհմ գտաւ աշտարակ՝ ամենաբարւոյն Աստուծոյ ։

Զ. Տէր Աստուած չարէ հեշտեա չարէ նոր-
ծանել չ... մարդկան շփոթմանութե ։

Վասն զի՝ յաշտարակաշինութեն ժամու պէ՛տք էր Աստուծոյ խառնակել միայն զլեզուսն, զի դադարեսցի շինութիւնն ։

## Պտուղք բարեպաշտութե ։

Մարդիկ բազմիցս զչոյակապ շինեն տունս ոչինչ պակաս քան զաշտարակն բաբելոնի. բայց որով հետեւ աշխարհս այս չէ՛ մեր հայրենիք, այլ պանդուխտ միայն, որով արդիւնաւորիմքս յուղեգնաւն մեր յերկինս. ապաքէն առ ի՞նչ պէտք են մեզ երեւելի երեւելի, շքեղաշուք և փառակործան տունք, զի որում յաւիտենականն պատրաստ կայ մեզ յերկինս բնակարան ։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ը:

## Յաղագս Աբրահամու և Սառրայի:

Ա՟ծ խօսելով երբեմն ընդ Աբրահամու խոստացաւ նմա, թէ ՚ի նա օրհնեսցին ա՟մ ազգք երկրի: Այս նշանակէ, թէ ՚ի սերընդոցն աբրահամու ծնցի փրկիչն ա՟մ մարդկան. այլ աբրահամ թէպէտև ունէր զսարրայ կին, բայց այսու ա՟մի չունէր սա զորդիս և էր ամուլ, և ոչ ևս գոյր յոյս որդեծնութե՟ յաղագս լինելութե՟ երկաքանչիւրոց նոցա՝ ծեր: Ոչ հայեցեալ յայս Աբրահամու, հաւատաց՝ թէ Ա՟ծ զիւր կատարեսցէ զխոստումն, և այս իսկ հաւատ համարեցաւ նմա ՚ի յարդարութի՟: Յաւուր միում նստեալ աբրահամու առ դրունս խորանի իւրոյ, ետես զարս երիս՝ որք գային առ նա բոլորապէս անծանօթք նմա: Սա էր Ինքն Ա՟ծ ընդ երկուց հրեշտակաց, որք ամենեքին ընտանեցեալ էին զմարդկային կերպարան. աբրահամ զերիս զարսս զայսոսիկ հրաւիրեալ առ ինքն, հրամայեաց բերել ջուր ՚ի լուացումն ոտից նոցա. ապա բազմեցոյց զնոսին ը՟ն ծառովն, ուրանօր առաջի եդ ն՟ց զոլթ, ղհաց, և զկաթն, և զկոգի: Սարրայ կին նորա թէև չէր սեղանակից ն՟ց, այլ ՚ի նախագաւթէ խորանին կարէր ականջել ա՟մի, զոր ինչ



միան

միանգամայն 'ի սեղանի անդ խօսէին: Եւ այ-
սոցիկ այսպէս եղելոց, տէր աստուած ա-
սաց ցաբրահամ, 'ի վերադարձի իմում առ
քեզ 'ի յաջորդ ամի Սառայ կին քո ունիցի
զորդի. 'ի լսելն զայս առ դրամբք սառայ ծի-
ծաղ արձակեաց, սակայն Տէր վասն այսորիկ
կշտամբեալ զնա՝ ասաց, զի՞ իցէ առ այ ան-
հնարին: Առաքինի այս կին կամէր անբասիր
առնել զինքն և ասաց, թէ չէ՛ նորա ծիծաղեալ,
այլ Տէր այնր աղագաւ պատժեաց զնա սաս-
տիկ կշտամբանօք և ասաց, ստես, դու ծի-
ծաղեցար: Յետ այնորիկ արդարև կատարե-
ցաւ խոստումն, և որդին՝ զոր սառայ ծը-
նաւ յաշխարհ՝ կոչեցաւ իսահակ: Այս ամ
պատահեցաւ 'ի լինել Աբրահամու՝ հարիւ-
րամեայ, իսկ սառային՝ իննսունամեայ 'ի ծնէ:

## Օգտակար խրատք:

ա. Ի պատմութենէ աստի երևի, թէ հոգեւորք ըստ կամս այ կարեն երևել:

Այլ նոքա ընդ Աբրահամու խօսեցան, կերին և արբին:

բ. Պա՛րտ է լինել հիւրասէր:

Աբրահամ առաջի եդ հիւրոց իւրոց զամենայն, զոր ունէր:

գ. Ամենայն ինչ, որ անհնարին երևի յաչս մարդկան՝ հնարաւոր է այ:



Սար

Սառրայ ծնաւ զորդի, թէ և իննսուն ամաց էր ՚ի ծննդենէ իւրմէ ։

## Պտուղք բարեպաշտութեան ։

՚Ի ժամանակի խոստման որդւոյն՝ ծիծաղեցաւ Սառրայ, և իրաւամբ պատժեցաւ սաստիկ սաստիւք. վասնզի՝ մոռացաւ, թէ չի՛ք ինչ անկարելի այ ։ Ունելով մեր զայս ՚ի յիշողութեան, դիցո՛ւք հանապազ զայս մեր յած և հաւատասցո՛ւք ամենակարողութեան նորա ։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ .Թ.

## Յաղագս Սոդոմայ և Գոմորայ ։

՚Ի սոդոմ քաղաքի չէր ոք արդար և ո՛չ մի բաց ՚ի մարդոյն ղովտ անուն, որ նստեալ ընդ երեկս առ դրան, ետես զերկուս հրեշտակս, որք մտանէին ընդ դրունսն. ղովտ հրաւիրեաց զնս առ ինքն գիշերել, այլ նախ քան զննջել հրեշտակաց՝ անօրէն բնակիչքն պատեցին զտունն, և խնդրէին զհրեշտակսն ։ Ղովտ որչափ յորդոր եղև նց, անօրէնքն ո՛չ լուան նմա՝ ասելով, դու պանդուխտ ես աստ և կամի՞ս հրամայել մեզ. իսկ ՚ի կամաւորին նց վերաբերել զձեռս իւրեանց ՚ի բարեպաշտն Ղովտ, իսկոյն հրեշտակքն բացին զդուռն և կորզեցին զնա ՚ի տուն անդր ։ Այնմ եղեն



անօ

անօրէնացն խորտակել զդրունս, սակայն հարան հարուածեցան այնպիսի իմն կուրութեամբ, մինչեւ տկարացան գտանել զդրունս: Ի մեկնիլ նց̃ անտի, հրեշտակքն յայտնեցին արդարոյն Ղովտայ, թէ առաքեալ են նոքա յա̃յ 'ի կործանել զքաղաքն. ապա հրամայեցին նմա անյապաղ ելանել 'ի քաղաքէն հանդերձ համայն ազգակցօք իւրովք: Ղովտ յորդորեաց զփեսայս իւր գնալ 'ի միասին ընդ նմա, այլ այս ա̃մ թուեցաւ նոցա ծաղրական իմն. փաղքաջ ը̃ առաւօտն հրեշտակք ասացին Ղովտայ գնալ ը̃ իւրեանց, եւ 'ի սակաւիկ մի յապաղելն նր̃, հրեշտակացն կալեալ զձեռանէ նր̃ հանդերձ կնաւն եւ երկոքումբք դստերօք 'ի քաղաքէ անտի բացադրեցին, եւ 'ի հանելն արտաքս զնոսա, հրամայեցին նոցա գնալ փաղփաղակի եւ ոչ եւս նայիլ յետս մինչեւ ցհասանիլն 'ի լեառն. բայց Ղովտ ոչ հաձեցաւ կալ մնալ 'ի լերինն, մեծ այսպս գոլով գտանել զապաստանարան 'ի սեգօր անուանեալ քաղաքի, որ չէր իւիք հեռի 'ի տեղւոջէ յայնմանէ: Թէպէտեւ կամք էին այ̃ կործանել նոյնպէս եւ զայն քաղաք, սակայն խնայեաց 'ի նա վս̃ Ղովտայ: Ապա ասաց ցնա հրեշտակն, փութացիր անդր որքան հնարէ վաղվաղ, զի չկարեմ ինչ առնել մինչեւ իցէ հասեալ քո անդր: Ան ինչ Ղովտ 'ի ծագելն արեւու եմուտ 'ի քաղաքն, եւ անդ տեղաց յերկնից 'ի սոդոմ եւ 'ի գոմոր հուր ծծմբախառն եւ յաւեր դարձոյց



զա̃մ

զամ̃ զկողմանսն զայնոսիկ։ Բայց կնոջն Ղովտայ անցեալ զհրամանն հրեշտակական, նայեցաւ յետս, և առժամայն փոխեցաւ յարձան աղի։

## Օգտակար խրատք։

ա. Տունք արդարոց պահպանին 'ի մէջ հրեշտակաց։

Վասն զի անօրէն սոդոմացիք այնպէս կուրութեամբ հարան, մինչզի և զդրունս գտանել ո՛չ կարէին։

բ. Աստուած ո՛չ երբէք կարօտանայ շատաջինեօ ընդ չարս։

Կամեցեալ բնաջինջ առնել զսոդոմ, արտահանեաց անտի զարդարն զՂովտ։

գ. Զոր ինչ հրամայէ կամ արգելու Աստուած, զայն պա՛րտ է պահպանել։

Կնոջն Ղովտայ հրամայեցաւ չհայիլ յետս, այլ յաղագս անհնազանդութե̃ իւրոյ դարձաւ նա յարձան աղի։

## Պտուղք բարեպաշտութե̃։

Թէ Ած̃ ո՛չ ջնջէ զարդարս ը̃ ամբարշտաց, զայս ապացուցանէ Ղովտ երևելին բարեպաշտութեամբ։ Ած̃ գիտէ զհնարս փրկութե̃ նոցա նախ քան զիջուցանելն զվրէժխնդրութի̃ իւր։ Կեցցուք անարատութ̃բ և մնասցուք անվնաս 'ի կորնչել ամբարշտաց։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ժ.

## Յաղագս պատարագելոյն Իսահակայ.

Աբրահամու և Սառրայի էր մի միայն որդի Իսահակ: Ա՟յ խոստացաւ թէ 'ի զաւակի ն՟ր օրհնեսցին ա՟մ ազգք երկրի. այլ այրս այս բարեպաշտ 'ի վեր քան զակնկալութի՟ն ընկալաւ յա՟յ զհրաման զենուլ զայս որդի խոստման և մատուցանել պատարագ: Զայս արար Ա՟յ առ 'ի փորձել միայն զհնազանդութի՟ Աբրահամու: Աբրահամ կատարեաց զա՟մն, զոր հրամայեաց ն՟մ Ա՟յ, և գնաց ընդ որդւոյն իւրոյ 'ի լեառն ամուրհացւոց: Հայրն էառ զհուր և զսուր, իսկ որդին պարտաւորեցաւ շալակաւ բառնալ զփայտ յաղագս զոհագործութե՟: Ի ճանապարհայն եհարց որդին ցհայրն, ուր է ոչխարն պատարագելի. Հայրն ետ նմա պատասխանի, որդեակ՛ ինքն ա՟ծ առաքեսցէ զոչխար ինքեան ողջակիզելի. և 'ի գալ հասանիլ նոցա 'ի սահմանեալն տեղի, իսկոյն կազմեաց Աբրահամ զսեղան, յորոյ վ՟ր եդ ըզփայտն. ապա կապեալ զորդին իւր՝ եդ զնա 'ի վ՟ր փայտին: Այլ 'ի բառնալ ն՟ր զսուրն 'ի ձեռս իւր և կամիլ զենուլ զնա, ահա հրեշտակ տ՟ն յերկնից գոչեաց առ նա, Աբրահամ, Աբրահամ. նա ետ պատասխանի, ահաւասիկ եմ տ՟ր. յայնժամ ասաց նմա հր-



րեշ

րեշտակն, մինչ մխեր զձեռս քո ՚ի պատանեակդ՝ զի արդէն ցուցեր դու, թէ երկնչիս յԱյ։ Հայեցեալ ապա Աբրահամու յետս, ետես զխոյն ՚ի վերայ ծառոյն կախեալ զեղջերացն, զոր առեալ պատարագ մատոյց փոխանակ որդւոյ իւրոյ։ Այս հնազանդութիւն յոյժ հաճոյ եղև, և Աբրահամ ընկալաւ զկրկին խոստումն, թէ ՚ի զաւակի նորա օրհնեսցին ամենայն ազգք երկրի։

## Օգտակար խրատք։

ա. Աստուած զԱբրահամու փորձեաց զհնազանդութիւն։ Աստէն տեսանի, թէ Այ երբեմն երբեմն զմարդարս իւր ենթարկէ փորձանաց.

բ. Տր Աստուած առաքեաց զհրեշտակն առ ՚ի յետս պահել զԱբրահամ յարենահեղութենէ անտի. Յայսմանէ երևի, թէ Այ զընտրեալս իւր փըրկէ ՚ի փորձութեանց.

գ. Տր Այ բիւրանգամ հատուցանեաց շնորհս իւր՝ Աբրահամու.

Այս ուրեմն ամ փորձութիւնք են հաւատացելոց ՚ի բարին.

## Պտուղք բարեպաշտութեան.

Նա, որ խոստացաւ զորդի ծերունւոյն Սառրայի՝ հրամայէ զենուլ զնա և պատարագ

 մա

մատուցանել ։ Այս ամ հանապազ կարէր թուել աբրահամու, այլ չուժեաց սասանե֊ցուցանել զաներկբայականն զհաւատս նր։ Եթէ կամք իցեն ոք զի՛ և իցէ ՚ի մէնջ այս օրինակ փորձել, յայնժամ հաւատք մեր հազիւ ուրեմն հաւասարակշիռք կարեն գտանիլ Աբրահամեան հաւատոյ ։

## ԳՐ. ՏՍՈՒԹԻՒՆ. ԺԱ.

### Յաղագս հաւատանելոյն Աբրահամու ։

Հասեալ Աբրահամու ՚ի ծերութիւն, ցան֊կայր ամուսնութեն որդւոյ իւրոյ . սակայն ոչ կամէր ընտրել նմա զդուստր հեթանոսի յերկ֊րէն քանանացւոց, այլ ցանկալով ցանկայր ունիլ զհարսն յիւրմէ ազգատոհմէ, և վասն առաքեաց զերիցագոյն զծառայ իւր եղիա֊զար անուն յիւր հայրենիս ։ Համազգայինք աբրահամու բնակէին ՚ի նաքովր քաղաքի, առ դրունս որոյ գայր ջրհոր, ուստի արբու֊ցանէին զանասունս ։ Յայս աղբիւր ընդերե֊կոյս գային օրիորդք ՚ի քաղաքէն զջրոյ . եղի֊ազար կանգուն կացեալ առ աղբերն, խնդրէր յայ զխոստահակայն ցուցանել իւրեան զհարս֊նացուն . և ահա՛ եւ ՚ի քաղաքէն ամենագե֊ղեցիկ ոմն օրիորդ ռեբեկայ անուն, որոյ հայրն էր բաթուէլ ազգական Աբրահամու .

Ի լցուցանել Ռեբեկայ զսափոր իւր, աղաչեաց
զնա Եղիազար՝ զկայ առնուլ, և տալ նմա
ըմպել զջուր 'ի սափորոյն. Ռեբեկա նոյն֊
ժամայն արար զայս, ևս և ուղտուց նորա ետ
ըմպել. յայսմանէ իմաստասիրեաց նա, թէ
օրհնեաց Տր զճանապարհորդութի իւր: Յետ
այսորիկ ընծայեաց նմա Եղիազար զգինտս և
զերկուս ապարանջանս ոսկեղէնս, և եհարց
ցնա, թէ գուցէ տեղի գիշերելոյ իւքեան 'ի
տան հօր նորա: Ռեբեկա աճապարեալ 'ի
տուն, եցոյց ծնողաց իւրոց զընծայսն ընկա֊
լեալ յօտարականէն. իսկ Եղիազար գոհացաւ
զԱյ յաղագս յուցանելոյն յուղեգնացութե անդ
զիւրն ողորմութի: Յետ այր ամի Ռեբեկայն
եղբայր որշուակի դիմեաց 'ի քաղաքէ անտի
յաղբիւրն և ընկալաւ զնա այսու բանիւք,
մուտ սրա օրհնեալդ Տյ, զի կաս աստ.
և մինչ ծառայն եմուտ 'ի տունն, առժամայն
յայտնեաց զնպատակ գալստեան իւրոյ, իսկ
պատասխանի ծնողացն Ռեբեկայ կայանայր յայսմ,
թէ որովհետև գործս այս տնօրինեալ է
յԱյ, մեք հակառակիլ ինչ ոչ կարեմ ամենևին.
Ապա եհարց հայրն ցդուստր իւր, թէ հա֊
ճի՞ նա ուղեկցիլ առն այսմիկ. պատասխանի
ետ նա, ցանկամ. և ապա յուղի անկան նոքա.
Եղբարք և քորք յուղի արկին զնա հետև֊
եալս օրհնաբանութե, ցանկամք ո՞վ քոյր մեր
զի աճեսցի սերունդ քո 'ի հազարս հազարաց:

## Օգտակար խրատք ։

ա. Ուսողք պարտական են յիշել զօրէնս իւ-րեանց ՚ի վարժապետութեան ։

Մեք տեսանեմք, զի Սենեկայ թէպէտ և էր դաստիար անուանի քաղաքացւոյ ՚ի քաղաքի Հռոմ, այլ արած էր զխաշինս ։

բ. Որդւոց չէ՛ պարտ մոռանալ զբանս գիտուն ծնողաց իւրեանց ։

Նաքովր հոգ կալաւ աբրահամ որդւոյ իւրոյ, և ոչ բաթուէլ զլաւանէն իւրմէ ։

գ. Ո՛չէ պէտս ծնողաց բռնադատել զորդիս իւ-րեանց հասանել ցամուսնութի ։

Բաթուէլ յառաջ քան զնա հարց ցռեբե-կա, թէ կամի՞ նա երթեալ գնալ ընդ եղիազարու ։

## Պտուղք բարեպաշտութե ։

Եղիազար առ ՚ի կատարել ջերմեռան-դութբ զհրամանս տն իւրոյ, վերընծայեաց նախ զաղօթս իւր յերկինս ։ Նա գոհացաւ զնյ և յաղօթս յաջողակութբ կատարելոյն գործոյ իւրոյ ։ Եւ մեք սկսցուք զնմ զգործողութս մեր աղօթիւք, և վերջաւորեսցուք փառաբա-նութբ անուան տն ։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԺԸ:

## Յաղագս Իսահակայ, որ օրհնեաց զորդիս իւր:

Իսահակ ունէր զերկուս որդիս երկուորեակս, յորոց անդրանկածինն կոչեցաւ Եսաւ, և էր բոլորովին ծածկեալ շառագոյն բրդով. իսկ միւսն լերկ, և կոչեցաւ Յակոբ: Եսաւ էր քաջարուեստ որսօն և հողագործ, իսկ Յակոբ այր բարեպաշտ առանձին կայր յարաժամ: Եսաւ էր հօրն որդի սիրելի, և ըստ հակառակին մօրն սիրելի էր Յակոբ: Յորժամ ծերացաւ Իսահակ և աչք նորա այնքան բթացան, մինչև տեսանէր և ոչինչ, կամեցաւ օրհնել զորդիսն իւր, և յօժար էր տալ զանդրանկութին յօրհնութե անդ ոչ առաքինոյն Յակոբայ, այլ ամբարիշտն Եսաւայ. 'ի սոյն յայսմ յօժարականութե ասաց նա ցԵսաւ, ե՛լ 'ի դաշտն, և որսա ինձ զինչ և իցէ վայրենի, և պատրաստեալ ինձ անտի յայնմանէ զախորժելին ինև կերակուր, բե՛ր ինձ, զի անձն իմ օրհնեսցէ զքեզ յառաջքան զմեռանիլս իմ: Զայս լուեալ Ռեբեկայ, նոյնժամայն սկսաւ մտայոյզ լինել, թէ զինչ արասցէ, զի հայրն օրհնեսցէ զկրտսեր որդին իւր. հրամայեաց ապա յակոբու բերել 'ի խաշանէ զերկուս ուլս. զի ինքն պատրաստեսցէ 'ի նոցանէ զուտեստ ըստ Իսահակայն ախոր-



ժակի

ժակի, զոր՝ յակոբ ծպտեալ 'ի կերպարանս
եսաւայ մատուցեր հօր իւրում։ Թէ և յակոբ
ասաց ցմայր իւր, թէ եղբայրն իմ եսաւ
մազոտ է, իսկ ես լերկ, վա՛յ և երկնչիմ, զի
մի՛ գուցէ ընկալայց 'ի հօրէ իմմէ զանէծս
փոխանակ օրհնութ՟ե. սակայն մայրն պատաս-
խանի ետ նմին, թէ ես կրեցից զանէծսն,
միայն դու լո՛ւր ձայնի իմում. 'ի պատրաս-
տիլ կերակրոյն զգեցոյց յակոբայ զպատմու-
ճան եղբօր ն՟ր եսաւայ, և ապա պատեաց
զբազուկս և զպարանոց ն՟ր ուլենեօք, յորոյ
մտանելն առ հայրն, եհարց ծերունին, ո՛ր-
դեակ իմ ո՞վ ես դու. յակոբ պատասխա-
նեաց, ես եսաւ եմ անդրանիկն քո, արի՛ և
կե՛ր 'ի մսոյ որսոյ. և դարձեալ եհարց Իսա-
հակ, ո՛րդեակ իմ՝ դու որպիսի օրինակաւ
որսացեր այդպէս վաղվաղակի. պատասխանի
ետ յակոբ. տ՟ր իմ և Ա՟Ծ օրհնեաց զիս ։
Իսահակ ծանեաւ, թէ յայսմ խաբէութ՟ի գոյ,
և մ՟ն այնորիկ պ՟րտ էր յակոբայ տալ նմա
զձեռս իւր մ՟ն հաւատալոյ. գտեալ իսա-
հակայ ծերոյն զայնորիկ թաւամազ, որպիսի
էին ձեռքն եսաւայ՝ ասաց, լսեմ զձայն
Յակոբայ, այլ շօշափեմ զձեռսն եսաւայ.
եհարց միւսանգամ, դո՞ւ իցես արդեօք որ-
դին իմ եսաւ. արդարև այդպ՟ս է, պատաս-
խանեաց յակոբ. ապա եկեր իսահակ 'ի կե-
րակրոյն և արբ 'ի գինւոյն մատուցելոյ 'ի
յակոբայ ։ Յետ ուտելոյն ասաց ցյակոբ,



մատի՛ր

մատի՛ր առ իս որդեակ իմ՝ և զիս համբուրեա՛.
'ի կատարելն յակոբայ զայս, հոտոտեաց հայրն
զհոտ հանդերձից նորա, և յայնժամ իս-
կապէս հաւատաց, թէ նա էր եսաւն. և
ետ նմա զօրհնութիւն, բացախօսելով և
զայս ինչ, լե՛ր տէր 'ի վերայ եղբարց
քոց, և որդիք մօր քո հնազանդեսցին
քեզ. անիծեա՛լ, որ անիծանէ զքեզ. և օրհ-
նեալ, որ զքեզդ օրհնեսցէ: Այն ինչ ել 'ի
նմանէ յակոբ, ահա եկն եսաւ յորսոյն, և
մատոյց հօրն զկերակուր. իսկոյն եհարց իսա-
հակ, ո՞վ ես դու. եսաւ ետ պատասխանի,
անդրանիկն քո եսաւ եմ. հայրն յայսմա-
նէ գրաւեցաւ 'ի մեծագոյն զարմանս՝ ասե-
լով, եղբայր քո եկն առ իս նենգութբ, և նախ
քան զքեզ կորզեա՛ց յինէն զօրհնութիւն, առ-
որում և մնասցէ այն: Եսաւ յոյժ տրտմե-
ցաւ ընդ այն, և սկսաւ դառնապէս լալ և ա-
սաց. մի՞ թէ դու մի՛ ծնող իմ, զմի օրհնութիւն
և եթ ունէիր 'ի քեզ, օրհնեա՛ ուրեմն և զիս.
յետ այսորիկ շահեցաւ զօրհնութիւն և եսաւ.
այլ զայն, որ ինչ միանգամ աւանդեցաւ Յա-
կոբայ 'ի ձեռն օրհնութեան, դարձուցանել անդ-
րէն յետոյ անհնարին էր. սակայն այսու ածի
եսաւեայ չեղեն ինչ զրկանք, վասն զի նա
զանդրանկութեան վաճառեաց զիրաւունս եղբօր
իւրում յակոբայ՝ առեալ փոխանակ նորա
զոսպնաթան. և ինքն իսկ Ե՟Յ նախ քան զայս
ամ ասաց մօրն, թէ անդրանիկն որդի ծառա-
յեսցէ

յեսցէ կրտսերոյն ։ Յայնմ հետէ Եսաւ ատեաց զեղբայր իւր և ասաց ՚ի սրտի իւրում, թէ եկեսցէ ժամանակ, զի և հայրս լացցէ, որովհետև ես սպանից զեղբայրն իմ զՅակոբ ։

## Օգտակար խրատք ։

Ա. Ողջախոհին օրհնութիւն ունի շնորհաց ԱԾ ։

Իսահակ ասաց, ես օրհնեցի զյակոբ, և վ̃կ նա եղիցի օրհնեալ ։

Բ. Ստախօսութիւն ո՛չ երբէք մնայ անպատիժ ։

Յակոբ էր առաքինի, վ̃յ և ընկալաւ զօրհնութիւն՝ թէ և տհաճ էր կամաց հօր իւրոյ ։

Գ. Զոր սահմանեաց ԱԾ, այնմ անդրդուելի կատարել պա՛րտ է ։

Ասաց ԱԾ, թէ երէցն ծառայեսցէ կրտսերոյն, և այս կատարեցաւ ։

## Պտուղք բարեպաշտութեան ։

Այն, զոր տնօրինեաց ԱԾ, մնասցէ յաւիտեան անեղծ անխեղծ · զայս տեսանեմք ՚ի Յակոբ, զոր երանելի արար հայրականն օրհնութի, և վ̃սկ ոչ ոք կարաց փոտաբաղդել զնա ։ Այն ամ մնասցէ անփոփոխ, զոր սահմանեաց ԱԾ կառավարն համայնից ։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԺԳ.

## Յաղագս Սանդղոյն, զոր ետես Յակոբ 'ի տեսլեան։

Յակոբ կասկածէր 'ի տան հօր իւրոյ, վասն զի՝ եղբայր իւր Եսաւ կամէր սպանանել զնա. և իբրև գիտաց զայս Ռեբեկա մայր նր, խորհուրդ ետ Յակոբայ հեռանալ առ եղբայր իւր Լաբան, և առնուլ իւրեան կին զմի 'ի դստերաց նր. հայրն ևս հաճ և հաւան այնմ գտեալ՝ յուղի էարկ զնա օրհնութբ: Յաւուր միում եմուտ արեգակն վաղ քան զհասանել նորա յիջևանն. և վս այնորիկ պարաւանդեցաւ նա գիշերել 'ի բացօթեայ դաշտի, և զքարինս 'ի գործ դնել 'ի տեղի բարձից: Յայնմ իսկ գիշերի ետես Յակոբ յերազի զսանդուխս կանգնեալ յերկրի և հասեալ յերկինս բարձրութբ իւրով՝ ընդ որ ել և էջս առնէին հրեշտակք տեառն. Տէր Ած կացեալ 'ի վեր քան զայն ասաց նմա, զերկիրն, յորում դուդ ընկողմանեալ կաս, տաց քեզ և զաւակի քում. 'ի քեզ և 'ի քում զաւակի օրհնեսցին ամ ազգք երկրի: Յակոբ քնաթափ լեալ՝ զարհուրագին աղաղակեաց. որքան ահարկու է տեղիս այս, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ տուն Աստուծոյ և դուռն երկնից. և ընդ առաւօտն յարուցել արձանացոյց զքարն 'ի գործ ածեալ փոխա-



նակ

բարձր և զայն տեղի կոչեաց Բեթէլ. և 'ի նմին իսկ ժամանակի ուխտադիր եղև, զի ե- թէ Տ՛ր յաջողեսցէ վերադարձ տացէ նմա առ ծնօղս իւր, կանգնեսցէ անդէն տաճար Տ՛ն և ծախեսցէ 'ի վ՛ր նորա զտասանորդս յամ կայից իւրոց:

## Օգտակար խրատք:

ա. Տէր մա՛րթէ տեսանել, թէ չէ՞նչ պա՛րտ է տալ ճանապարհորդ որդւոյ:

Նոքա կարօտին օրհնութեան, որպէս արար իսահակ որդւոյ իւրում յակոբայ:

բ. Հա՛րկ է 'ի վ՛ր կայ իւրոյ տալ յաւելեալս:

Զայս արար յակոբ, որ լա՛ւ համարեցաւ ծնողաց թափ լինել 'ի տանէ հօր իւրոյ, քան թէ միշտ կալ 'ի թշնամանս ընդ եղբօրն:

գ. Աստուած բաշխող եղեւ հաստատեցելոց իւ- րոց 'ի մտանելն:

Յակոբ 'ի լինել իւրում 'ի բացօթեայ դաշտին միայնակ՝ ետես զայնպիսի ինչ, զոր հազիւ ուրեմն հնա՛ր է տեսանել 'ի բազմամարդ հիւրանոցս:

## Պտուղք բարեպաշտութե՛:

Որ ինչ ետես 'ի տեսլեան նահա- պետն Յակոբ, խնկապէս ցուցանէ մեզ տ՛ր



դիրն

գիրն։ Եւ մեք արժանաւորեցաք տեսանելոյ զսանդուխտն, որ երրակի աստիճանօք առաջ-նորդէ մեզ յերկինս։ Առաջինն աստիճան է սէր հօրն· երկրորդն՝ չարչարանք քո ո՛վ Քս փրկիչ· երրորդն՝ է հաւատն, զոր դու հոգեւդ բարուն բնակեցուցանես 'ի սիրտս մեր։

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԴ.

### Յաղագս կրկնակի ամուսնութեան Յակոբայ։

Գնաց յակոբ առ Լաբան քեռի իւր, որ բնակէրն 'ի Խառան· սոյն այս Լաբան ու-նէր զերկուս դստերս, յորոց երէցն կոչիւր Լիա, և էր գիճական· իսկ զկրտսերն կոչէին Ռաքէլ, որ էր չքնաղատեսիլ և գեղատեսիլ։ յակոբ գոլով ոչինչ հեռի 'ի Խառանէ, ետես զջրհոր մի ուստի հովիւք այնր կողմանն սովորաբար արբուցանէին խաշանց իւրեանց· յակոբ ե-հարց ցհովիւսն, թէ ճանաչե՞ն նոքա 'ի Խա-ռան զայրն Լաբան անուն, որք պատասխանե-ցին, թէ ճանաչեն զնա· իսկ 'ի միւսանգամ հարցանել նորա, թէ ո՞ղջ է նա, և ահա եկն Ռաքէլ Լաբանիդուխտ 'ի ջրհոր անդր ընդ խաշանց հօր իւրոյ, որում նոյն հետայն ծանօթացաւ յակոբ, և 'ի բաց թաւալեցու-ցեալ զվէմն կափարիչ ջրհորոյն, արբոյց խա-շանց նորա և համբուրեաց զնա։ Ռաքէլ ճա-



պաղ

ղող ձեպով փութացաւ 'ի քաղաքն, և պատ-
մեաց հօրն, թէ յակոբ քեռորդի նորա գը-
տանի արտաքոյ քաղաքին առ ջրհորովն: Լուել
լաբանայ զանուն յակոբայ փութացաւ ընդ-
առաջել նմա, և յուրախութեն գրկեալ զնա,
շրթնահամբոյր ետ նմա և էած 'ի տուն իւր,
անդանօր ո՛չ ի՛նչ էր յակոբայ այնքան հա-
ճոյական և սիրելի, որքան չքնաղագեղն ռա-
քէլ. և մինչ լաբան հայր նորա առաջի արար
յակոբայ, թէ յօժարեսցի նա ծառայել ին-
քեան յայտնեալն վարձու. յակոբ ետ պա-
տասխանի, ես ծառայեցից քեզ զամս եօթն
վ̄ս կրտսեր դստերդ ռաքէլի. լաբան դուն-
մի 'ի խորհուրդ մտեալ, ետ այս պատասխանի
առաւել բարուո՛ք է ինձ քեզ տալ զնա, քան
օտարի. վ̄յ և ծառայեաց յակոբ զամս եօթն
վ̄ս ռաքէլի. ժամանակս այս ողջոյն թուե-
ցաւ նմա իբրև աւուրք ինչ, զի այնպէս կա-
թոգին սիրէր զնա: Եւ 'ի վ̄ր այսր ամի յա-
ւուր հարսանեացն խաբեաց զնա աներն՝ առա-
ջելով առ նա զմեծ դուստրն իւր զլիա.
յակոբ յառաջագոյն ո՛չ նշմարեաց զայս, բայց
եթէ յառաւօտուն, և ասաց ցլաբան, ո՛չ վ̄ս
կրտսեր դստերդ ռաքէլի ծառայեցի քեզ,
ը̄ էր խաբեցեր զիս. նա մեղմով իմն խնդ-
րեալ զներումն, թէ չէ՛ն օրէնք յաշխար-
հի իւրեանց զկրտսերն տալ առն զդուստրն
նախ քան զերէցն, առաջի արար նմա, թէ ըն-
կալցի և զչքնաղագեղն ռաքէլ, եթէ ծա-



ռայ

ուսուցէ նմա եւս զամս եօթն, որում համա-
ձայն գտաւ Յակոբ, և այսպիսի օրինակաւ էառ
ինքեան կնութ̅ե զերկուս դստերսն: Յակոբ
առաւել սիրէր զգեղեցիկն Ռաքէլ, քան
զգինձակն Լիա. այլ Ա̅ծ տեսեալ զԼիա ներգե-
եալ, պտղաբերս արար զնա, իսկ զՌաքէլ
ը̅ հակառակն՝ ամուլ. յաղագս որոյ երկոքին
դստերքս այսոքիկ ատէին զմիմեանս. նմին իրի
և Յակոբ ենթարկեցաւ բազմադիմի նեղութ̅եց
և վշտաց:

## Օգտակար խրատք:

ա. Պճնելոյ մարմնական գեղեցկութ̅ե չէ պա՛րտ ե-
ծանակել այսուհետև յարաժամութ̅ե, վասնզի՝ 'ի նո-
րին կարէ գալ այլ պակասութ̅ի ինչ.

Այս յայտնի տեսանի 'ի Ռաքէլ, որ թէպէտ
գեղեցիկ մարմնով, այլ անհամեստ էր հոգւով:

բ. Ոչ է պա՛րտ արհամարհել զարս զանգեղեցիկս,
զի ոչ Ա̅ծ գտուցէ այլ ինձ առանձնաշնորհութ̅ե
պատուեալ զնս:

Այս տեսանի 'ի Լիա, որ թէև տեսլեամբ
տգեղ էր, այլ որդեծնութեամբն՝ բարեբաղդ:

գ. Որդիք են պարգև Ա̅յ, վ̅յ և որդեծնութիւն է
շնորհ ամենաբարեբաշխելոյն:

Զայս մա՛րթ է տեսանել յերկոսին դստերսն.
Ա̅ծ արար զԼիա պտղաբեր, իսկ զՌաքէլ առ.
ժամանակ մի՝ ամուլ:


Պտուղք

## Պտուղք բարեպաշտութե՟ն.

Յակոբ խնդրէր ինքեան ամուսին գեղերես. ռաքէլ հատոյց փափագանաց նր՟. այլ զայս ամուսնութի՟ չէ մարթ երջանիկ կոչել, որում վկայեն և սբ՟ տառք: Բանն Ա՟ծային տայ մեզ գիտել սովոր, թէ մեք ՚ի հարսին պարտիմք խնդրել առաւել զառաքինութի՟ս քան զգեղեցկութի՟:

## ԳՕՏԵՄԱՐՏՈՒԹԻՒՆ. ԺԷ:

### Յաղագս գօտեմարտութե՟ Յակոբայ ընդ Աստուծոյ:

Յակոբ վերադարձեալ ՚ի տուն հօր իւրոյ, էած ը՟ իւր և զկանայս իւր, զորդիս և զամ՟ ինչ Ա՟ծապարգեւ. նա ունէր զերկոտասան որդիս, յորոց զվեցն այսինքն զռուբէն, զշմաւոն, զղեւի, զյուդայ, զիսաքար և զզաբուղոն ծնաւ ՚ի լիայ, իսկ զերկուս կրտսերս ծնաւ նմա ռաքէլ, անուանք որոց էին յովսէփ և բենիամին. և զմնացեալ չորսն զդան, զնեփթաղիմ, զգադ և զասեր ծնաւ յակոբ յերկուց աղախնեայց անտի իւրոց: ՚Ի ճանապարհին պատահեցան նմա զառաջինն հրեշտակք ա՟ն, զորս տեսեալ ասաց նա, Ա՟յ է բանակս այս: Ապա ստուգեալ, թէ եղբայր իւր եսաւ գայ ը՟առաջ նորա չորս հարիւր

արամբք, զոչէր հարեալ Յակոբ, դիմեաց յա-
ղօթս, և ասէր ցա՟ծ այսպէս. ո՛վ տ՟ր չեմ ես
արժանի բարերարութեան և շնորհաց, զորս ցու-
ցեր դու ինձ ծառայի քում. և ապա առա-
քեաց եղբօր իւրում ընծայս յոչխարաց,
յուղտուց, և յէշից, բաժանեալ զայս ա՟մ 'ի
հօտս 'ի հօտս. իսկ զմնացուածս անասնոց իւ-
րոյ բաժանեաց նոյնպէս, խորհելով, զի թէ
եսաւ հարցէ զմի հօտն, միւսն մնասցէ
ամբողջ: Ի յաջորդ գիշերի 'ի լինել յակոբայ
միայնոյն, մարտեաւ այր մի ը՟ նմա այնպիսի զօ-
րութ՟, մինչ զի յակոբ վնասեալ անսի զամօլա-
ջին իւր կաղայր զա՟մ կեանս: Ննամարտութիս
այս յերկարեցաւ մինչև ցառաւօտ. երբ կամք
եղեն առն այնմիկ խոյս տալ անտի, իսկոյն յակոբ
բուռն հարեալ զնմանէ, ասաց, ցայն վայր ո՛չ
արձակեցից զքեզ, մինչև օրհնեսցես զիս. և
այրն ասաց ցնա, դու զօրաւոր եղեր ը՟ ա՟յ. և
ը՟ մարդկան զօրաւոր լիջիր: Ու թէպէտ այրս
այս չասաց ինչ զինքենէ, այլ յակոբ իմա-
ստասիրեաց, թէ էր այն կերպարան Ա՟ծական,
և վ՟ն այնորիկ ահեղաձայնս աղաղակեաց. թէ-
և տեսի զա՟ծ դէմ յանդիման, սակայն կեն-
դանի է անձն իմ. 'ի սոյն յայսմ պահու ա-
սաց Ա՟ծ յակոբայ, թէ յայսմ հետէ ո՛չ ևս
յակոբ կոչեսցի անուն ն՟ր, այլ Ի՟էլ: Ու
իբրև 'ի վեր ամբարձ յակոբ զաչս իւր ետես
զեսաւ եղբայր իւր, որ գայր առ նա, և
'ի մերձենալն ն՟ր, յակոբ հանդերձ ա՟մ կա-


նամբք

նամբք խորովք և որդւովք երկիր եպագ նմա եօթնանգամ մինչև ցերկիր 'ի խոնարհ, և Եսաւ յառաջ մատուցեալ անկաւ զպարանոցաւ նորա, գիրկս էարկ նմա և երկոքեան լացին. Եսաւ զընծայսն յեղբօրէն ոչ կամէր ընդունել, այլ առ աղաչանացն ընկալաւ: Եսաւ անդրէն դարձաւ ընդ այն ճանապարհ, ընդ որ եկեալն էր, իսկ յակոբ գնաց այլուր ճանապարհ:

## Օգտակար խրատք:

ա. 'Ի ժամ նեղութեանց պա՛րտ է յօգնութիւն կոչել զԱստուած:

Այս արար յակոբ յերկնչելն յեսաւ եղբօրէ իւրմէ:

բ. Ո՛ հաւատացորդքն ոչ երբէք կարեմք հեղձեալ ջաղցրաշարժել երայց էլեւ հաւատացեալեամբ ընդ կարեաց:

Որպէս վարեցաւ յակոբ, որ առաքեաց եղբօր իւրում զընծայս առ 'ի մեղմել զբարկութիւն նորա:

գ. Չէ՛ք ինչ հզօրագոյն քան զյոյսն յԱստուած:

Յայն յօգնութիւն Աստուծոյ յաղթանակ արար զյակոբ:

## Պտուղք բարեպաշտութեան:

Ընդ որում մարտեաւ յակոբ. որ պիսի ոք էր այրս այս. հաւաստեաւ էր ինքն



Աստ

Տ̃. և ո՛ հաւատասցէ, թէ Տ̃ յաղթեցաւ, իսկ յակոբ յաղթական հանդիսացեալ՝ ընկալաւ զօրհնութի̃ : Տ̃ իմ, բո՛ւռն հարից զքէն հաւատով և յուսով, և ցայն վայր ո՛չ ձեռնբարձ եղէց ՚ի քէն, մինչև արժանաւորեցայց օրհնութե̃դ :

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԳ.

### Յովսեփայ Յակոբեայ վաճառեցելոյն յեղբարց իւրոց

Յակոբ ունէր զերկոտասան որդիս, յորոց միջի առաւել քան զամենեսին սիրէր զՅովսէփ. վ̃ս զի ՚ի զառամելութ̃ե անդ իրում ուրախացեալն էր ծննդեամբ նորա յամենագեղեցիկն ռաքելայ, վ̃ս և արար նմա պատմուճան ծաղկեայ ՚ի նշան գերազանցութ̃ե. Միւս եղբարքն այնքան ատէին զնա յայն պատճառս, մինչ զի ընդ նմա և քաղցրութ̃ե խօսիլ իսկ ո՛չ կամէին. գլխաւոր պատճառ այնմ՝ էր այն, զի Յովսէփ ածէր հօրն զվատակենցաղութ̃ե գնացից նոցա: Յետ այսորիկ ետես Յովսէփ զերկուս երազս, որք անխորժ թուեցան եղբարցն. զերազն առաջին պատմեաց նոցա այսու եղանակաւ, տեսի ասէ, ո̃պ թէ մեք ՚ի միում դաշտավայրի կապէաք զխրձունս, և իմ խուրձն կանգուն կայր ուղղակի, իսկ ձերն երկրպագանէին իմոյս, որում ասացին եղբարքն. դու արդեօք թագաւորել



և

և իշխել ունէիցիս ՚ի վ̄ր մեր. և յայնմ հետէ
չարանախանձեցին ունել ը̄ նմա զբազմապատիկ
ատելութիւն: Երկրորդ անգամ յերազի ցու-
ցաւ յովսեփայ, զի արեգակն, լուսին և մե-
տասան աստեղք երկրպագանէին ինքեան.
լուեալ հօրն զայսպիսի բանս զչարեցաւ և
ասաց, զի՞նչ նշանակէ տեսեալ երազ քո, մի՞
թէ ես, մայր քո և եղբարք գալով գայ-
ցեմք երկրպագանել առաջի քո. իսկ նա զայս
երազ պահէր ՚ի սրտի իւրում: Յետ այսր
ամի. չոքան եղբարք յովսեփու արածել զխա-
շինս հօր իւրեանց ՚ի սիւքէմ, և ՚ի յամել-
լոյ զնոցանէ, ասաց յակոբ ցյովսէփ, երթ և
տե՛ս, թէ ողջ իցեն եղբարք քո և խաշն և
ծանո՛ ինձ. եղբարցն տեսեալ զյովսէփ ՚ի
հեռաստանէ, ասացին, ահաւասիկ գայ երա-
զատեսն, եկա՛յք սպանցուք զնա: Ռուբէն
անդրանիկն եղբարցն անհամաձայն գտեալ այսմ
ասաց, մի՛ արասցէ ա̄ծ, ո՛չ պէ հեղցուք
մեք զարիւն եղբօր մերոյ. լա՛ւ ևս է արկա-
նել զնա ՚ի գուբ անդր, որ կայ յանապա-
տիս յայսմիկ. և նա զայս ասաց բարւոք իմն
դիտաւորութ̄բ, քաջայոյս լինելով թագուն հա-
նել զնա ՚ի գբոյ անտի և ածել առ հայրն.
եղբարքն համաձայնեցան այնմ և մերկեալ
՚ի յովսեփայ զծաղկեայն պատմուճան, ար-
կին զնա ՚ի գուբն անջրդի, և ապա նստան
ուտել, ո՛չ թէ արարին գործ մեծ և երե-


ւելի

ւելի։ Յայնմ ժամանակի անցանէին ընդ-այն փախստականք հանդերձ ուղտուք, և ասաց Յուդա ցեղբարս իւր, ասէ՛, վաճառես-ցուք զեղբայր մեր, որում լուեալ եղբարցն հանեին զՅովսէփ ՚ի գբոյն, և վաճառեցին քսան դահեկանի։ Անդրանիկ եղբայրն Ռու-բէն անգէտ էր այնմ, և գաղտագողի գնաց ՚ի գուբն ազատել անտի զՅովսէփ, և ՚ի չգը-տանելն զնա անդ, պատառեաց զհանդերձս իւր և ասաց, չէ՛ ասա եղբայրն իմ, զի՞նչ ա-րարից և յո՞ երթայց։ Եղբարքն առին ապա զպատմուճանն Յովսէփայ և զենեալ զուլ մի, թաթաւեցին զայն արեամբ, և առաքեցին առ հայրն ասելով, թէ գտաք զայս պատմուճան, չիցէ՛ որդւոյ քո. անմխիթարն հայր իսկոյն ծա-նուցեալ զայն՝ աղաղակեաց, այսէ պատմու-ճան որդւոյ իմոյ. չար գազանք պատառեցին զՅովսէփ. յորում ժամու թէպէտ համայն ուստերք և դստերք յառաջ մատեան միխ-թարել զնա, սակայն ո՛չ կարէր նա միխթա-րիլ և ասէր, արտասուօք վճարին աւուրք իմ թշուառ։ Եւ փախստականքն ածին զՅովսէփ յեգիպտոս և վաճառեցին պետափրեայ գլխա-ւոր դահճապետի արքային։

## Օգտակար խրատք։

ա․ Ո՛ր ինչ [illegible] · այն [illegible] իւ-

նոյնպէս նաւաբեկելոց ։
Նշանակէ եւս, թէ ամ. երբեմն ՚ի ձեռն երազոց յայտնէ զապագայն ։

Բ. Նշմարեա ջանիւ ՚ի սկզբանն առաջին չքա-
շուն ամբարշտութեանն, որոյ վնասեցին շէն-
եայքն, եւ ՚ի վերջոյ խառնեցին շնայքն ի-բեանց ։

Ո՞ւր մեղքն ծնանի ՚ի միտսն, եթէ այնմ ոչ հակառակեսցուք ։

Գ. Թէպէտ ջանով էր այր արդար, այլ Թծ մամո
արդարոց նոր էր նահապետաց ։

Նու առ բարեպաշտ ծնողաց կարեն գոլ անպիտան զաւակք . եւ փոխ առ ՚ի կրթել զնո յերկիւղ այն, ծնողք պարտական են ունել զանձնօք հոգողութիւնս ։

## Պտուղք բարեպաշտութեան ։

Ո աւանիկ յակոբայ ոչ խաղաղեցին զանմեղ եղբայրն իւրեանց զյովսէփ արկանել ՚ի գուբն, եւ փոխանել զնա իշմայէլացւոց ։ Այլ Տր նորա այնքան զայրագնեցան ՚ի վր նր . որ գիրն պատասխանէ, թէ վս լինելոյ նորա առաքինի ։ Առաքինութի, մի՛ թիւրեսցին կեանք իմ ՚ի արդարոց պատուիրանացդ, թէեւ պարտ ինձ իցէ կրել զայնպիսի անբարեմասնութիւն, որպ յովսէփ ։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԺԵ.

Յաղագս արգելանելոյն Յովսեփայ 'ի բանդ վասն ողջախոհութեան իւրոյ:

Յովսէփ էր ծառայ յԵգիպտոս, և տէր նորա կոչէր Պետափրէս. սա յանձնեաց Յովսեփու կառավարել զամ զտուն իւր, և ինքն զոչինչ գիտէր բաց յուտելոյ և յըմպելոյ: Այսու ծառայութեամբ օրհնեաց Տէր զտուն Պետափրեայ 'ի շնորհս Յովսեփայ, և բազմապատկեաց զստացուածս նորա ընդ ամենայն նոյնպէս և յանդս. Յովսէփ էր կարմրայտ և գեղեցիկ տեսլեամբ, վասն որոյ և կին Պետափրեայ դարձուցեալ աչս զկնի իւր՝ ասաց նմա, ննջեա ընդ իս զգիշերս. իսկ Յովսէփ պատասխանի ետ նմա, զիարդ յանդգնեցայց մեղանչել առաջի Տեառն: Այլ նա անամօթ ոչ դադարէր, այլ կրկնէր և երեքկնէր զայնոսիկ բանս զորհանապազ, իսկ Յովսէփ խոյս տայր 'ի նմանէ, որ և դէպ լինէր նմա: Յաւուր միում դէպ եղև Յովսեփայ մտանել 'ի տուն նր, յանդէտս լինելով կնոջ առանձինն նր. իսկ կինն այս բուռն եհար զհանդերձից Յովսեփայ և ստիպէր զնա յամբոխել կամաց իւրոց: բայց Յովսէփ բարձի թողեալ ապարեալ 'ի ձեռս նր զհանդերձս իւր, փախեաւ արտաքս. կինն Պետափրեայ ասէր թէ բռնանալական ջանք իւր 'ի դերև ելին, ամ

բարձ զաղաղակ մեծ, կոչեաց զա͞մ ընտանիսն և ասաց, թէ յովսէփ կամէր անպատուել զիս և ես սկսայ գոռալ գոչել. ուստի նա ՚ի փախուստ աճապարեցաւ՝ զիւրն թողեալ առ իս զհանդերձ. զայս հանդերձ պահեաց նա առ իւր ցայն վայր, մինչև տէրն դարձաւ ՚ի տուն. անամօթն և նմա ասաց՝ թէ ծառայն եբրայեցի, զոր նայն էած ՚ի տուն, եկն առ նա ՚ի սենեակն, և կամէր պղծել զանկողինս նորա։ Պետափրեայ իրաւացի դատեալ զասացուածս կնոջն, նոյնժամայն հրամայեաց զա͞ն մեծըն զյովսէփ առանց լսելոյ զջատագովութի նորա արկանել ՚ի բանտ, ուր կալանաւորեալ կային յանցաւորք դատապարտեալք յարքունեն։ Տ͞ր ա͞ծ էր միշտ ընդ նմա, և առաքեաց նմա զմիջոցս գըտանելոյ զողորմութի առաջի բանտապետին, որ ըստ խնդրոյ յովսեփայ ցուցանէր և միւս կալանաւորացն զմարդասիրութիւն, և կարգեաց զյովսէփ կառավարիչ բանտին, և ինքն ոչինչ գիտէր զայնմանէ։ Տէր Ա͞ծ չեթող անայց զյովսէփ և ՚ի բանտին, և ա͞մ՝ զոր գործէր նա, դարձաւ նմա ՚ի բարին։

## Օգտակար խրատք։

ա. Աստուած ոչ երբէք թողու զարդարս, թէ և նոքին ՚ի վտանգաւորութի անկցին։

Նա ՚ի բանտի անդ էր ա͞ծ ընդ յովսեփայ, և



հնոր

շնորհեաց նմա զյառաջադէմն լինել յամի 'ի գործս իւր :

է. Մարդ հեշտեաւ կարէ օգնականաւն քն դիմա-կաց լինել մեղաց :

Յովսէփ շողոքորթութեամբ և ուժովան-հնարին եղև հակամիտել յայն, զի մեղիցէ նա առաջի այ :

ը. Ընտանոյն տէր պարտի ջանադիր լինել, զի բոլոր ծառայք իւր և ընտանիք եղիցին բարեպաշտ և երկիւղած այ :

Վս առաքինի ծառային բովանդակ տունն Պետափրեայ շահեցաւ զառատութիւն.

## Պտուղք բարեպաշտութե̄ն :

Յովսէփ հրաժեշտ ետ 'ի կատարելոյ զկամս տիրուհւոյն իւրոյ և 'ի մեղանչելոյ առաջի ամենատեսն աչաց բարձրելոյն : Երանի՜ թէ` և 'ի ժամանակս մեր մանկունք զհետ երթիցեն հետոց նորա :

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԺԸ :

## Ազատումն Յովսեփայ 'ի բանտէ :

'Ի ժամանակս բանտարգելութե̄ն Յովսէփայ բարկացաւ արքայն 'ի վերայ երկուց պալատական ծառայից իւրոց, յորոց մին էր գլխ-



խաւոր

խաւար տակառապետ, իսկ միւսն աւագա-
գոյն մատակարար առաջի արքային փարաւոնի,
և երկոքեանն արկան 'ի բանտ. իսկ յովսեփայ
յանձն եղև վերակացու լինել նոցա: Յաւուր
միում եկեալ յովսեփայ առ նոսա ը̅ առա-
ւօտն, եգիտ զն̅ս տխուր յոյժ, և խօսակցեալ
նոցա, եհարց զպատճառ տրտմութ̅են. նոքա պա-
տասխանի ետուն, թէ տեսին երկոքին նոքա
զերազս յանցեալ գիշերի, և ոչ ոք էր մեկնա-
բան այնոցիկ: Յովսէփ թէպէտ ասաց ցնոսա,
թէ մեկնել զերազս գործ է ա̅յ, սակայն խնդ-
րեաց 'ի նոցանէ պատմել զոր ինչ տեսինն:
Տակառապետն ասէր, ես տեսի յանուրջս զորթ
խաղողոյ, և 'ի վերայ նորա զերիս ուստս հան-
դերձ հասուն խաղողովք, զորս ժողովեալ 'ի
դաշխուրանն փարաւոնի, որ յայնժամ 'ի ձե-
ռին իմում կայր, քամէի և մատուցանէի նմա.
Նոյնժամայն ասաց յովսէփ, թէ երազն նշանակէ
զայս ինչ. երեք ուստքն ցուցանեն զերիս ա-
ւուրս, յետ անցանելոյ որոց փարաւոն հրա-
մայեսցէ արձակել զքեզ 'ի բանտէն և կար-
գել 'ի նախեղակդ պաշտօն. և 'ի միասին ընդ
այսմիկ խրատ ետ տակառապետին և աղաչեաց յիշել
զինքն, յորժամ լինիցի 'ի յաջողութ̅ե: Ապա ա-
սաց մատակարարն, և ես տեսի զերազ, իբր թէ
երեք սպիտակ խանք կային 'ի վերայ գլխոյս,
յորոց 'ի վերնումն կային ա̅մ տեսակք ուտե-
լեաց փարաւոնի, և ոչ թէ 'ի խանէ անտի ե-
ղելոյ իմ գլուխ, ուտէին թռչունք. յայնժամ



ասաց

տայց յոլնէփ , թէ երեք խանքն նշանակեն
զերիս աւուրս , յետ որոց արքայն հրամայեսցէ
գլխատել զքեզ և կախել զկախաղանէն , ու-
րանօր թռչունք կտցահարեսցեն զմարմինդ ։
Յետ երից աւուրց 'ի տօնախմբել արքային
զօր ծննդեան իւրոյ , երազք երկաքանչիւ-
րոցն հասին 'ի կատար , զի արքայն զտակա-
ռապետ իւր դարձոյց անդրէն յառաջին
իւր աստիճան , իսկ մատակարարն կախեցաւ .
Տակայն տակառապետն ոչ երբէք յիշեաց զՅով-
սէփայ ։ Յետ երկուց ամաց արքայն փարաւօն
ետես զերկուս երազս . զառաջինն թուէր նմա-
ռա թէ կացեալ կայ նա առ եզր գետոյ իբրեւ ,
յորմէ ելանէին եօթն երինջք գեղեցիկք
տեսլեամբ և պարարտք մարմնով , և ապա այլ-
ևս ելանէին յետ այնոցիկ նոյն քանակութ-
տեսլեամբ զազիրք և մարմնով նիհարք , որոց
լափլիզելով զպարարտսն ։ Միայն ը՜ առաջնոյն
զազիրք . վաղվաղակի յետ այնորիկ վերստին 'ի
նինջ եմուտ փարաւօն , և դարձեալ ետես
յերազի , ոչ թէ 'ի միում բուսան մինչի եօթն
հասկք բազմաբեղունք և ընտիրք . 'ի թիկանց
որոց բուսան ևս եօթն հասկք ապազուն և
չոր , որք կլանէին զբազմաբեղունսն և զընտիրս ։
Առաւօտուց հրամայեաց փարաւօն կոչել
առ ինքն զամ գուշակս և զիմաստունս եգիպ-
տացւոց , յորոց և ոչ մի ոք կարաց մեկնել
զերազն . ապա յառաջ մատեաւ տակառա-
պետն առ արքայն և ասաց , ահա յիշեցի ,


զի

զի նստի 'ի բանտին պատանեակ ոմն ազգաւ եբրայեցի, որ քաջարուեստ է 'ի մեկնութեան երազոց. անյապաղ ածաւ յովսէփ յապարանս և արքայն պատմեաց նմա զերազսն իւր. ասաց այսպէս յովսէփ, եօթն երինջք պարարտք և եօթն հասկք բազմաբեղունք նշանակեն զեօթն ամս պտղաբերս, և ներհակ այսմ եօթն երինջք վտիտք և չարաբեկք, և եօթն հասկք ազազունք նշանակեն զամս եօթն, որք եղիցին չորային և յոյժ սովահամբոյր. և 'ի վերայ այսր ամի ետ յովսէփ խորհուրդ արքային ընտրել զայր մի հանճարեղ, որ 'ի ճոխաբեղուն ամսն ժողովեսցէ զաւելորդ առատութեան ցորենոյ առ 'ի պահպանութիւն: Առաջարկութիւնս այս հաճոյ թուեալ արքային, կարգեաց ըզ յովսէփ պետ 'ի վերայ բոլոր եգիպտոսի, մինչզի զկնի արքային նա էր առաջին. ապա հանեալ 'ի ձեռանէ իւրմէ զմատանին, յովսեփայն ագոյց 'ի ձեռն. զգեցոյց նմա զհանդերձ հարուստ, և էարկ զպարանոցաւ նորա մանեակ ոսկի. և ո՛չ այսչափ միայն, այլ և բազմեցոյց զնա 'ի հոյակապ կառս և հրամայեաց աղաղակել առաջի նորա, թէ սա է փրկիչ երկրին եգիպտացւոց:

## Օգտակար խրատք:

ա. Յաջող և ձախող ժամանակք ծագեն ըստ պատահման, մանաւանդ ամենայն ինչ լինի ըստ հանճարոյ տնտեսութեանց:

Այդ նախագուշակեաց փարաւոնի, թէ յեգիպ-տոս զամս եօթն եղեալ պտղաբերութե, իսկ զայլ միւս ամս եօթն՝ սովալլատիկ։

Ե. Մեծամեծ ըշուտաութի բազմեցս անմնաս ան-ցանէն, երբ հաւաստարութին ցանցն չէին արտոց ըմտատոնոց։

Որ ամի հազարաւոր մարդիկ ունէին կորնչել 'ի սովէ անտի, եթէ յովսէփ չլինէր կարգեալ յամբարել զցորեան։

Զ. 'Ի ցանկող ժամանակի դա՛րս է հետաւ հայթայթ-ղէս, 'ի շնչել 'ի յախորժոց պաշտաման ինչ։
Ո՛չ ամէն տարի լինի պտղաբեր. այլ պատահին եր-բեմն և այնպիսիք, որք ճմլեն ճնշեն զմեզ անպտղութեամբ։

## Պտուղք բարեպաշտութե։

Յովսէփ ենթարկեցաւ մեծամեծ փո-փոխութեց. էր նա սիրելի որդի հօրն, և յետ այնորիկ փութապէս վաճառեցաւ 'ի ծառա-յութի. ապա կալանաւորեցաւ 'ի բանտի, և հուսկ յետոյ կարգեցաւ աքքային օգնական։ Աստուած իմ, ած զիս ուր հաճոյ իցէ ամենա-յինդ քում բարութե. ես աներկմիտ միամիտ եմ, թէ ը հովանեաւ քով ո՛չ երբէք ու-րեք եղէց անբարեմասն։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԹ։

Յաղագս եղբարցն յովսեփայ եկելոց յեգիպտոս 'ի ժամանակս սովոյն սաստկութեան ։

Այլ մեծ սովն տարածեցաւ և մինչև յերկիրն քանանացւոց, ուր բնակէրն Յակոբ: Լուեալ սորա, թէ յեգիպտոս առատութիւն է հացի, առաքեաց անդր զորդիս իւր 'ի գնել զայն, այլ զկրտսեր որդին զբենիամին չարձակեաց ընդ նոսա, երկնչելով՝ թէ գուցէ զճանապարհային դիպեսցի նմա ձախորդութիւն ինչ: Յայնմ ժամանակի յեգիպտոս կառավարիչ ամենայն կերակրեղէն նպարից էր յովսէփ. և եթէ խնդրէր ոք յարքայէն զկերակուր ինչ, նա պատասխանէր, երթ առ յովսէփ, և որպէս նայն հրամայեսցէ, արա ըստ այնմ: Յորժամ և որդիքն յակոբու առաքեցան առ նա, նոքա մատուցեալ երկրպագին նմա մինչև ցհող 'ի խոնարհ. յովսէփ իսկոյն ծանեաւ զնոսա, այլ նոքա ոչ ծանեան զեղբայրն, զոր վաճառեցին. ոչ կարացին ճանաչել զնա և 'ի ձայնէն, վասն զի յովսէփ 'ի խօսելն ընդ նոսա, միշտ 'ի գործ դնէր զթարգման ոք. և յերկրպագանել նմա եղբարցն այնպիսի եղանակաւ, անդէն յուշ ածան նմա երազքն, զոր ետես վասն նոցա. սակայն նա ոչ ետ նոցա զգուն ինչ կասկած ճանաչելոյ զինքն, այլ հրամայեաց արկանել



զնոսա

զնոսա ՚ի բանդ իբրև զլրտեսս ։ Եղբարքն թէ-
պէտ և ասէին , թէ ամենեքեան նոքա միոյ
հօր են զաւակք և արք պատուականք , այլ
յովսեփայ լուեալ զայս , եհարց ցնոսա , թէ ո՞ւր
են միւս երկու եղբարք նոցա , որում նոքա
պատասխանի ետուն , թէ կրտսեր եղբայրն մնաց
առ հօրն , իսկ միւսն անցեալ է զսահման կե-
նաց ։ Վասն որոյ յովսէփ հրամայեաց միումն ՚ի նոցա-
նէ դառնալ անդրէն ՚ի տուն , և ածել ըզ-
կրտսեր եղբայրն , զի մա՛րթ իցէ հաւա-
տալ , լրտե՞սք են նոքա թէ ո՛չ ։ Եղբարցն խո-
լամուտ լեալ այսմ , ասացին ցմիմեանս , թէ
զայս շահեցաք կորուսանելովն զեղբայրն մեր
զյովսէփ ։ ՚Ի բանից աստի յայսցանէ յերևան
եկին արտասուք յաչս յովսեփայ , մինչ զի հար-
կեցաւ անդրէն դառնալ ՚ի նոցանէ ։ Զաւսկ
յետոյ շմաւօն թողաւ ՚ի դիպահոջ յաւանդ ,
իսկ միւս ինն եղբարցն հրաման տուաւ վե-
րադառնալ ՚ի տուն ։ Եւ մինչ սկսան նոքա թա-
փել զցորեանն , եգիտ այր իւրաքանչիւր զիւ-
րումն քըսակի զարծաթն վճարեալ ՚ի գին ցո-
րենոյն , զի յովսէփ հրամայեալն էր յետա
դնել զարծաթն յիւրաքանչիւրումն քըսակի ։
Դէպս այս ահարկու՝ որպէս զնոսա , նմանա-
պէս և զծերն ո՛չ սակաւ գրաւեաց ՚ի սար-
սափ ։ Եւ ՚ի պակասել բոլոր հացի նոցա , պար-
տաւորեցաւ յակոբ միւսանգամ ևս առաքել
զորդիսն յեգիպտոս , այլ նոքա չառին յանձն
գնալ առանց բենիամինի , զի յովսէփ յայտ-



նապէս

նապէս ասաց, թէ նոքա ոչ երբէք տեսցեն միւսանգամ զերեսս իւր, եթէ ոչ ածցեն ը̅ իւրեանս զկրտսեր եղբայրն։ Յեկեալ նոցա յեգիպտոս, նախ քան զա̃ն մատուցին կառավարիչն յովսեփայ զարծաթն գտեալ ՚ի քուրձս իւրեանց, այլ նա չընկալաւ զայն ասելով, թէ գուցէ Ա̃ծ հարցն նոցա, եդ զարծաթն ՚ի քուրձսն. ապա ընկալաւ զնոսա մարդասիրաբար յոյժ յոյժ, և տեսեալ ՚ի միջի նոցա զեղբայր իւր զբենիամին, ասաց նմա, Ա̃ծ ողորմեսցի քեզ որդեակ. և շարժեալ ՚ի գութ, արտասուեաց, և խոյս ետ անտի։ Մինչ այս մինչ այն, և ահա պատրաստեցին զսեղան և եղբարքն յովսեփայ պատուորեցան ճաշակցել նմա. նա նստոյց զնոսա ը̅ս աւագութե̅ն յորմէ ածանն նոքա ՚ի մեծ զարմանս։ Նոքա բազմեցան յառանձին սեղան, զի չէր օրէն եգիպտացւոց ուտել ընդ եբրայեցիսն այլ զխորտիկն տայրն նոցա ՚ի սեղանոյ անտի յովսեփայ, ուրանօր բաժինն բենիամինի էր հնգապատիկ առաւել քան այլոցն. ՚ի միւսում աւուր ուղևորեցան նոքա ուրախու̃բ ՚ի տուն իւրեանց։

## Օգտակար խրատք։

ա̅. Աստուած տիրապէս կեցէ շապակայն բոլոր։
Եղբարքն խոնարհաբար երկրպագին յովսեփայ,



և

և զայս յերազի յայտնեաց նմա Ած. քանի ա-
մօք յառաջ քան զայս իրողութիւն:

Է. Յիշեցէք թէ և ու ժամանակ մի նեղեալ է, եւայ 'ի պարտաւորապարգեւածն ժամու շարբննու:

Եղբարք յովսեփայ յանկանելն 'ի մեծ ձախորդութիւն, սկսան ասել ցիմեանս, զայս շահեցաք կորստեամբ եղբօր մերոյ:

Ը. Պահեցէք յարգանս են, երբէ մաքուր սրտէ ցանկամք մեղանց զ բարկա:

Յովսէփ ողջունեաց զեղբայրն իւր զբենիամին այսու բանիւք, Ած ողորմեսցի՛ քեզ որդեակ:

## Խորհուրդք բարեպաշտութեան:

Որպէս յովսեփայ բորբոքիւր սիրով 'ի տեսանելն զբենիամին եղբայրն իւր կրտսեր: Տր Յս, դու ներես ինձ կոչել զքեզ եղբայր, թէպէտ անարժան գոլով տեսանելոյ զերեսս քո. ո՛վ, քանի՛ ստուգել ուրախ և երջանիկ եղէց, երբ տեսից զքեզ դէմ յանդիման յերկինս՝ ամենաքաղցր փրկիչ:

## ԳԼ. ՏԱՍՆԵՒԻՆՆ.Ր:

Յաղագս այնորիկ, թէ զիա՛րդ ծանուցեալ եղեւ յովսէփ եղբարց իւրոց:

Երբև կամք եղեն եղբարց յովսեփայ միւսանգամ 'ի տուն վերադառնալ, հրամա-



յե ա

կեաց յովսէփ տնտեսին իւրում լցուցանել զքուրձս նոցա ցորենով, և յիւրաքանչիւրումն դնել զարծաթ նց. իսկ ՚ի պայուսակն կրտսեր եղբօր դնել զարծաթի բաժակն սեղանոյ իւրոյ, զոր կատարեաց տնտեսն յառաջ քան զերթ նոցա: Յելանելն նոցին ը առաւօտն ՚ի քաղաքէն, հրամայեաց տնտեսին ունիլ զառաջս նոցա, որոյ հասեալ առ նոսա, եհարց թէ ըէ՞ր նոքա ը բարուց հատուցին զչար գողանալով ՚ի տնէ նորա զբաժակն արծաթի, զոր նա սովորաբար ըմպէ. որդիքն յակոբայ անպարտ կարծելով զանձինս իւրեանց, ասացին նմա, առ որում ՚ի մէնջ գտցի բաժակն այն, նա մահու մեռանելոց է, և մեք ամենեքին առ հասարակ եղիցուք ծառայք յովսեփայ. և ՚ի յուզել տնտեսին, գտաւ բաժակն առ մեծ դժբաղդութիւն նոցա՝ ՚ի պայուսակին բենիամինի: Ոչ գիտելով որդւոցն յակոբայ, թէ ուստի՞ եղև այս, առ ահին պատառեցին զհանդերձս իւրեանց և անդրէն դարձան ՚ի քաղաքն. և հասեալ առ յովսէփ, յերկիր անկան առաջի նր: Յայնժամ ասաց նոցա յովսէփ, զի՞նչ դուք յանդգնեցայք գործել, միթէ ո՛չ գիտէիք, թէ ես եմ մի ՚ի թուոյ գաղտնագիտացն, առ որ և ո՛չ մի ոք կարաց [illegible] լինել յեղբարց անտի. բայց յուդայ այսպէս ասաց, զի՞ արդ կարեմք զանձինս մեր առաջի քո արդարացուցանել, քզի ած պատուհասեաց զմեզ վս անօրէնութեց



մերոց

մերոց, և արդ մեք ամենեքին եղիցուք ծա-
ռայք քո, ես և՛ի մէնջ նա՝ առ որ բաժակն
գտաւ. և՛ի վ̅ր այսր ա̅մի պատասխանեաց յով-
սէփ, քաւ լիցի այդ. այլ միայն նա, առ որ
բաժակն գտաւ՝ մնասցէ ինձ ծ̅ռյ. իսկ դուք
գնացէք խաղաղութ̅բ առ հայր ձեր: Այսոքիկ
բանք ոչ զոք ՚ի նոցանէ այնքան զահի հարին,
որպ̅ս զյուդա, զի նա եղև երաշխաւոր առաջի
հօրն բերել ը̅ իւր զբենիամին. վ̅յ և աղա-
չեաց թախանձագին, զի յովսէփ պահեսցէ
զինքն ծառայ փոխանակ կրտսեր եղբօրն.
վ̅ս այն զի՝ նոքա եթէ ՚ի դառնալն ՚ի տուն ոչ
տարցեն ը̅ իւրեանս զբենիամին, յայնժամ
հայր նոցա կենդանութեան իջցէ ՚ի գերեզման
տրտմութ̅բ: Յայնժամ ա̅մի յովսէփ ոչ կարաց ա-
ռնուլ ևս ժուժկալել այլ հանեալ զա-
մենեսին արտաքս, և առանձինն մնացեալ ը̅
եղբարցն, ասաց ցն̅ա, ես եմ յովսէփ եղ-
բայր ձեր. տակաւին կենդանի՞ է արդեօք
հայր իմ: Եղբարքն ոչ կարացին պատաս-
խանել առ այն և ո՛չ բան մի՝ քստմնափուշ
եղեալ ՚ի ներկայութ̅ե նորա. այլ նա հրամա-
յեաց նոցա մօտ գնալ առ ինքն, և խօսե-
ցաւ, զի մի՛ տրտմիցին յաղագս վաճառելոյն
զեղբայրն՝ և ասէր, ա̅ծ առաքեաց զիս աստ
վասն փրկութ̅ե ձերոյ. Միւս ևս հինգ ամք սո-
վահամբոյրք. ուրեմն պարտ է ձեզ երթալ ՚ի
տուն, և անյապաղ իջանել հանդերձ հարբն
ձերով վերստին յեգիպտոս, յետ որոյ բնա-


կես

կեցջիք դուք յերկրին գեսեմ, և ես զձեզ բոլորապէս կերակրեցից առատապէս. և զայս ասացեալ, անկաւ արտասուալից զպարանոցաւ եղբօր իւրոյ բենիամինի, և բենիամին գըր-կեալ զնա, նոյնպէս ելաց. ապա իւրաքան-չիւրումն ի նոցանէ շնորհեաց յովսէփ կրկին ընտիր պատմուճանս, իսկ բենիամինի ետ ըզ-հինգ պատմուճանս և զերեք հարիւր դահե-կանս. և բաց յայսմանէ առաքեաց զառա-մեալ հօր իւրում զտասն էշս բեռնաւո-րեալս ցորենով, և ի վերջոյ արձակեաց զնս, պատուէր աւանդեալ նոցա չվրդովել զճա-նապարհայն: Ի դալ հասանել նոցա ի տուն ծանուցին հօրն, թէ որդի նորա յովսէփ կեն-դանի է և կառավար է բոլոր եգիպտոսի. այլ յակոբ այսմ ոչ հաւատաց մինչև չետես ըզ-կառս առաքեալ յորդւոյն իւրոյ ի յովսէ-փայ. յայնժամ ցնծացաւ անձն նորա, և խըն-դու͞թ ասէր, երթայց և տեսից զնա. և յետ այսորիկ ուղևորեցաւ ի ճանապարհ հանդերձ ա͞մ ընտանեօք իւրովք եօթանասուն և հինգ անձամբք: Ցերանելին յովսէփայ ը͞ առաջ, ա-սաց նմա հայրն, այժմ մեռայց ուրախու͞թ, զի տեսի զերեսս քո: Արքայն փարաւոն հրամայեաց յովսէփայ բնակեցուցանել զհայր իւր և զեղբարսն ի բարւոք երկ-րի բոլոր եգիպտոսի, և նա նշանակեաց նոցա առ ի բնակութիւն զերկիրն գեսեմ անուանեալ, ուրանօր ի ժամանակս սաստիկ



պակա

պակասութեան ցորենոյ կերակրեաց զնոսա ամենատեսակ ուտելեօք՝ այլ յեղբարց իւրոց ոչ ծնաւ երբեւ վրէժխնդիր, բայց միայն զայս ասէր Թէ դուք կամեցայք չար առնել ինձ, այլ Աստուած փոխեաց զայն 'ի բարութիւն:

## Օգտակար խրատք:

ա. Որով ցուցանէ մեզ, նախանձն և դառնացի ատե-լութիւն:

Յովսէփ տառապեալ, յորժամ արկաւ 'ի գուբն, և եղբարք նորա պարտաւորեալքն յաւազակութեան՝ աճապարեցան:

բ. Աստուած մեզ հոգայ զօրութեամբ, նաև 'ի ժամանակի խաւարային պատահմանց, զոր կրեն նոքա:

'Ի լինել սովուն՝ ամենուրեք, յակոբ բոլոր տամբն իւրով կեայր առատապէս յերկիրն 'ի Գեսեմ:

գ. Տէր Աստուած և զամենայնաչար դատապարտութիւն չարէ դարձուցանէ 'ի բարին:

Նոյնպէս Յովսէփ եղբարց իւրոց, որք զինքըն վաճառեցին, Թէ դուք կամեցայք չար առնել ինձ, և Աստուած փոխեաց զայն 'ի բարութիւն:

## Պտուղք բարեպաշտութեան:

Երկոտասան որդիքն չկարեն կերակրել զծնողն իւրեանց, Թէև հայրն ինքն միայն

սնուցանէ զայնքան Թիւ որդեկաց․ երջանիկ համարելի է յովսէփ , որ օժանդակ գտաւ հօրն և եղբարց ։ Մ՝եք պարտիմք բարեբաղդ զմեզ համարել , մինչ այսպիսի կերպիւ կարեմք հանգուցանել ՚ի ծերուե՟ զծնողս մեր ։

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ․ իա․

### Յաղագս եղբայրական ծառայութե՟ ։

Յետ մահուն յովսեփայ որդիքն իէլի յոյժ բազմացան յեգիպտոս․ յայնժամ արքայն փարաւոն սկսաւ երկնչիլ , թէ մի՛ գուցէ յաւուր միում միաւորեսցին նոքա ը՟ թըշնամիս իւր․ վ՟յ ա՟մ եգիպտացիք միաբանեցան ջնջել զն՟ս ։ Արքայն հրամայեց շինել զնոր քաղաքս , զի այնուիկ զառաւել ծառայութիս դիցէ ՚ի նոսա․ կարգեցան ՚ի վ՟ր նոցա հարկահանք , որք անողորմ յոյժ վարէին ը՟ ն՟ս , սակայն այս ա՟մ ապարդիւն եղև , զի որքան առաւել նեղէին զորդիսն իէլի , այնքան առաւել քան զառաւել բազմանային նոքա ։ Յետ այսորիկ հրամանն ետ արքայն մանկաբարձաց՝ սպանանել զա՟մ արու տղայս եբրայեցւոց ՚ի ծնընդեան անդ ն՟ց․ այլ մանկաբարձքս այսքիկ երկուցեալ յա՟յ , պահպանէին զա՟մ տղայս եբրայեցւոց , և արքային ազդ առնէին , թէ կանայքն եբրայեցւոց յառաջ քան զհասանիլ նոցա ծնանին զորդիս ։ Նաև յորժամ ոչինչ օգ-



նեաց

նեաց և այս, հրամայեաց արքայն ամենայն հպատա-
կաց իւրոց խլել զնորածնունդ տղայս 'ի
կանանց անտի եբրայեցւոց և ընկենուլ 'ի
գետն: Յաւուր միում ել փարաւոնի դուստր
հանդերձ նաժշտօք իւրովք յափն գետոյն
զբօսնուլ, և ետես 'ի շամբին տապանակ մի ծե-
փեալ կպրաձիւթով, զոր հանեալ 'ի ջրոյն
ետես 'ի նմին զտղայ մի լալական, որոյ մայրն
էր եբրայեցի, որ զամիսս երիս պահեաց թա-
գուն 'ի տան զայս մանուկ, և 'ի չկարելոյն ա-
ւելի ևս թագուցանել զնա, եդ յափն գե-
տոյն այնօրինակ, զի մի՛ ըստ արքայական հրամա-
նի սպանցի: Դուստր փարաւոնի հրամայեաց
ածել զդայեակ 'ի սնուցանել զտղայն, և
այն կին դայեակն էր հարազատածնող մայր
մանկանն: 'Ի հասանել նորա յարբունս, արար
զնա դուստրն թագաւորի որդեգիր իւրեան
և անուանեաց մովսէս: Ելեալ ապա 'ի կատա-
րելահասակութն, ոչ ևս հաճեցաւ կեալ յա-
պարանս, այլ և գնայր առ որդիսն իսրայէլի առ եղ-
բարս իւր: Յաւուր միում ետես զեգիպտա-
ցի ոմն, որ ուժգնակի գանակոծ առնէր զեբ-
րայեցի մի. այս անիրաւութին այնքան անտանե-
լի թուեցաւ մովսէսի, մինչ զի մեռոյց զեգիպ-
տացին. և որովհետև այսր իսկ էր նմա փրկութի
գտանել փախստեամբ, այլ գնաց առ յո-
թոր քուրմն, որ կարգեաց զնա 'ի վերայ հօտին
իւրոյ, և ետ նմա կնութե դուստր իւր
սեպփորա:

## Օգտակար խրատք ։

ա. Արտաքսեալ բարեբարոյութիւն հեշտեաց արկանէին 'ի մոռացօնս ։

Մոռացան եգիպտացիք զմեծամեծ վաստակս յովսեփայ, որ արգելոյր 'ի սաստկասով ժամանակին։

բ. Պարգեւք հնազանդեցին զայ տառապեալ մրդկան ։

Զայս արարին մանկաբարձք եգիպտացւոց չզր֊կելով 'ի կենաց զնորածնունդ մանկունսն, թէպէտև յարքայէն հրամայեալ էր նոցա առնել զայն ։

գ. Զօր նախանձաւորութեան մծ վն բարեգործութե֊ երեխայից եւ աղբեցուցանեն երկրաւոր են շեր֊ ջեր ։

Կամեցեալ այ առաջնորդ առնել զմովսէս իսրայէլացւոց, յամս բռնմանց փրկեաց զնա ։

## Պտուղք բարեպաշտութեան ։

Մեք տեսանեմք զմանուկ տատանեալ յալիս․ արտասուք ցօղեն զայտս նր ։ Ով կա֊ րէր հաւատալ, թէ երբեմն եղիցի նա փրկ֊ կիչ ազգի իւրոյ ։ Եւ 'ի միջի մերում գուցէ են այնպիսիք, որք աճեսցեն զբաղում երեւե֊ լի երեւելի գործս ։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԽԲ:

## Յաղագս խոստովանութե֊ ծարաւոնէ:

Մովսէս արածէր զխաշինս աներոյ իւրոյ յանապատին ՚ի վր լերինն Քորեբայ, ուրանօր եւտես զմորենի վառեալ, որ ոչ այ֊րէր, յորում երեւեցաւ ած և ասաց ցմով֊սէս, թէ եւտես նա զտագնապ ժողովրդեան իւրոյ յեգիպտոս, վսյ և էջ հանել զնս անտի յերկիրն աւետեաց, որ բղխէ զմեղր և զկա֊թն: Հրամայեցաւ մովսիսի ծանուցանել զայս֊մանէ՝ ոչ իէլացւոց, նմնպս և արքային փա֊րաւոնի. այլ մովսէս յայսմ պատգամաւո֊րութե հրաժարեցաւ յասելն, ժողովուրդքն ոչ հաւատասցեն, թէ տր առաքեաց զիս: Նձ ան֊փոփոխ պահելով զիւրն դիտաւորութի, յանձն առար իշխանութե նորա զերիս հրաշագործու֊թիւնս. Ա., եթէ մովսէս ընկեսցէ յերկիր զգա֊ւազան իւր, օձասցի այն. և իբրև բուռն հարցէ զտտանէ օձին, կրկին գաւազանասցի ոչ յառաջն: Բ., եթէ դիցէ զձեռն իւր ՚ի ծոց իւր, հանցէ զայն անտի բորոտ. և թէ վերստին դիցէ անդր, հանցէ ըստ առաջնոյն ողջ և մաքուր: Գ., եթէ նա առցէ ջուր ՚ի գետոյն, և հեղցէ ՚ի վր երկրի, յանդիման ա֊չաց ամ տեսանողացն յարիւն դարձցի: Նաև բաց յայսմանէ տր ած կարգեաց նմա օգնական զահարոն զեղբայր նր, որ իբրև այր լայնա֊



խօր

խորհուրդ պարտէր զմտախոհն բացատրել զմտաց դատմունս: Յառաջագոյն ծանուցաւ զայսմանէ իսրայէլացւոց, որք 'ի տեսանելն զհրաշագործութիւնս, նոյնժամայն հաւատացին նմա. յետոյ եկին նոքա առ փարաւոն արքայ և ասացին նմա զայս, այսպէս ասէ տէր Աստուած Իսրայէլի, արձակեա զժողովուրդ իմ. այլ փարաւոն պատասխանեաց նոցա, ո՛վ, և որպիսի ոք է տէրն, որոյ լուայց ձայնի. ես չճանաչեմ զտէր և ո՛չ արձակեցից զիսրայէլացիսն. և կոչեաց զմովսէս գործավարս իւր, հրամայեաց նոցա չտալ իսրայէլացւոց զյարդ կաւոյ աղիւսարկութեան, այլ զնոսա առաքել 'ի ժողովել զայնոսիկ, այսոր տեղիս, զի նոքա պարապեսցեն յաւուրն զայնքան աղիւս, որքան պատրաստէին յառաջն: Մովսէս թէև արար հրաշս զանազանս առաջի փարաւոնի, բայց որովհետև և կախարդքն եգիպտացւոց զնոյն առնէին կախարդանօք իւրեանց, նմին իրի կարծրացուցեալ փարաւոն զսիրտ իւր, ո՛չ հաւատաց հրաշիցն այնոցիկ. յետ որոյ առաքեաց տէր զտասն անհնարին պատուհաս 'ի վերայ բոլոր եգիպտոսի, այսինքն զարիւն և զգորտն. ապա զմուծակ և զշանաճանճ. յետոյ զժանտախտ և զվէրս. հուսկ յետոյ զկարկուտ և զմարախ. 'ի վախճան տէր զխաւար և զհրեշտակ հարուածող: Նախ՝ ջուր գետոյն յարիւն փոխեցաւ շարունակաբար զաւուրս եօթն, ապա այնքան անթիւ գորտք լցան, մինչև արքայն ո՛չ գիտել թէ ո՛ւր թագիցէ. ընդ-



նմին

Նմին յայտնեցան մունքն յերկրէ, զոր եհարն մովսէս գաւազանաւ. յետ այսորիկ ա՟մ տունք եգիպտացւոց լցան շանաճանճիւք բաց ՚ի բնակարանացն ի՟էլացւոց ՚ի գեսեմ, որք ազատ մնացին յայնպիսեաց. կորստաւիթ ժանտախտիւ հարան ո՟չ մարդիկ, նմանապէս և անասունք, յորմէ անվնաս զերծան ի՟էլացիք միայն. փտեալ կեղքն ՚ի մարդիկս և ՚ի դուարս նո՟յն երևեցան ՚ի մոխրոյն ցանելոյ ը՟ն օդն ՚ի մովսիսէ և յահարոնէ. անսովոր կարկուտն եհար և աննշմար կորոյս զա՟մ ինչ եղեալ ՚ի դաշտս եգիպտացւոց. մարախն մաշեաց լրիւ զա՟մ մնացուածս յետ կարկտահարութ՟են. խաւարն տևողական եղև յա՟մ եգիպտոսի ամբողջ երիս աւուրս, այլ յերկրին գեսեմայ լոյս ճառագայթէր. և ՚ի վերջոյ զհասարակ գիշերաւ եկն հրեշտակն սատակիչ, և եհար զա՟մ անդրանիկս եգիպտացւոց, որոց կախարդքն թէև արարին զքանի մի հրաշս կախարդութ՟եք իւրեանց, այլ ոչ կարացին արտադրել զմուն. վ՟յ և պարտաւորեցան խոստովան լինել, թէ մատն ա՟յ էր այն. և ՚ի վ՟երայ այսր ա՟մ և նոքա հարան նոյնպիսի կեղովք, մինչև չկարէին երևել առաջի մովսիսի: Թէպէտ փարաւոն յայս ա՟մ թըշուառութ՟իս խոստացաւ արձակուրդ տալ որդւոցն ի՟էլի, աղաչելով զմովսէս և զահարոն դարձուցանել զեկեալ հասեալ զթշուառութ՟իս, այլ ՚ի տեսանելն զնուազել թշուառութ՟են, մոռացաւ կրկին զբանն խոստման և խոստացա-



ալոյն

սրտիւ, և 'ի վախճանի արգել մովսիսի երե-ւիլ առաջի երեսաց նորոց մինչև սպառնացաւ նմա և զմահ ։ Զայս ամ հրաշս յայտնեաց ած յեգիպտոս, որպէս անուան նր փառաւո-րեսցի ընդ ամ երեսս երկրի ։

## Օգտակար խրատք ։

ա. 'Ի ծանրաբեռնել իշխանաւորաց զիշխեցեալսն իւրեանց յանչափս, ինքն ած պաշտպան լինի ծանրաբեռնելոցն ։

'Ի դնել արքային փարաւոնի զանհնարին ծա-նրութիւն 'ի վերայ իսրայելացւոց, ած մեղմեաց ըղ թշուառութի ժողովրդեան նորա ։

բ. Սատանայ ո՛չ զամ ինչ՝ զոր կամի՝ կարէ առ-նել, այլ զայն և եթ զոր թոյլ տայ նմա Տր ։

Զայս քաջին փորձեցին կախարդքն եգիպտա-կան, որք օգնականութեամբ սատանայի կարող եղեն հանել զմլուն և ոչ մի ։

գ. Հաւատարիմ պաշտօնեայք այ չեն իւիք երկ-նչեալք 'ի նեղչ բռնաւորաց ժողովրդոց յան-ցանաւք և 'ի տանջանաւք ։

Զայս մա՛րթէ տեսանել 'ի մովսէս և յահա-րոն, որք կամօքն այ արարին զնշանս և զհրաշս այլ այսու ամիւ փարաւոն եկաց մնաց խստա-սրտեալ ։

## Պտուղք բարեպաշտութե՟ն :

Ո՛արքայն փարաւոն կակղէր՝ ո՛չ կարացին նոյն պատիժք պատուհասի ցայն վայր, մինչև մեռաւ անդրանկածին որդի Նորա. այսպիսի են ամ՟ չարակք, զորս ոչինչ իւիք մարթէ շարժել մինչ և իցէ, բայց եթէ պատժով : Որա՞ւ լիցի այս. ջա՛ն դիցուք կատարել Ինքնայօժար կամօք զկամս ծնողաց մերոց, որով և զերծ կայցուք ի պատժոյ :

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԺԴ.

Յաղագս այնորիկ, թէ ո՛րպէս եհան Մովսէս յեգիպտոսէ զիսրայէլացիս :

Յետ ընթացս խստանալոյ փարաւոնի, հրամայեաց Տ՟Ծ կայսնել Նմա զվերջին թշուառութիւն տասներորդ, որ էր այս, թէ ի հասարակ գիշերի մտցէ հրեշտակն մահու ը՟ ամ՟ եգիպտոս, և հարուածել սպանցէ զամ՟ անդրանիկս եգիպտացւոց. և յետ այսորիկ պատուիրեաց ասել որդւոցն իէլի, զի Նոքա յեգիպտացւոց անտի խնդրեսցեն իւրեանց զպէսպէս անօթս արծաթեղէնս և ոսկեղէնս, բարձցեն ը՟ իւրեանս, և իւրաքանչիւր տանուտէր ի վերջին երեկոյի պատրաստեսցէ իւր ընտանեօք հանդերձ զգառն խորովեալ ի կրակի, չթողցէ

զայն վ̅ն փառուքն, այլ ընթերցցեն գօտէպըն-
դեալ զմէջս իւրեանց, արկցեն զկօշիկս յոտս,
կալցեն 'ի ձեռս զգաւազան ը̅ս սովորութե̅
ճանապարհորդ արանց · իսկ արեամբ գառինն
զենեալ՝ օծցեն զբարաւորս և զսեամս դրանց
տանն իւրեանց, առ 'ի ճանաչել նովաւ զընտա-
կութ̅ի իէլացւոց, զի մի՛ և նոքին հաղորդ գըտ-
ցին հարուածոցն: 'Ի հասարակ գիշերի եկն
հրեշտակն սատակիչ և սատակեաց զա̅մ անդ-
րանկածնունդս եգիպտացւոց զմարդիկ և զա-
նասունս ևս և զորդին փարաւոնի, որ թագա-
ւորելոցն էր զկնի հօրն, յորում անկաւ սասա-
նութ̅ի մեծ ընդ բոլոր եգիպտոս, զի և ո՛չ տուն
մի 'ի նոցանէ մնաց առանց հարուածոց:
Զգաստացեալ փարաւոնի, հրամայեաց կո-
չել զմովսէս և զահարօն և ասաց նոցա, ե-
լէ՛ք վաղվաղ 'ի թագաւորութենէ աստի իմմէ, և
բարձէ՛ք ընդ ձեզ զա̅մ ինչ՝ զոր ունիք · և
եգիպտացիք իսկ ո՛չ թոյլ տային ն̅ց սպասել
մինչև ցառաւօտ, այլ, հարկ 'ի վ̅ր դնէին՝ ա-
րագ արագ ելանել 'ի սահմանաց անտի եր-
կրի իւրեանց, թողեալ ն̅ց զայն ա̅մ, զոր յա-
ռաջ քան զայս տուեալ էին յաւանդ: Գուն-
դըն իսրայէլեան որդւոց բաղկանայր 'ի վեց
հարիւր հազար արանց հետևակաց, թո՛ղ ըզ-
կանայս և զդեռահասակ մանկտիս: Իսրայէլա-
ցիք 'ի յիշատակ ելիցս այսորիկ կարգեցին տօ-
նախմբել զպասեքն · այլ չևևս ելեալ տակա-
ւին 'ի սահմանացն եգիպտացւոց, և ահա փա-



րաւոն

րաւոն սկսաւ սարջանալ յաղագս արձակե-
լոյն զնս, վզի եւ զհետ պնդեցաւ նց հանդերձ
համայն զօրօք իւրովք. այլ հրեշտակ տն ե-
րեւեալ ամպով՝ եկաց ը մէջ իսրայէլեան եւ
եգիպտականն բանակաց այնպէս, մինչ զի ոչ
կարէին մերձենալ յիրեարս: Եւ այսորիկ այս-
պէս եղելոց՝ հասին. իջելացիք ՚ի ծովն կար-
միր, ուրանոր ՚ի ձգել մովսիսի գաւազանաւ
հանդերձ զձեռն իւր ՚ի ծով անդր, ջուրն պա-
տառեալ յերկուս հերձաւ, եւ իջելացիք ան-
թաց ոտիւք անցին զծովն ը մէջ ջրային պա-
րսպացն կախելոց յաջմէ եւ յահեկէ. իսկ ե-
գիպտացիք զհետ մտեալ նց, գնային ը ան-
դունդս: Տր սեամբ հրոյ եւ ամպոյ հայեցեալ
էարկ զբանակն եգիպտացւոց ՚ի խռովութիւն մեծ,
ուր մեծաձայն աղաղակեցին նոքա, փախիցուք
աստի, զի տր պաշտպան է իջելացւոց: Ձգեաց
ապա մովսէս զձեռն իւր ՚ի ծով, եհար վե-
րստին գաւազանաւ զծովն, եւ ջուրքն դար-
ձան անդրէն ՚ի բնական կարգ իւրեանց, եւ
ընկղմեցին զփարաւոն եւ զամ զօրութիւս նորա
այնպէս, մինչ զի եւ ոչ մի ոք փրկեցաւ յե-
գիպտացւոց անտի:

## Օգտակար խրատք:

ա. Տէր ած յորժ նաւաձէւ ե շէոյծ համախօր
բանաւորին:

բ. Այս հնար է տեսանել յորքոյն փարաւոն,

որ 'ի սկզբանն մեծամեծօրէն տուաց, ո՞չ է ա̄ծ ձեր. այլ 'ի վերջոյ պատուանդեցաւ ցածութե̄ անել, գնացէ՛ք, երկրպագէ՛ք ա̄յն ձեր։

Ե̄. [illegible], [illegible] անիրաւ [illegible] ո՛չ [illegible]։

Եգիպտացիք զբազում շահեցան յոյժ յորդւոցն Իսրայելի բանադատելով զնո̄ կառավարել զծանր ծառայութիւն, այլ յելանել նոցունց, պարտաւորեցան զբոլորն վերադարձուցանել նոցա։

Զ̄. Հրեշտակ ա̄ն է ամենաբարի ճանապարհորդակից։

Որդւոցն Իսրայելի յելանելն յեգիպտոսէ քաջ ծանեան զայս յանձինս իւրեանց, յորժամ հրեշտակ ա̄ն գնայր ընդ մէջ նոցա և եգիպտացւոց։

## Պտուղք բարեպաշտութե̄։

Ո՛չ գտաւ մնացեալ մի 'ի տանն, որ գծագրեալնէր յեգիպտոս արեամբ գառինն պասէքի։ Յիսուս քս̄, արիւնդ կողահոս ունի զաւանել մեծ զօրութի̄. գծագրեա՛ զսրտի իմ արեամբ քով սրբով, և ես ո՛չ երկեայց ո՛չ 'ի մահուանէ և ո՛չ 'ի դիւէ։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԻԴ.

Յաղագս այնորիկ, թէ զիա՞րդ էած Ած զորդիսն Իսրայէլի ընդ անապատն յերկիր աւետեաց:

Որդիքն Իէլի զամս քառասուն ճանա-պարհորդեցին յերկիրն աւետեաց. իսկ Ած առաջնորդէր նոցա զճանապարհայն ընդ անա-պատն. 'ի տուէ երեւէր նա սեամբ ամպոյ, իսկ 'ի գիշերի սեամբ հրոյ: Սիւնն ամպեղէն պաշտպանէր որդւոցն Իէլի 'ի մեծ տապոյ, իսկ սիւնն հրեղէն զնոցայն լուսաւորէր զբա-նակ. յիջանել ամպոյն 'ի վերայ խորանին վը-կայութե՝ բանակէին նոքա. իսկ 'ի համբառնալ նորա 'ի վերքան զխորանն՝ յուղի անկանէին: Յամ ճանապարհորդութեան անդ անհոգ էին Իէլացիք զկերակրոց, զի զօրհանապազ ընդ ա-ռաւօտս իջանէր հաց յերկնից, զոր նոքա կո-չէին մանն կամ մանանայ: Երկնաւոր այս կե-րակուր էր տեսլեամբն իբրեւ զգինձ, ունէր զսպիտակ գոյն եւ զախորժ համ. այլեւ համե-մատիւր հաճոյից ճաշակողին: Ամ օր կարէ-ին նոքա ժողովել զմանանայ յառաջքան զելս արեւուն, բայց 'ի շաբաթէ, յորում ո՛չ իջանէր այն յերկնից. իսկ 'ի կրելն նց զպակասութե ջրոյ Մովսէս հարեալ գաւազանաւ զվէմն, բղխեաց անտի զջուր բաւական յարբումն ամ ժողո-վրդեան. նոքա զքառասուն ամն բոլոր հո-

նէին

նէին և զհոգս ինչ զհանդերձէ, զի ոչ հնա-
նայր հանդերձ նոցա, և կօշիկք ոտից նոցա
ոչ մաշէին ։ Ո՛չ շատացեալ այսու ամիւ որդ-
ւոցն իէլի․ բազմիցս տրտնջէին զնյ, վասն զի
երբեմն ոչ կամէին ուտել զմանանայ՝ ասելով,
թէ անախորժ թուի մեզ թեթև հացս այս․
Որոյ աղագաւ առաքեաց ած 'ի նոսա զհրեղէն
օձս․ միւսանգամ ապստամբեցաւ դասակարգն
կորխայ ը դէմ մովսիսի, և ահա երկիր պա-
տառեալ եկուլ զնս խռովարարսն ։ Իսկ յոր-
ժամ լրտեսքն առաքեալ յերկիրն աւետեաց,
վերադարձ արարեալ ծանուցին, թէ բնակիչ
անդ հսկայք մեծամեծք, անդէն տրտնջեաց
ամ ժողովուրդն և ցանկայր վերադառնալ կրկին
յեգիպտոս․ և վնկ բարկացեալ ած 'ի վերայ
նոցա՝ երդուաւ, թէ ամ կատարեալհասակք՝
որք ելին յեգիպտոսէ, մեռցին յանապատի․
իսկ յաւետեացն հասցեն յերկիր միմիայն որ-
դիք նոցա․ և այս սպառնալիք արդարև 'ի կա-
տար հասին, զի ամենեքեան սակաւ առ սակաւ
յայնմ քառասնամեայ մեռան յուղեգնա-
ցութեան ։ Ո՛չ մովսէս, և ոչ եւս ահարօն,
որովհետև և նոքա մեղան առաջի այ, յաջողե-
ցաւ մտանել յերկիր աւետեաց, բաց յերկուց
արանց 'ի յեսուայ նաւեայ և 'ի քաղեբայ ։
Թիւ չափահասացն բոլոր՝ էր վեց հարիւր հա-
զար․ և թիւ զաւակացն ծնելոց յանա-
պատի անդ՝ հասանէր մինչև ցվեց հարիւր
հազարն ։ Ած եցոյց մովսիսի նախ քան զմահ



նորա

Նոր զերկիրն աւետեաց 'ի լեռնէ անտի ուր մովսէս յետ այնորիկ վախճանեալ թաղեցաւ յոյ՝ զի մի՛ ոք գիտասցէ զգերեզման նորա. յաջորդ կառավարին՝ փոխանակ նորա եղեւ յեսու նաւեան, առաջնորդութբ որոյ հասին իէլացիք յերկիրն աւետեաց, զոր առին նոքա զօրութբ և զինու. և ա՟ծ հրամայեաց կոտորել զամ բնակիչսն քանանացւոց: Յանցանել նց ը յորդանան գետ, ջուրն հերձաւ ը մէջ. 'ի ձայնէ փողոյն անկան կործանեցան աշտարակք և պարիսպք երիքովի: Յաւուր միում մինչ չեւ ևս էր աւարտեալ յեսուայ նաւեան զպատերազմն առ ամորհաժամուէն, արեգակն կատարեալ զկամս նր, եկաց հանդէպ գաբաւոնի. 'ի վերջոյ վիճակաւ բաժանեցին նոքա զբոլոր զերկիրն զայն յերկոտասան ցեղս իսրայէլի:

## Օգտակար խրատք.

ա. Սփառաւոր որդէլ խարազէլութեան ծաղկեցէլ նոնանայ 'ի շրթունս:

Սրտեօք հաճոյ է այ այնքան մեծապէս զուարճանալ քրիստոնէից 'ի կիւրակէ և 'ի հանդիսաւոր աւուրս, և չկարել մտածել զհոգւոյ իւրեանց:

բ. Սրտիւն խորացէլէ պարտաւորին եղէն զանս տառապանս պահել յանդգնութեն յաւաղ ման ըռ ծանանելն յաւէտեայն երկիր:



Սնա

Նաւապատուն նկարագրի արքայութ շնորհաց յաստիս, և աւետեացն երկրաւ՝ արքայութ փառաց յերկինս,

Դ. Սովորէին առաջնորդէր խորաձեւութեանց ընդ անապատն, այլ ձեւոր նաւեան էած զնս ձեւնէ արեւելեայ:

Նոյնն յետոյ նաւեան պատկերէ զանուն յի քի: Նյոյ ծանուցանի, թէ ոչ օրէնքն մովսի սի, այլ աւետարանն յի քի փրկեսցէ զմեզ.

## Պտուղք բարեպաշտութ.

Ի ճանապարհորդել նոց ոյ՝ ժողովրդեան իւրում ը անապատն, վէմք բղխէին զջուր, իսկ յետ թերէ իջանէր մանանայ: Նորդ՝ մի թէ իսրայելք ունէին զաւաւել շահս քան զմեզ, որք ճանապարհորդիմքս ը առաջնորդութ քի. քաւ լիցի, ինքն յի հրաւիրէ զմեզ յիւր սեղան. կերակուր մեր է մարմին նորա, իսկ ըմպելի սուրբ արիւն նորա:

## ԳՐՏԱՐՈԹԻՒՆ. ԻԵ.

Յաղագս տասնաբանեայ պատգամաց աստուածելոց ՚ի լեառն սինայ.

Ի ժամանակի պանդխտութ իսրայելացւոց յանապատի՝ ետ նոցա այծ զտասն սուրբ պատ

գտանի ։ Ըստ հրամանի նորա՝ ժողովրդեանն պատուէր զաւուրս երիս պատրաստել զինքեան յընդունելութիւն այնոցիկ, և լուանալ զձորձս իւր. յերրորդում աւուր առաւօտուց ՚ի սինէականն էջ տր ՚ի լեառն հրով, յորմէ ելին ամպրոպք և փայլատակունք, և լսելի եղև ձայն փողոյ ։ Ի կատար լերինն երևեցաւ ամպ միգապատ. լեառն բոլոր ծխէր և շարժէր ահեղապէս իմն կերպիւ ։ Յայնժամ եհան մովսէս ՚ի խորանացն զորդիսն իէլի, որք պարտաւորեցան կանգուն կալ առ ստորոտով լերինն, յոր չէ՛ր ումեք հրաման ելանելոյ. քանզի ինքնին յայտնեաց ած յատկապէս, թէ որք յանդգնեսցին ելանել ՚ի լեառն, բնաջինջ կորիցեն ։ Յետ այսորիկ ետ Նա ժողովրդեանն իւրում զտասն պատգամս, որք պարունակեն պատկերանման ՚ի յետագայս ։ Ա. Ես եմ տր ած քո. մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն ։ Բ. Մի՛ արասցես դու քեզ կուռս ըր̄ ամ̄ նմանութիւն, որ ինչ յերկինս ՚ի վեր է, և որ ինչ յերկիր ՚ի խոնարհ, և որ ինչ ՚ի ջուրս և ՚ի ներքոյ երկրի. մի՛ երկրպագանիցես նոցա, և մի՛ պաշտեսցես զնս ։ Գ. Մի՛ առնուցուս զանուն տն այ քո ՚ի վր սնոտեաց, զի ո՛չ թողու զնա տր անպատուհաս, որ առնուցու զանուն նր ՚ի վր սնոտեաց ։ Դ. Յիշեսջի՛ր զօր շաբաթուց սրբել զնա. զվեց օր գործեսցես և արասցես զամ գործս քո, յաւուրըն եօթներորդի շաբաթ տն այ քոյ ։ Ե. Պա-

սուեա՛ զհայր քո և զմայր, զի երկայնակեաց
լինիցիս ՚ի վերայ երկրին, զոր Տէր Աստուած քո տացէ
քեզ ։ Զ. մի՛ սպանաներ ։ Է. մի՛ շնար ։ Ը.
մի՛ գողանար ։ Թ. մի՛ սուտ վկայեր զընկերէ
քումմէ ։ Ժ. մի՛ ցանկանար տան ընկերի քո.
մի՛ ցանկանար կնոջ ընկերի քոյ, և մի՛ ծառա-
յի նորա, և մի՛ աղախնոյ նորա, և մի՛ ամենայնի՝ զինչ ընկե-
րի քոյ իցէ ։ Եմուտ Մովսէս յամպն, և եկաց
՚ի լերինն վերայ զքառասուն տիւ և զքառասուն
գիշեր. յիջանել որոյ ՚ի լեռնէն՝ յանձն արար
նմա Աստուած զերկուս քարեղէն տախտակս, յորոց
վերայ անեղծին մատամբն գծագրեալ էին տասն
պատուիրանքն ։ Յետ այսորիկ ապերասան ժողո-
վուրդն անկաւ ՚ի մեծամեծ մեղս. ՚ի յամել
Մովսիսի ՚ի լերինն՝ մոռացեալ Իսրայէլացւոց
առ Ահարոն, պահանջէին ՚ի նմանէ առնել
իւրեանց Աստուածս, յորոց առաջնորդեսցին ։ Ահա-
րոն համաձայնեալ ընդ խնդիր ժողովրդեան,
ձուլեաց նոցա զորթ ոսկեղէն ՚ի գնդացն
եղելոց յականջս կանանց նոցա և զաւակաց.
և այսօրինակ կազմեալ զաւարկայ երկրպա-
գուէ, ասէին այր իւրաքանչիւր ցընկեր իւր,
ահա Աստուած քո, որ եհան զքեզ յեգիպտոսէ ։
Ապա սկսան տօնախմբել, ուտել և ըմպել
և յարեան ՚ի խաղալ. յայնժամ ասաց Աստուած
ցՄովսէս, տեսանեմ, զի ժողովուրդս այս խստա-
պարանոց է. և թող հեղից զբարկութիւն սրտմտութե-
իմոյ ՚ի վերայ դորա, և զքեզ արարից յազգ մեծ ։
Սակայն աղաչանք Մովսիսի յաղագս ներելոյ



Նոցա

Նոցա այնքան ազդու էին, մինչզի ա̃ծ անցոյց զայս պատիժ՝ ասելով, յաւուր, յորում այց արարից, ածից 'ի վ̃ր ն̃ց զմեղս իւրեանց։ Մովսէս ելեալ 'ի լեառնէ անտի, լուաւ ըզ-զձայն խէլացուոց՝ որք զերգս երգէին. վ̃յ բարկացեալ 'ի վերայ նոցա, ընկէց զտախտակսն 'ի ձեռաց իւրոց և խորտակեաց. ապա առեալ զձուլեալ որթն ոսկի, այրեաց հրով, և դար-ձուցեալ 'ի փոշի, ցանեաց զայն 'ի վերայ ջրոյն և ստիպեաց զի̃էլացիս ըմպել զայն։ Փոխանակ խորտակեալն տախտակաց Մովսէս եգիտ զայլ երկուս տախտակս նման առաջ-նոյն, յորս դրոշմեաց ա̃ծ մատամբն իւրով զնոյն իսկ տասնաբանեայ պատգամսն՝ որ 'ի նախագրեալ տախտակսն էին. յայնմ հետէ կերպարանք Մովսիսի այնքան լուսաւորեցան, մինչզի քօղ արկանէր զերեսօքն 'ի խօսիլն ը̃ն իէլեան բանակին. իսկ 'ի խօսիլն ը̃ն ա̃ծ զքօղն անդրէն բառնայր։

## Օգտակար խրատք։

Ա. Թէպէտ ի̃էլացիք տեսին զսքանչելիսն ա̃ծ 'ի լերինն սինէական և զձայն ն̃ր լուան, սակայն վաղ-վաղակի յետ այնորիկ սկսան պաշտել զորթն ոսկի։ Յայսմանէ երևի, թէ ո՛րքան վարկպարազի են խորհուրդք մարդկան և ո՛րքան անհաստատ է սիրտ նոցա։

Բ. Ոչ զարմացեալ 'ի վ̃ր ծաղկաբերեանն ի̃էլի,



չանեցա

Ջանեցաւ ընչել շնոր · այլ ըստ եղբերխօսութե Մովսէսի անդորոյ զզայութեն:

Ասա՛ տեսանի, թէ չարախօսութիւնք ամբարարանց բազում անգամ դարձուցանեն զմեծամեծ թշուառութիւնս և զաղաւաղութիւնս: Ասա այս չարախօսութի քահանայից վերաւորաքեալ 'ի սեղանոյն չէ պարտ համարել ոչինչաքեայ:

Ջ. Մոռացած տասյ Մովսէսէ, ընէ դատծէցէց զյանցաւորս յաւուր եղբօրն ձերոյ:

Ասպաքէն՝ ոչ միշտ պատուհասէ մեղս անօրէնութե 'ի մի և 'ի նոյն ժամանակի, յորում մեղանչեն մարդիկ, այլ բազում անգամ բարկութի Նորա յուշիկ ընթանայ 'ի վրէժխնդրութի:

## Պատուհաս բարեպաշտութե

Ած կայտնեաց զպատուիրանս իւր 'ի լեառն Սինայ որոտմամբ և փայլատակմամբք. պատճառ սորին քաջայայտ է. որոտն և փայլատակունք սպառնան սատակել զայնոսիկ, որք ժպրհին արհամարհել զպատուիրանս ԱՆ: Աղէ՛ պա՛րտ է մեզ զայսմանէ խորհել յիւրաքանչիւր նուագի լսելոյ մեր զորոտս:

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻԲ.

### Յաղագս Սամփսոնի:

Սամփսոնի տուան չափազանց ուժեղութիւնք մարմնոյ, որք կայանային 'ի հերս նր:



Հարա

Ջարաւ նա 'ի սէր կնոջ ուրուք փղշտացւոյ
հակառակ կամաց ծնողաց իւրոց։ Յաւուր
միում պատահեցաւ նմա առիւծ մի, զոր
պատառեաց ձեռօք իբրև զուլ. յետ միջոցի
ինչ 'ի վերադարձին իւրում եգիտ 'ի բերան
առիւծուն զպարս մեղուաց հանդերձ մեղու.
իսկոյն եառ ընդ իւր զմեղրն և ո՛չ ումեք
յայտնեաց, թէ ուստի եառ զայն։ Ի ժամա-
նակի հարսանեաց իւրոց առաջի եդ բազմա-
կանացն զառեղծուածս այսու պայմանաւ,
զի եթէ յեօթն աւուրս առեղծցեն նոքա զայն,
խոստացաւ տալ նոցա վեց զերեսուն պա-
տառակալս և զերեսուն պատմուճանս ընտիր
հանդերձից. իսկ եթէ ո՛չ առեղծցեն, ինքեանք
տացեն նմա զայնքան պատառակալս և զպատմու-
ճանս ընտիր հանդերձից։ Առեղծուածն էր
այս, 'ի կերչէ ել կերակուր և 'ի հզօրէ քաղ-
ցըր։ Տկարացեալ փղշտացւոց առեղծանել զա-
ռասպելն զայն, յանկուցին յիւրեանցն կոյս
զկինն սամփսոնի, որ ցայն վայր անդադար ե-
կաց, մինչև հնարիւք իմն ծանեաւ յառնէն
զմիտս առեղծուածոյն և ծանոյց փղշտացւոց։
Յետ եօթն աւուրց ասացին փղշտացիք ցսամփ-
սոն, զի՞նչ է քաղցրագոյն քան զմեղր, և զի՞նչ
հզօրագոյն քան զառիւծ. պատասխանեաց սամփ-
սոն, եթէ ո՛չ ձնչեալ էր ձեր զերինջն իմ,
ո՛չ առեղծանէիք զառասպելն. ապա սպանեալ
զերեսուն փղշտացիս, ետ զհանդերձս նոցա
այնոցիկ, որք լուծին զառասպելն։ Իսկ իբրև
կան

կամեցաւ նա ածել 'ի տուն զկին իւր, հայր
աղջկանն ետ զդուստրն այլում 'ի կնութիւն.
յայնժամ գնացեալ սամփսոնի 'ի դաշտն կալաւ
զերեք հարիւր աղուեսուն, զորս կապեալ ձետ
ընդ ձետ, և ընդ մէջ իւրաքանչիւր երկուց
ձետոցն կապեալ զմի մի ջահս վառեալ՝ արձա-
կեաց զն̃ս յարտորայս փղշտացւոց, որոց յան-
չափս որոմնեալ վ̃ն այսր զրկանաց, այրեցին
զկին սամփսոնի և զտուն հօր նորա. յետ այ-
սորիկ սամփսոն կալեալ մատնեցաւ 'ի ձեռս
թշնամեաց, բայց նա խզեալ զկապանս, ծնօ-
տիւ իշոյ եհար զհազար այր։ Յայլում ժա-
մանակի 'ի պատել պաշարել փղշտացւոց զքա-
ղաքն գազայ, ուր կայր սամփսոն առ հար-
ձին իւրում, յարուցեալ զմէջգիշերաւն թա-
փեաց զդրունս քաղաքին, և խորտակեալ զայ-
նոսիկ եհան 'ի գագաթ լերինն. յետոյ սիրեաց
նա զկին ոմն դալիլա անուն, զոր պատրեցին
խոստմամբ փղշտացիքն, զի ազդ արասցէ ն̃ց թէ
յ'ինչ կայանայ այնքան մեծ զօրութիւն սամփսոնի։
Սամփսոն հնարիւք իւրովք պատրեաց զնա
երիցս. նախ՝ թոյլ ետ նմա կապել զինքն եօ-
թըն առասանօք. յետ որոյ ասաց ցնա դալիլա
սամփսոն, մերձեցան այլազգիքն. 'ի նոյն իսկ
րոպէի խզեաց սամփսոն զառասանսն իբրև
զքուղ մի անպիտան։ Երկրորդ անգամ ետ
կապել զինքն նոր տոռամբք. և յասել դալի-
լայ ցնա վերստին, թէ այլազգիքն գան աստ,
նոյնժամայն ուժեղն այն սամփսոն յարուցեալ

խզեաց զոտոունս իբրև զթել․ յերրորդ ան-
գամն դալիլա վարսեալ զհերս նորա ցցով ը̄
որմն, ասաց՝ սամփսոն, մերձեցան փղշտացիքն․
և սամփսոն կորզեաց յորմոյ անտի զցիցն հե-
րովքն հանդերձ։ Ի վերջոյ յանհնահանջելի թա-
խանձանաց դալիլայ պարտաւորեցաւ սամփսոն
թաքուն յայտնել, թէ ա̄մ ուժեղութ̄ի նորա
կայանայ ՚ի հերս․ և ահա՛ հրամայեաց դալիլա
կոչել զփղշտացիս յարձակել ՚ի սամփսոն, և
ինքն ննջեցուցեալ զնա ՚ի վերայ ծնկաց իւ-
րոց, եգերծ զհերս նր̄․ զարթուցեալ սամփ-
սոնի ՚ի քնոյ՝ գիտաց, թէ բարձի թողի արա-
րաւ յա̄յ․ յայնժամ կալեալ զնա փղշտացւոց,
բրեցին զաչս նորա, և կապեալ կրկին շղթա-
յիւք երկաթիւք, ետուն նմա աղալ ջր-
բեան։ Եւ իբրև բուսան հերք գլխոյ նորա
յետ գերծելոյն, դարձաւ ընդ նմին և նա-
խնականն կորուսեալ զօրութ̄ի նորա․ յորում
ժամանակի՝ իբրև խմբեցան փղշտացիք ՚ի կա-
տարումն մեծ հանդիսաւորութ̄ե ՚ի պատիւ
դագոնայ, սամփսոն էր տեսարան կատականաց
նոցա։ Տունն՝ յորում ժողովեցան երեք հա-
զար դիտողք՝ կանգնեալ և հաստատեալ կայր
՚ի վերայ երկուց սեանց, զորոց բուռն հարե̄
սամփսոնի կործանեաց զտաճարն, և մեռաւ
ընդ ատելեաց իւրոց․

Օգտա

## Օգտակար խրատք ։

Ա․ Ո՛չ է պարտ արգոյ մտանել յանծանօթութեան տանց համաձայնութեամբ ծնողաց երեխանց ։

Զայս արար Սամփսոն, վ՟յ և տանջեցաւ ։

Բ․ Անզգամութ է յանձնել կանանց գաղտնիս ։

Սամփսոն զանհամբերելի թշուառութիւն կրեաց վ՟նկ, զի զմիտս առեղծուածոյն և զխորհուրդն՝ ո֊րով ուժաւորեալ էր՝ յայտնեաց կնոջն ։

Գ․ Ըստ բանին Սիրաքայ, ըէ գինի և կանայք ապստամբեցուցանեն զիմաստունս ։

Սամփսոն փորձեաց զայս յանձին իւրում ․ զի Դալիլա նախ զրկեաց զնա 'ի զօրութենէ, ա֊պա 'ի տեսանելեաց, հուսկ յետոյ և 'ի կենաց ։

## Պատուէրք բարեպաշտութե ։

Թէ քանի՛ բազմադիմի թշուառութեց տարաբանիկ ածանէ զմեզ հեշտասիրութիւն, զայս տե֊սանեմք 'ի Սամփսոն ։ Նախ՝ զրկեցաւ նա 'ի կենաց ․ ապա կորոյս զաչսն, և յետոյ մեռաւ ընդ աւերածովք տաճարին ։ Հանապազ յանդի֊մանս դիցուք երևակայութե, թէ ուր հասուցին մոլութիւնք զՍամփսոն, և օժանդակութե ա՟ն անձ֊նապահ լիցուք յանկմանէ 'ի մեղս ։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԽԷ։

## Յաղագս Սամուէլի։

Եղկանա ունէր զերկուս կանայս, յորոց մին Աննայ կոչիւր, իսկ միւսն Փենաննայ. Փենաննա էր որդեծին, այլ Աննայ ամուլ, և վասն այսորիկ առաջինն հալածէր և զրկէր զվերջինն։ Ու իբրև այլ ամ մարդիկ եկեալ 'ի տաճար տեառն ցնծային, յայնժամ լայր Աննայ։ Թէպէտ այր նորա Եղկանա մխիթարելով զնա ասէր, ո՞չ ապաքէն լաւ եմ ես վ̃ քո տասնապատիկ քան զորդիս. սակայն կայր մնայր նա տակաւին տխուր, և ուխտադրէր, զի եթէ Տէր պարգևեսցէ նմա զորդի, նուիրեսցէ տն̃։ Քահանայն Հեղի նստեալ առ դրան եկեղեցւոյն՝ ետես, զի աղօթէր Աննայ. իսկ որովհետև Աննայ զշրթունս միայն շարժէր, և բանիւ ձայն ինչ ո՛չ հանէր, վ̃յ և կարծեաց Հեղի՝ թէ քաղցուալից է նա. նմին իրի և ասաց ցնա՝ մինչև ցե՞րբ կայցես յարբեցուն, թափեա զգինիդ։ Աննայ պատասխանի ետ նմա, թէ ես կին եմ տգաւոր, և արդէն յայտնեմ առաջի տն̃ զբեկումն սրտի իմոյ. յայնժամ ասաց ցնա Հեղի՝ ե՛րթ 'ի խաղաղութեան, Տէ՛ր Իէլի կատարեսցէ զխնդրուածս քո։ Յետ այսորիկ Աննայ ծնաւ զորդի, և անուանեաց զնա Սամուէլ, զոր մատուցեալ 'ի տաճարն, եած-



առ

առ հեղի քահանայ և յանձն արար 'ի նա. իսկ Աննա վերերգեաց զերգ գոհաբանական յաղագս լսելոյն խնդրուածոց իւրոց: Սամնեալ սամուէլի յորբունս հասակի, կարգեցաւ պաշտօնեայ տն̃, մայր որոյ 'ի գալ իւր 'ի տաճարն յաղագս տարեկան զոհագործութեան, բերէր միշտ նմա զմի մի փոքրիկ կրկնոց կարեալ ձեռօք իւրովք, այլ վիճակ սամուէլի յայնմ տան յոյժ վտանգաւորեալ էր. վս̃ զի որդիքն հեղեայ՝ չարաճարոյ էին, ուրեմն և զբարս սամուէլի հեշտեաւ կարէին ապականել: Ամ̃ ինչ մատուցեալ նոքօք 'ի պատարագ Տն̃ Այ̃ արհամարհ իմն էր մարդկան. քանզի հանեալ զմիսն 'ի սանէ ինքեանց ուտէին, և յարգելուլն նոցա զայն, նոքա անամօթաբար յափշտակէին զայն՝ որ ինչ լաւագոյն թուէր ինքեանց. և միանգամայն ունէին ընդ կանայս զաններելի կենցաղավարութի, այլ սամուէլ խոյս տայր յամ̃է, որ արգելեալն էր. և որպէս Այ̃ նմանապէս և մարդկան էր սիրելի, և վերջ եղև մեծ մարգարէ տեառն:

---

## Օգտակար խրատք:

ա. Չէ՛ պարտ [illegible] 'ի վերայ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]:

Յայսմ մեղաւ հեղի քահանայն, որ զալոթ-կերն աննայ համարեցաւ արբեալ:



Ի

Զ. Ի հուէն մեր զնախոտ էջ, պարտինք հաստատել զնոյն :

Զայս արար անձնայ, որ ընծայաբերեաց զոր- դին իւր զսամուել ի տուն տեառն յամենայն խոստման իւրոյ :

Է. Չէ պիտոյ տանել զերեխայս ցուցանեալ ան- ջանց :

Սամուէլ քաջ դիտելով զայս կարգ, չեղեւ ա- նառակ ըստ օրինակի հեղեայն որդւոց :

## Պտուղք բարեպաշտութեն :

Բաշխանայն հեղի ունէր զչարաբարոյ որդիս . Սամուել եւս զվատակենցաղութեն բնաւորութեն նոցա, սակայն օրինակօք նց ոչ անկաւ ի մեղս, և շարունակեաց պահել ըզ ճանապարհ բարեպաշտութեն : Որդիք անշուշտ պարտին փախչել յանպարկեշտագնաց ընկե- րութեց, և այնուհետեւ կատարել իբրև զսամուել զանկնկալուն ծնողաց իւրեանց :

## ԳԼ. ՏԱՍՆԵՒՈՒԹՆ. ԺԸ:

### Յաղագս խորհրդոյն Հեղեայ .

Որովհետև տհաճ էր յոյժ Սամուէ- լի, որ հեղի զորդիսն իւր ոչ կրթէր խրա- տուք, վասնորոյ և առաքեաց առ նա զմար- գարէ յայտնել, թէ կործցէ տուն նորա .

և

և 'ի վերայ այսր ամի հրամայեաց ած ասել նմա զայսոսիկ բանս, զփառաւորիչս իմ փառաւորեցից, և զորս արհամարհեն զիս, արհամարհեցից: Ապա յայտնեաց Ած սամուէլի, թէ տունն հեղեայ պատժեսցի. և յառաջնումն նուագի կոչեաց զսամուէլ, որ ննջէր 'ի տաճարին՝ այսպէս, սամուէլ. մանուկս այս կարծելով, թէ քահանայն հեղի կոչէ, եկն առնա և ասաց, ահա՛ ես, զոր կոչեսդ. այլ հեղի ասաց նմա, չէ իմ կոչեալ զքեզ, ե՛րթ և հանգի՛ր: Տր կոչեաց զնա միւսանգամ նոյն բառիւն սամուէլ. փութացեալ սամուէլի առ հեղի ասէ ցնա՝ ահաւասիկ եմ, դու կոչեցեր զիս. այլ հեղի հրամայեաց նմա ՟Բ կրունկն դառնալ՝ ասելով, չէ իմ կոչեալ զքեզ որդեակ իմ՝ երթ և հանգիր: Յուսկ հետոյ կոչեաց Ած և երրորդ անգամ՝ սամուէլ, և սամուէլ վերստին դիմեաց ճեպով առ հեղի քահանայ. յայնժամ հեղի իմացաւ, թէ Ած կոչէ առ մանուկս այս. ասաց ցսամուէլ, եթէ դք միւսանգամ կոչեսցէ զքեզ, տուր պատասխանի՝ խօսեա՛ց Տր՝ քանզի ծառայ քո պատրաստ է ունկն դնել բանից քոց. և սամուէլ արար զայս: Ած յայտնեաց նմա, թէ կամի պատուհասել զտունն հեղեայ, վն այնորիկ, զի նա գիտելով զանպիտանութի որդւոց իւրոց, ո՛չ խստիւ հայր 'ի նոսա, որպէս օրէնն է հօր. Ընդ առաւօտն եհարց հեղի ցսամուէլ, թէ՝ զինչ խօսեցաւ ընդ նմա Ած. այլ նա երկուցեալ թագոյց 'ի



նմանէ;

նմանէ զխնկունին. ասաց նմա Հեղի՛, ոչ ողորմեսցի
քեզ Տր, եթէ ծածկեսցես ինչ յինէն. յայն-
ժամ Սամուէլ բացածանոյց նմա զամ առանց
իրիք թագնուէ. Հեղի ասաց առ այն, թէ տէր
առնէ, զոր ինչ և կամի: Վաղվաղակի յետ
այնորիկ գնացին իսրայէլացիք զօրօք համդերձ ըն-
դէմ փղշտացւոց, ուր հարկէր գնալ և որդւոցն
Հեղեայ՝ տանելով զտապանակն ուխտի ընդ իւ-
րեանս: Ծերունին Հեղի նստեալ առաջի
դրանցն սպասելով սպասէր համբաւոյ զյաջո-
ղուէ պատերազմին. և ահա եկն պատգամա-
ւոր և ասաց, թէ իսրայելացիք յաղթեցան, երկո-
քին որդիք Նր սպանան, և տապանակ ուխտին
գերի վարեցաւ: Լուեալ Հեղեայ զայս համ-
բաւ ողբերգական՝ գահավէժ անկաւ յաթո-
ռոյն յորսայս, և խորտակեաց զողն իւր՝ գո-
լով իննսուն և ութն ամաց ՚ի ծնէ:

## Օգտակար խրատք:

Ա. Ծնողք պարտին անձամբ սաստել պատժոց ՚ի չարախօսութեն Վն̄ հրնուէ շատաչաց:

Օրինակ այսր եղեւ քահանայն Հեղի, որ ոչ բնաւ սաստեաց որդւոց իւրոց յաղագս ան-կարգութեան նոցա, որոյ վասն և վշտագնեցաւ ՚ի ծաղկեալ ծերութեան անդ իւրում:

Բ. Թագաւորութեն՝ ցուցանէ անհնազանդութիւն մարդկանն այն-

 բան

ճան զերկայն, մինչև և ճանաճեալ վարեն զկեանս ՚ի ցանկութիւն, վասն զի ողորմել անհա-ճոյքն պատուհասի ցնդ:

Որովհետև որդիքն հնելեայ անմիջաբար ձեռն օք մատնամուխ ՚ի պատարագ աղն լինէին, վասն որոյ ան ՚ի պատիժ գրգռեցաւ և պատժապարտն:

Գ. Ո՛րքան էին ամբարշտութիւն ոչ՝ հերքեն. հանդերձ էին ամ՝ ոչ մեր ներքին զէնքնամտութ երկեր պարգևս նմա:

Պատանին ուխտ եր աւագին որդւոյ Իեղոն-ցոյ, այլ որովհետև քարոզ ձեռ օք անդր-նաց, նորին աղաչանաւ և մատնեցաւ ձեռ ոց փղշտացւոց:

## Պատուէրք բարեպաշտութե՟:

Հեղի քահանայն յանչափս թողլոյ զոր-դիս իւր անսաստ, և խնդրել ըստ ամ գոր-ծողութիւնս նոցա, այլ ըստ դատաւորն արդար ոչ եթող անպատիժ զնոցայն անիրաւութիւն. և հայ-րն և որդիք յանկարծաթափ համբուրեցին զմահ: Ո՜վ, քանի երջանիկ են որդիք, որոց ծնողք եռանդեամբ և արթուն վարե-ցին զպարտաւորութիւնս իւրեանց ՚ի հրահանգե-լն զնոսա:

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԹ.

## Յաղագս օծմանն Սաւուղայ.

Սաւուղ խնդրէր զկորուսեալ էշս հօր իւրոյ, և չկարացեալ գտանել՝ չոգաւ առ Սամուէլ մարգարէ և խնդրեաց ՚ի նմանէ ցուցանել ինքեան զճանապարհ։ Առեալ սամուէլի զսրուակն իւղոյ՝ եհեղ ՚ի գլուխ նորա և էօծ զնա ըս տն հրամանի, յառաջնորդ իէլացւոց. ելեալ սաւուղայ ՚ի մարգարէէն ընկալաւ զայլ միւս ևս շնորհ, զի զճանապարհայն էջ ՚ի վերայ նորա հոգի տն և սկըսաւ նա մարգարէանալ. ուստի և ծագեցաւ առածս թէ՝ և սաւուղ ընդ մարգարէս իցէ։ Եւ իբրև հաճեցաւ ժողովուրդն ընտրել զնա թագաւոր, թագեաւ նա ՚ի կարաւանի. և ՚ի հանելն զնա անտի, երևեցաւ նա բարձր. քան զամենեսեան թիկամբք չափ ՚ի վեր։ Սմին իսկ սաւուղայ միանգամ՝ հրաման ետ ած սատակել զամաղէկացիս և զանասունս նոցա, այլ սաւուղ էանց զտն հրամանաւ, և խնայեաց յարքայն ագագ և յընտիր ոչխարս նց. յայնժամ սամուէլ մարգարէ ասաց ցնա ՚ի բերանոյ տն, փոխանակ զի արհամարհեցեր դու զհրաման տն, վսյ և նա զահավէժ ընկեցէ զքեզ յաթոռոյ թագաւորութե։ Թէպ սաւուղ առ ՚ի գտանել թողութի անհնազանդութե իւրոյ

ասաց

ասաց, թէ կամէր մատուցանել զանասունս պատարագ Ա.Յ, այլ Ս՟Ի մարգարէին պատասխանի արարի նմ՟, թէ հնազանդութիւն լաւագոյն է քան զողջագործութի՟. և յետ այսորիկ ըս՟ հրամանի տ՟ն եմուտ 'ի սաւուղ ոգի չար, որ նեղէր զնա յոյժ յոյժ. սակայն 'ի հարկանել դաւթի զքնարն առաջի նորա, իսկոյն այսն չար խոյս տայր 'ի նմանէ: Զկարճահասակս զայս դաւիթ էօծ ա՟ծ՝ թագաւոր 'ի ձեռն մարգարէին սամուէլի փոխանակ սաւուղայ. որոյ վ՟ս և սաւուղ կամէր սպանանել զնա, այլ ա՟ծ թոյլ չէտ կատարել այսմ չարագործութե՟: Յետ ա՟մի զօրաժողով եղեն փղշտացիք ը՟դէմ սաւուղայ, յորում ժամանակի և թէպէտ խնդրեաց նա յա՟յ զյառաջադիմութի՟ ինչ 'ի պատերազմի անդ, այլ անպատասխանի մնաց յա՟յ. ապա գնաց սաւուղ առ կին մի վհուկ, որ կախարդանօք իւրովք եցոյց նմա զըստուեր իմն, որ պարունակէր յինքեան զկերպարան մեռեալն սամուէլի. վերակոչեալն ոգի ասաց ցսաւուղ, ը՟էր անհանգիստ արարեր զիս. սաւուղ ետ պատասխանի, ա՟ծ ելք զիս, և ես կոչեցի զքեզ ցուցանել ինձ, թէ զի՞նչ արասցից. որում յայտնեաց այսն թէ, ա՟ծ յընթացս այսր պատերազմի մատնեսցէ ըզժողովուրդն իէ՟լացւոց 'ի ձեռս փղշտացւոց. և արքային ասաց նա զայս՝ յեգուց դու և որդիք քո եղիջիք ը՟իս: Յաւուրն երկրորդի իէ՟լացիք հարան, և երեք որդիքն արքային

անկան 'ի տեղւոջն ճակատամարտութեանն: Այնժամ հրամայեաց արքայն կապարճակրի իւրում սպանանել զինքն. այլ 'ի չառնուլ նորա յանձն մխել զձեռն իւր յօծեալ ա՟ծ, յայնժամ թաւալեալ անկաւ 'ի վ՟ր սեփհական սուսերոյ իւրոյ, զորոյ հատեալ փղշտացւոց զգլուխն տարեցին ը՟ ա՟մ կռատունս աշխարհին այնորիկ. իսկ զմարմինն կախեցին զպարսպէն բեթսանայ.

## Օգտակար խրատք.

Ա. Զոհք, որք չէին ըստ հրամայելոյ, այլ ընդդէմ հաճոյից արարելոյ՝ տհաճ էին ա՟յ:

Սակայն սաւուղ ոչ մատուցեալ 'ի պատարագս զկենդանիսն՝ զորս պատուիրեցաւն նմա սպանանել՝ առնէր առ 'ի շահել զնոսա, թէ կամէր զայնոսիկ պատարագս մատուցանել ա՟յ. այլ Ս՟ղ զայրացաւ, և հրամայեաց ասել նմա թէ հնազանդութիւն լաւագոյն է քան զզոհ.

Բ. Ուստի ելանէ հոգին ա՟յ, անդր բնակին չար դևք.

'Ի լքանել հոգւոյ ա՟յ զսաւուղ, խեղդոյն եմուտ և բնակեցաւ 'ի նմա սատանայ առ 'ի տանջել զնա.

Գ. Ո՛չ երբէք թողու ա՟ծ զմարդիկ, մինչև նոքա ոչ թողցեն զնա.

Վ՟ն այսր պատճառի հրամայեաց ա՟ծ ասել ցսաւուղ արքայ, փոխանակ զի արհամարհեցեր դու զհրամանս տեառն, և տ՟ր արհամարհեսցէ զքեզ.

### Պտուղք բարեպաշտութե՟ան ։

Սաւուղ ո՛չ կասկածեցաւ անցանել զպատուիրան տ՟ն. յետոյ զկեղծաւոր ձեռս իւր՝ արեամբ լուայ. ապա դիմեաց առ դիւթութի՟ն, և ՚ի վախճանի յուսահատութե՟ սպան զանձն իւր ։ ՈՏ՟, նախապահպանեա՛ զմեզ ՚ի դրժողութե՟ պատուիրանաց քոց, և յայնժամ ո՛չ ընդու անկցուք ՚ի ներքոյ և թշուառութե՟ց և վշտաց ։

## ՊՂՏՈՐՈՒԹԻՒՆ. Լ ։

### Յաղագս գողութեան ։

Սաւուղ արքայն պատերազմէր ը՟ փղշտացիս. ՚ի կալ նոցա ՚ի դաշտին ճակատ առ ճակատ, ՚ի բանակէ անտի փղշտացւոց ել վեթխարի ոմն գողիադ անուն, բարձրութի՟ն նո՟ր վեց կանգուն և թզաւ, զգեցեալ զզրահ, որոյ կշիռն էր հինգ հազար սիկղ. պատեան տիգին սոսորուքն էր իբրև զտորի ոստայնանկաց ։ Սոյն այս հսկայ արհամարհելով զիէլացիս, պահանջէր՝ զի ընտրեսցեն նոքա ՚ի ճակատէ իւրեանց զօրական մի, որ ելցէ ՚ի մենամարտութի՟ ը՟ նմա այսու պայմանաւ, զի եթէ նա սպանցէ զգողիադ, փղշտացիք հնազանդեսցին նմա. իսկ եթէ գողիադ մեռուսցէ ըզ-նա, իէլացիք ծառայեսցեն փղշտացւոց ։ Բան-



քը՟

քըս այսորիկ գրաւեցին զսաւուղ և զամ իս-
րայէլացիս յերկիւղ մեծ և ՚ի սարսափ. և զա-
ւուրս քառասուն գողիաթ խօսէր զայնոսիկ
բանսն ամբարհաւաճութ. ։ Ի վերջոյ հրամա-
յեաց սաւուղ հռչակել, զի եթէ ոք սպան-
ցէ զգողիաթ, տացէ նմա զդուստր իւր կը-
նութ. ։ Լուեալ զայս կարճահասակին դաւթի,
՚ի մտի եդ ՚ի մարտ մտանել ընդ հսկային
այնմիկ ։ Դաւիթս այս, որում զգեցուցանել
հրամայեաց սաւուղ զսաղաւարտ և զզրահս,
՚ի փորձ եդեալ զայս գործիս, եգիտ անվա-
յելչական իւրեան, վն մերկացեալ զայ-
նոսիկ, եառ ՚ի ձեռս իւր զցուպ և զպար-
սատիկ, իսկ ՚ի պայուսակ իւր հովուական եդ
զողորկ քարինս հինգ՝ ընտրեալս ՚ի հեղեղա-
տէն ։ Ելանեալն նր ՚ի մէջ գողիաթու, ասաց
գողիաթ, մի՛ թէ շուն իցեմ ես, զի գաս
դու ՚ի վերայ իմ ցպով և քարամբք. դաւիթ
ետ պատասխանի, դու եկիր յիմ վերայ սրով
և գեղարդեամբ և ասպարաւ, այլ ես գամ ՚ի
վերայ քո անուամբ տն զօրութեց ։ Ձգեալ
դաւթի զձեռն իւր ՚ի մախաղն անդր, և հա-
նեալ անտի զքար մի՛ ընկէց պարսատիւ և
այնպէս եհար հզօրեղապէս զճակատ փղշտացւոյն,
մինչև անկանիլ նմա տապաստ յերկիր. ապա
վաղ ՚ի վաղ ընթացեալ առ նա, մերկապատեան
զսուրն եհատ զգլուխ նր ։ Տեսեալ փղշտա-
ւոց զախոյեանն իւրեանց մեռուցեալ՝ խու-
ճապեցան ՚ի փախուստ. իսկ իէլացիք սա-


ցան

ցան զխաւարաւոր յաղթութի։ Ի դառնանալ սա-ւուղայ ՚ի պատերազմէ անտի, կանայք իէլաց-ւոց երգեցին զայս երգ, սաւուղ յաղթեաց հազարաց, իսկ դաւիթ բիւրուց. երկե-ցաւ այս սաւուղայ յոյժ անվայելուչ և տհաճ, և յայնմհետէ սկսաւ նա ընդ ակամբ հայիլ ՚ի դաւիթ։ Դաւիթ չառացաւ զդուստր սա-ւուղայ՝ զի նա տուաւ այլում ՚ի կնութի. և ապա եմուտ ՚ի սէրս սէր ընդ յովնաթա-նու որդւոյ սաւուղայ, և մեղքող միւս դուստր սաւուղայ սիրեաց զնա. յայնժամ հրամայեաց սաւուղ յայտնել դաւթի, թէ նա պարտի բերել առ ինքն զանթլփատութիս հա-րիւր փղշտացւոց, եթէ ցանկայ ունիլ զդ-ուստր նր իւրեան ՚ի կնութի։ Սաւուղ կար-ծեր, թէ դաւիթ անշուշտ մեռցի ՚ի փղշտաց-ւոց, այլ նա պաշտպանեալ յո՛յժ յառաջա-դէմ յիւրումն գտաւ ձեռնարկութե. նմա յաջողեցաւ ապացուցանել, թէ ապան զեր-կու հարիւր փղշտացիս. յետ որոյ սաւուղ ետ նմա զմեղքող դուստր իւր։

## Օգտակար խրատք։

ա. Ո՛չ է պարտ հզօրին յիւրն պարծիլ ՚ի զօրութի։ Թէպէտ դողիաթ հասակաւ էր բարձր կրկնա-պատիկ քան զդաւիթ, այլ սա յաղթեաց նմա։

բ. Կա՛ն ՚ի մէջ շինականաց են որք և բարեպաշտք և առաքինիք։

 Դաւիթ

Գթութիւն խաղաց ՚ի միտս ոչ հայհոյութեամբ և անիծիւք, այլ սաստ հնչային՝ գամ ՚ի վերայ քո անուանս ամ՟ն զօրութեանց։

Դ․ Այր առաքինի ամ՟ ուրեք գտանէ շնորհա-ծու, ընէր և չ յարգանս։

Յովնաթան արքայորդին ընկալաւ զդաւիթ ինքեան բարեկամ, և դուստր արքային արժանաւորեաց զնա սիրոյ իւրում։

## Պտուղք բարեպաշտութե՟ն։

Ողողիադն սոսկալի՝ որոյ հասակին բարձրութի էր վեց կանգուն՝ հարուածէ դաւիթ միանգամ քարանձգութբ և եթ։ Արժանեալ գայս ՚ի սբ գիրս ՚ի ճշմարիտ բանս Ած՟այինս, ես կարծեմ, թէ աստանօր պայծառ է գոլ նկարագրութի իմիք զօ, դողիադ մարթէ կոչել զսատանայ, իսկ յս՟ ք՟ս զտեղի ունի դաւթի։

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ․ԼԵ․

### Յաղագս Դաւթի հալածելոյն ՚ի Սաւուղայ։

Արքայն սաւուղ ասէր ցորդի իւր, թէ կամի սպանանել զդաւիթ․ իսկ յովնաթան կանխազգուշացուցեալ դաւթի՝ միջնորդ լինէր վս՟ նորուն առաջի հօրն։ Ապա աղաղակեալ յետ այսորիկ ընդ-կեալ սաւուղայ ՚ի չար այսոյ, ՚ի միտ եւս ան-



տուցա

ուսուցանել զդաւիթ քնարահար, այլ տէգն չե-
ղեալ ը՟ կողմն հարաւ յորմն և դաւիթ եկաց
մնաց անվնասն. ապա հրամայեաց սաւուղ
կալնուլ զնա և ունել ը՟ պահապանօք ՚ի
տան նորա, այլ կինն նորա մեղքող իջու-
ցեալ զդաւիթ ընդ պատուհանն, եդ ՚ի
մահճին փոխանակ նր՟ա զարձան մի և ասաց,
թէ հիւանդ է դաւիթ. սաւուղ նոյնհե-
տայն հրամայեաց ածել առ ինքն զհիւանդն
դաւիթ մահճօք հանդերձ, և որք առաքե-
ցանն, գնացեալ գտին զարձանն և եթ. իսկ
մեղքող յետ այնորիկ ասէր, թէ դաւիթ մահ
սպառնայր նմա, եթէ չիջուցանէր զնա ՚ի
պատուհանէն ։ Ի սմին յայսմ միջոցի գնաց
դաւիթ առ անքոս արքայ գեթայ. սակայն
գիտացեալ փութանակի, թէ՝ և անդր անհնա-
րին է նմա կալ յանդորրու, ձևացոյց զինքն
խելագար և բաղխէր զդրունս քաղաքին.
յայնժամ անքուս արքայ ասաց հպատակաց
իւրոց, մինթէ ո՞չ գոն յիմում տէրութե՟ խելա-
գարք, պարտէ արտահանել զխեղաբարոյդ.
Եւ դաւթի ոչ գտեալ ուրեք զտեղի ան-
վտանգ, թագեաւ յայրի միում. դէպ եղև
զի և սաւուղ ՚ի նոյն իսկ այր եմուտ, յայն-
ժամ զինուորքն խորհուրդ ետուն դաւթի
վարիլ ը՟ սաւուղայ ը՟ հաճոյից իւրոց և ըս-
պանանել զթշնամին իւր. այլ դաւիթ ոչ յօ-
ժարէր ձեռնամխիգ լինել յօծեալ տն՟, եհատ
միայն յուշիկ զտոտունն ըդկին սաւուղայ,



զոր

զոր մերկացեալն էր Սաւուղ. իսկ յելանելն
երկաքանչիւրոց յայրէ անտի, Դաւիթ 'ի հե-
ռաստանէ ցուցանելով նմա զտուտն լօդկի
նր̅ ասաց, եղիցի տր̅ դատաւոր ը̅ իս և ը̅
քեզ: Սաւուղ պատասխանեաց նմա արտաս-
ուելով, դու արդար ես քան զիս. բայց մո-
ռացել Սաւուղայ զայն, զինուորեցաւ վերստին
ը̅ դէմ Դաւթի: Յաւուր միում 'ի նիրհել
Սաւուղայ 'ի բանակին անդ, եմուտ Դաւիթ 'ի
տաղաւար նր̅ և գողացաւ զտէգ և զբաժակն,
որք եդեալ կային 'ի սնարից Սաւուղայ. ոչ ոք
յայնժամ սթափեցաւ 'ի բովանդակ բանակին
անդ, այլ ամենեքեան ը̅ կամաց տն̅ թմբրել կա-
յին 'ի նինջ ծանրութե: Իսկ առաւօտն վե-
րելակեալ Դաւթի 'ի գագաթ լերին միոյ,
եցոյց զտէգն և զըմպանակն. յայնժամ ասաց
Սաւուղ, ողորմաբար վարեցայ ես. ապա օրհ-
նելով զնա՝ ասաց, օրհնեալ ես դու որդեակ
իմ Դաւիթ, արա՛ անկասկած զոր կամիս. Ա-
յետ այսորիկ Սաւուղ խոցեալ զինքն սուսե-
րաւ, իսկ Դաւիթ փոխանակ նր̅ ամբարձաւ
'ի գահ թագաւորութեան:

## Օգտակար խրատք:

ա̅. Զի պարտ որդւոց հնազանդել ծնողաց, եթէ
նոցա հրամայեն զինչ իցէ վնասակար: Յայսպիսի
դէպս ասացեալ լաւ է հնազանդ լինել ա̅յ
քան ծնողաց:



Օ

Զայս արար Յովնաթան, որում թէպէտ և սա-
ւուղ հայր իւր հրամայեաց մեռուցանել զդա-
ւիթ, այլ նա խորհուրդ ետ դաւթի խոյս-
տալ 'ի վտանգէ անտի:

Թ. Ո՞վ է օրէն ձեռնամուխ չլինելոյ յօծեալսն Տն:

Զայս արար Դաւիթ, որ թէպէտ հարուստ ան-
գամ ունէր միջոցս մեռուցանելոյ զՍաւուղ,
այլ միշտ փախչէր 'ի չարագործութենէ անտի:

Ժ. Ո՞ր էին [illegible] հօրն, այնն ոչ է դը-
[illegible] էինչ հօրն [illegible] երբեք:

Ս[illegible] [illegible] հօր իւրոյ [illegible]
[illegible], այլ զայս արար առ անհրաժեշտ
հարկի:

## Պտուղք բարեպաշտութէ՟:

Հեզահոգին դաւիթ 'ի բաց [illegible] 'ի վրէ-
ժխնդրութէ՟, թէ և ոսոխին ատելին բազմիցս
անկաւ 'ի ձեռս նր՟. նա յանձն առնոր զերա-
գոյնս այսր գործոյ՝ Ա.Տ՟, որ պահեաց
զայն երջանիկ եւս վերջաւորութ՟: Չէ՟ մեր
գործ վրէժխնդիր լինել 'ի թշնամեաց. դի-
ցուք զայս մեր յՃտ՟. նա միայն է քննազօր.
և պահպանեսցէ զմեզ յամ՟ արկածից:

# ԳԼ. ՏԱՍՆԵՒԹԵՆ. ԺԷ.

## Յաղագս Սողոմոնի:

Որքան դաւիթ հրամայեաց զօրավարաց իւ-

րոց

րում յովաբայ պաշարել զքաղաքն Ռաբաթ , այլ ինքն մնացեալ յեղէմ , յաւուր միում զգնայր 'ի վերայ տանեաց ապարանից իւրոց և ետես զկին մի չքնաղագեղ լուացեալ 'ի պարտիզին ։ Հարցեալ զնմանէ , և խելամուտ եղեալ , թէ նա է Բերսաբէէ կին ուրիայ , հրամայեաց նոյնհետայն ածել զնա առ ինքն , և վարեցաւ իրաւամբք ամուսնոյ ։ Այլ նոր ուրիա չէր զգայու ժամանակաւ 'ի տան , այլ 'ի միասին ը զօրաց արքային կայր 'ի պատերազմի . յայն ժամ հրամայեաց նմ դաւիթ 'ի ճակատէ անտի վերադառնալ 'ի տուն , զի այսուիկ 'ի բաց դիցէ յանձնէ իւրմէ զկարծիս՝ որ վս բերսաբէի . այլ ուրիա ոչ էջ 'ի տուն իւր , այլ անցոյց զգիշերն ը արքային ծառայից . յերկրորդումն աւուր արբեցոյց դաւիթ զուրիա կարծելով թէ նա գինեհարեալ՝ գնասցէ 'ի տուն առ կին իւր . այլ ուրիա և զայս գիշեր անցոյց 'ի պալատանն . յայնժամ գրեաց դաւիթ զթուղթ առ զօրապետն իւր , յորմէ խնդրեաց աշխատ լինել , կացուցանել զուրիա յառաջին դասակարգին անդ յամենասաստիկ պատերազմին , զի մի՛ զերծցի նա 'ի մահուանէ արձակելոյ 'ի ձեռաց թշնամեաց . զայն թուղթ պարտական էր տանել ուրիա , զի անտեղեակ էր պարունակուե այնորիկ . կատարեց յոժար զարքայական զհրաման և ուրիա սպանաւ ։ Բերսաբէէ կին նոր լալ յետ առնն , և յանցանել զսգաւորութեն , արքային ամուսնացաւ ը նմա ։



Ձ. կին

Զկնի ինչ ինչ ժամանակաց առաքեաց տր̃
ա̃ծ առ Դաւիթ արքայ զՆաթան մարգարէ, որ պատմեաց նմա զառակս զայս. ՚Ի քաղաքի միում կային արք երկու, յորոց մին էր հարուստ, իսկ միւսն աղքատ. հարուստն ունէր զմեծ բազմութի̃ անասնոց, իսկ աղքատն զմի միայն ոչխար, զոր ինքն գնեալ էր և սնուցել, որ ոչ զկերակուր՝ նոյնպէս և զըմպելի առնոյր ը̃ նմա ՚ի միոյ ամանէ, և հանգչէր ՚ի գիրկս նր̃. և իբրև եկն հիւր ումն առ հարուստն այն, խնայեաց նա առնուլ զանասուն ՚ի խաշանէ անտի իւրմէ, այլ կալեալ զոչխար աղքատին՝ եփեն առ ՚ի պատիւ եկաւորեալն հիւրոյ:

Լուեալ Դաւթի զառակս զայս սրտմտեցաւ ՚ի վր̃ առն այնորիկ, և ասաց ցՆաթան, կենդանի է տր̃, զի այրն՝ որ արարն զայնքան անիրաւութի̃ մահապարտ է, և հարկ է նմա եօթն պատիկ հատուցանել փոխանակ միոյ ոչխարին. Յայնժամ ասաց Նաթան ցԴաւիթ, դու ես այրն այն: Մարգարէն անուամբս հարուստ՝ իմանայր զարքայն Դաւիթ. բազմութի̃ անասնոց՝ զկանայս արքային. այր աղքատ՝ զանմեղն ուրիա, իսկ միմիայն ոչխար՝ զհրաշագեղն բերսաբէէ: Մարգարէն Նաթան յայտնեաց ապա արքային Դաւթի զպէս պէս պատիժս յո̃յ. այլ Դաւիթ զբոլորն յանձն առեալ ասաց, ես միայն մեղայ առաջի տն̃. Նաթան ետ նմա պատասխանի, թէ պէտ ա̃ծ թողու քեզ զանօրէնութի̃ քո և ոչ մեռանիցիս մահու, այլ փոխանակ զի՝ առիթ



ետուր

ետուր թշնամեաց տն հայհոյել զանուն նորա,
մեռցի որդի քո ծնեալ 'ի Բերսաբէէ. յայն֊
ժամ Դաւիթ շարադրեաց զյիսներրորդ սաղ֊
մոսն, որ սկսանի այսպէս, ողորմեա ինձ Այ
ըստ մեծի ողորմութե քում:

## Օգտակար խրատք:

ա. Պարտաւորութի է կանանց զգուշանալ, չէ մի՛
զոր որչէն 'ի գայթակղութի:

Եթէ չէր մերկացուցեալ Բերսաբէէ զինքն 'ի
պարտիզին, Դաւիթ ոչ լինէր կրկին քակիչ
օրինաց տեառն:

բ. Թագաւորական բանք եղեալ 'ի սրտէ՝ անդրէն
դառնան 'ի սիրտ:

Որովհետեւ մարգարէն Նաթան խօսեցաւ զբանս
յաջողակս 'ի խնթան պղծման, վ՞յ եւ սիրտ Դաւ֊
թի շարժեալ բռնադատեցաւ 'ի բանից նորա:

գ. Որ անպատկառ եղեւ 'ի մեղանչելն, չէ՛ նմա
պիտոյ պատկառել 'ի խոստովան լինելն զմեղս
իւր:

Յորժամ ասաց մարգարէն Նաթան, թէ հա֊
րուստն արժանաւոր մահու՝ է ինքն Դաւիթ,
յայնժամ Դաւիթ բեկեալ սրտիւ խոստովան
եղեւ, թէ մեղայ առաջի Աստուծոյ:

Դաւիթ եղծ զեօթներորդ պատուիրանն, և միանգամայն ոչ կասկածեաց 'ի լուանալոյ զձեռս իւր՝ արեամբ։ Խափանեսցուք զառաջին քայլափոխս մեր 'ի չարիս, առ 'ի նախապահպանել զմեզ և յայլոցն. զի մի մեղք միշտ վարէ զմեզ և 'ի միւսն։

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԼԳ։

### Յաղագս Աբեսողոմայ։

Աբիսողոմ որդի Դաւթի գերազանց հանդիսացաւ չքնաղութ՟բ իւրով քան զա՟մ իէլացիս. 'ի նմա ոչ գոյր ինչ արատ յոտից մինչև ցգլուխ։ Յանկացեալ նորա թագաւորել, աշխատ լինէր գրաւել զսիրտ ռամիկ ժողովրդ՟ն. և կացեալ առ դրանն մերձ 'ի ճանապարհն հարցանէր ցըոլոր անցաւորսն, թէ զի՞նչ ինչ կամ է նց՟ խնդրել յարքայէն. և 'ի յայտնելն նմա ուրուք զբան իւր, տայր պատասխանի, եթէ իրաւացի է գործ քո. բայց չէ՛ ոք առ արքային, որ ունկն մատուսցէ քեզ. ո՜հ, ասէր նա, եթէ ես լինէի կարգեալ դատաւոր ժողովրդեանն, արդարապէս դատէի։ Նա յիւր կերպիւ գրաւեաց և զԱքիտոփէլ խորհրդականն Դաւթի, զոր այնքան պատուասիրէին, մինչև



համ

եմ ինչ, խորհուրդ տուեալ 'ի նմանէ՝ համա-
րուր իբրև հարազատ ասացուած: Յինքն յան-
կուցեալ Ս. Քիստողոմայ զժողովուրդն, սկսա-
խնդրել 'ի հօրէն զհրաման գնալ 'ի Քեբրոն
'ի կատարումն ուխտադրութեն իւրոյ՝ Ս.Յ. և 'ի
հասանիլն իւր անդր, իսկոյն յայտնեաց զանձն
իւր՝ Թագուոր: Ս. յամ տեղեակս լեալ դաւթի
մեկնեցաւ յեղէմէ և եկ 'ի լեառն ձիթաստա-
նի ընթանալով բոկոտն և քամելով յաչաց ըղ-
դառն դառն արտասուս. ստուգեալ, Թէ՝ և
աքիտոփէլ գտանի 'ի Թիւս դաւաճանացն,
խնդրեաց յայ̃ նանրացուցանել զկործանարար
խորհուրդս նր̃: 'Ի սոյն յայսմ փախստեան դէպ
եղև դաւթի այր ոմն 'ի ցեղէն սաւուղայ՝
սեմէի անուն, որ յուղեգնալն ոչ Թէ միայն բա-
նիւք արհամարհէր զարքայն, այլ նաև քարաձիգ
լինէր 'ի նա ասելով, 'ի բա՛ց կաց 'ի բա՛ց կաց ա-
րենարբու և անօրէն: Յայնժամ միոմն յեղերց
ե̃ արքային՝ կամեցաւ գլխատել զնախատիչն
զայն, այլ արքայն արգելեալ նմա՝ ասաց, Թո՛ղ
նախատեսցէ զիս, գուցէ և Տ̃ր հրամայեաց,
զի չարաբանեսցէ դա զդաւիթ: Յետ այսորիկ
եկաւորեցաւ աբիսողոմ յերուսաղէմ համդի-
սամէհուք մեծաւ, ուրանօր 'ի հարցանել նր̃
զխորհուրդ, Թէ զի՞նչ արասցէ, առաջարկեցան
նմա երկու ենԹադրութիւնք. աքիտոփէլ խոր-
հուրդ ետ զհետ պնդիլ դաւթի և սպանանել
զնա նախ քան զզօրաժողովումն [illegible] նր̃. իսկ ա-
ըևոյն քուսի առաջի արար Թէ չէ՛ն [illegible] ե-



ըանել

լանել 'ի պատերազմ առանց ժողովելոյ զզօրս, որովհետև Դաւիթ 'ի գործս ճակատամարտութե̄ քաջ հնարիմաց է ։ Յետ բազմապատիկ կշռադատութե̄ց արհամարհեալ աբիսողոմայ զիմաստուն խորհուրդն աքիտոփելայ, հետևեցաւ խորհրդոյ ծերոյն քուսեայ, և այս ոչ թէ ըստ պատահման եղև, այլ այնպէս էր հաճոյ Տ. Ն. և քուսի ջանաջնայր միշտ լինէր առաջ տանել զայս_ ամ իրողութե̄ դաւթի ։ յայնժամ ժողովեալ դաւթի զամենեսեան, որք ընդ իւր էին, էանց զգետն յորդանան ։ իսկ աքիտոփէլ տեսեալ թէ խորհուրդք իւր նանրացան՝ խեղդեցաւ ։ և այնպէս ընդ մէջ զօրաց հօր և որդւոյ ծնաւ պատերազմն արիւնահեղ ։ Դաւիթ յարդեալ զխորհուրդս զօրաց իւրոց ոչ գնաց 'ի մարտ, այլ զօրապետաց իւրոց ետ հրաման խնայել 'ի պատանին աբիսողոմ ։ 'Ի սաստկանալ ճակատամարտութե̄ն աբիսողոմ խուճապեցաւ 'ի փախուստ ։ այլ երբև կամէր անցանել մերձ 'ի թաւ կաղնի մի, գեղեցիկ հերք նորա փաթութեցան յոստս այսր ծառոյ և 'ի կախ մնաց զնմանէ ։ Ջորին, յոր նայն աշտանակեալ էր, էանց թռուցիկ 'ի ներքոյ նր̄, իսկ անհարազատն որդի եկաց մնաց յօդն ։ Յովաբ զօրապետ դաւթի տեսեալ զայս, էառ զերիս նետս, և դիպեցոյց զայնս յաբիսողոմայն 'ի կուրծս ։ Մարմին նորա ընկեցաւ 'ի գուբ մի և ծածկեցաւ քարակուտիւ ։ Համբաւ իրողութեն ուժգին վշտահար արար զդաւիթ, որ



'ի

Ի ցաւս և 'ի տագնապս բազմիցս ասէր, որ-
դեակ իմ աբիսողոմ, աբիսողոմ որդեակ իմ.
երանի թէ ես մեռանէի փոխանակ քո. ապա
դաւիթ հանդիսադրութբ մեծաւ մտանէ արքայն
յերուսաղէմ:

## Օգտակար խրատք:

ա. Ոչէ պարտ հատուցանել չար փոխանակ չարի և հայհոյութիւն փոխանակ հայհոյութե:

Զայս ուսուցանէ մեզ դաւիթ՝ որ ոչն եղև վրէժխնդիր 'ի թշնամանօղն սեմեայ, այլ ասաց թո՛ղ հայհոյեսցէ, տէր անօրինեաց այսպէս:

բ. Խորհրդաւորք չարեաց 'ի վախճանի դատին 'ի գլուխս իւրեանց:

Զայս 'ի կշիռ եդ աքիտոփէլ, որ վն փառաթարեալն իւրոյ խորհրդոյ ոչ զվարձ ընկալաւ, այլ 'ի յուսահատութենէն խեղդամահ եղև.

գ. Աստուած պահպանէ զմիտս նախանձաւորի ծերունեան իշխանութե, և խառնակէ զայն համաձայն կամաց իւրոյ:

Զայս տեսանի յաբիսողոմ, որ անգոսնեաց զիմաստութիւն խորհրդոց աքիտոփէլայ. և այս եղև ո՛չ առ պատահման, այլ ըստ տնօրէնութեան վերնախնամ տեսչութեանն.

## Պտուղք բարեպաշտութե՟ան ։

Ո՛րդեակք հայեցարուք ՚ի կանաչազ֊
գեստեալն կաղնի, որ ծնաւ զպտուղ անտաւոր.
որդւոյն արքայի կախի զայնմանէ. այսպիսի պտուղք
տպաւորեն անհնազանդ և դառնաձայն որդւոց։
Լսէ՛ք որդեակք, որ կործանեալն առէ մեզ,
երկերուք ՚ի վիրաւորելոյ զծնօղս ձեր ան֊
հնազանդութբ՟ ։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԴ ։

## Յաղագս ժանտախտին եղելոյ ՚ի ժողովրդեան Դաւթի։

Արքայն Դաւիթ զրդուեալ ՚ի հպար֊
տութենէ, հրամայեաց թուել զժողովուրդն.
թէպէտ սպարապետն նորա յոլով խափանս ա֊
նէր այսմ խորհրդոյ նորա, այլ արքայն ոչ կա֊
մէր փոփոխել զդիտաւորութիւն իւր. Յետ
մարդահամարին գրուելն դաւիթ զղջացաւ և
սաստ ցաւէր, եւ չարաչար մեղայ ասելով զայս.
Ո՛չ անագան զկնի այսորիկ եկն առ նա մար֊
գարէն Գադ և ասաց, ես առաջի առնեմ
քեզ զերիս տեսակս պատժոց, յորոց զմին
ընտրեա։ Առաջին պատիժն առաջարկեալ ՚ի
մարգարէէն էր եօթնամեայ սով. երկրորդն
եռամսեայ հալածանք ՚ի թշնամեաց. երրորդն
երեքօրեայ ժանտախտ։ Լուեալ դաւիթ զայս

տրտմեցաւ յոյժ, և ապա ասացեալցի կամք քո· արդարադատութիւն և ողորմութիւնք քո մեծ է: Յայնժամ առաքեաց Տէր 'ի վերայ Իսրայէլացւոց զժանտախտ, որով յերիս աւուրս մեռան եօթանասուն հազար անձինք: Ի դարձուցանել սատակիչ հրեշտակին զբազուկ իւր յաւերումն Երուսաղէմ քաղաքի, 'ի գութ շարժեալ Տէրն՝ հրամայեաց նմա նուաճել զձեռս իւր· հրեշտակն կայր 'ի նմին ժամանակի առ կալոյն Ոռնեայ այնպէս մերձ, մինչև կարաց Դաւիթ տեսանել զնա: Տէր, ասաց նոյնժամայն Դաւիթ, ես միայն մեղայ, իսկ զի՞նչ արարին ոչխարքս իմ: Հուսկ յետոյ հարուածն կարճեցաւ, և Դաւիթ կանգնեաց զսեղան 'ի կալ անդր, յորում հրեշտակն դադարեցաւ:

## Օգտակար խրատք·

Ա. Չար խորհրդածութիւնք յառաջ գան ըստ սովորելոյ կերպին:

Մատանոր յիշատակի, թէ Դաւիթ 'ի հպարտութենէ զրգռեցաւ թուել զժողովուրդն·

Բ. Չէ՛ պարտ անգոսնել զխորհուրդ բարի·

Եթէ լսէր Դաւիթ խորհրդոյ սպարապետին իւրոյ, ո՛չ կորուսանէր արդեօք զեօթանասուն հազար հպատակս·

Գ. Յետ գործելոյ զյանցանս զարթնու խիղճն մարդոյ:

Դաւիթ զկնի թուելոյ զժողովուրդն խռովեցաւ յոգի իւր ։

### Պտուղք բարեպաշտութ̄ե ։

Ամբարհաւաճութիւն սովորեաց զԴաւիթ արքայ թուել զժողովուրդն․ այլ Այ̄ վասն այսր բարկացաւ, և Դաւիթ սովորեցաւ ընտրել զմին յերից պատժոց անտի, յետ որոյ ժանտախտիւ հարան եօթանասուն հազար հպատակք նորա ։ Ուշի ուշով աղօթեսցուք վասն մեծաւորաց, զի թագաւորն թագաւորաց զօրհանապազ կառավարեսցէ զմիտս և զգործս ն̄ց ։

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ․ ԼԵ ։

### Յաղագս արքային Սողոմոնի ։

Յետ մահուանն Դաւթի ընկալաւ զթագաւորութիւն որդի նորա Սողոմոն, որում երևեցաւ Տր̄ ՚ի տեսլեան և ասաց, խնդրեա՛ յինէն զոր ինչ կամիս․ և Սողոմոն խնդրեաց յԱյ̄ զշնորհս իմաստութ̄ե և հանճարոյ առ ՚ի բարւոք կառավարութ̄ի ժողովրդեան ։ Այ̄, որում հաճոյական էր այս, շնորհեաց նմա զայնքան իմաստութ̄ի, մինչ չև էր ոք հաւասար նմա ոչ̄ յառաջքան զնա, նմանապէս և զկնի նր̄․ և բաց յայսմանէ պարգևեաց նմա Տր̄ և զայն, զոր



ոչն

ոչ խնդրեաց նա, այսինքն զհարստութիւն, զփառս և զերկարակեցութի՛ն։ Ի սկիզբն անդ թագաւորութե՛ն նո՛ր երկու անբարիշտ կանայք աւիթ ետուն նմա ցուցանել զառաջին փորձ իմաստութե՛ն իւրոյ. երկոքին կանայքս այսոքիկ բնակէին ՚ի միում տան, կորոյ մին յանգէտս հեղձոյց զգիշերային զորդի իւր. ընդ առաւօտն վիճէին նոքա ՚ի վերայ կենդանի մանկանն, և իւրաքանչիւր ոք ՚ի նոցանէ կամէր ունել զնա։ Ի չկարելն ուրուք ստուգել, թէ ո՛ ՚ի նոցանէ իցէ հարազատ մայր նորա, հրամայեաց սողոմօն բերել զսուր և զմանուկն կենդանի կտորել ՚ի մէջ. յայնժամ մի ՚ի կանանց անտի ասաց ցարքայն, տէ՛ր տուք նմա զմանուկն կենդանի, և մի՛ մահացուցանէք. իսկ միւսն ը՛ հակառակն ասէր, թո՛ղ և ո՛չ ումէք ՚ի մէնջ լիցի նա. և ՚ի բանից աստի դիւրաւ կարաց ճանաչել սողոմօն, թէ ո՛ ՚ի կանանց անտի է իսկական մայր մանկանն։ Յետ այսորիկ շինեաց նա տն Տ.Ն զտաճար հոյակապ յեղէմ։ Ան այսր ամենամեծ շինուածոյ ՚ի գործ եղան ամք եօթն. ՚ի կատարել նաւակատեաց տաճարիս այսորիկ, ամպ լուսաւոր հովանի եղև բոլոր շինուածոյն. սողոմօն կացեալ աղօթէր ներդանոյն և տարածեալ առաջի երկնից զձեռս իւր՝ վերընծայէր Տ.Ն զեռանդագին աղօթս. յատկապէս խնդրեաց նա, զի որ լուիցէ մաղթանաց նորա ՚ի պատահելն պատերազմի, սովու կամ ժանտախտի. ապա մատոյց սողոմօն



պատա

պատարագ զքսան և երկու հազար ցուլս, և զհարիւր քսան հազար ոչխարս ։ Ի այս տօնախմբութեան կատարէր նա հանդերձ բոլոր ժողովրդովն զաւուրս եօթն ամենատեսակ պերճապայծառութբ և առատութբ. սակայն իմաստունն այս արքայ սիրեաց զկանայս այլազգեաց, որք միտեցին զմիտս նորա ի կռապաշտութի՝ ի լինել նորա ի սահմանս գլորեալ ամաց ծերութե. Յետ թագաւորութիւն իէլացւոց զկնի մահու նր յերկուս բաժանեցաւ ։ Ամբարիշտ որդի նր ռոբովամ նուաճեաց յիշխանութի իւր զերկուս միայն ցեղս յուդայ և բենիամինի. իսկ այլ տասն ցեղքն ընտրեցին թագաւոր ի վերայ իւրեանց զերոբովամ ։ Ի այսու ժամանակաւ ի ժողովրդեան տն էր կրկին թագաւորութիւն՝ յուդայ և իէլի ։ Թագաւորքն յուդայ ունէին զմայրաքաղաք իւրեանց յերուսաղէմ, իսկ իէլացւոց՝ ի սամարիա ։

## Օգտակար խրատք ։

ա. Տաճարն սողոմոնի էր տուն աղօթից վս ամ ժողովրդեանն յուդայ ։

Մեր եկեղեցիք քրիստոնէից են տուն աղօթից ։ Ոչ կատարեն զպարտաւորութիւնս քրիստոնէութե այնոքիկ, որք յաղօթիցն ժամու ելանեն յեկեղեցւոյ առանց ինչ հարկի ։

բ. Սողոմոն խնդրեաց շնորհ հարկաւորագոյն զի-



տութն

փառաւորութիւն, այլ Ած շնորհեաց նմա և զայլ մեծ ևս բարիսն։

Արդ մեք պարտիմք խնդրել զհոգեկան պարգևս, որք են հաւատ, սէր և յոյս. իսկ մարմնական իրք՝ որք են, ուտելի, ըմպելի, հանդերձ և այլ պիտոյք տացեն մեզ և առանց խնդրանաց։

Գ. Ամենայն ածին շնորհացն 'ի խաղաղութեան 'ի ծնընդեան։

Ճշմարտութիւնն ոչ է պաշտպան մեզ 'ի յիմարութենէ։ Արդ թէպէտ մանկական կիրք լուածեան յանձամբ, այլ սատանայ ունի զայլ ուռկանս, որովք՝ եթէ ոչ յառաջ զգուշ լիցուք, կարէ որոգայթել զմեզ և 'ի ծերութեան։

## Պտուղք բարեպաշտութեան

Սողոմոն կանգնեաց զհոյակապ տաճար անզուգական յաշխարհի։ Եւ իմ. ոհ, թէ որքան ցանկամ և ես կառուցանել քեզ զտաճար հոյակապ, այլ անձեռնհասութիւնք քարընդառնեալ խափանեն զայն. ընկալ ուրեմն զսիրտ իմ բորբոքեալ առ քեզ ջերմեռանդութեամբ. եղիցի այն քեզ տաճար և հաճոյական բնակարան։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ՀԶ.

## Յաղագս մարգարէիցն Բահաղու։

Աքաաբ էր ամբարիշտ արքայ իէլի· կին նր Յեզաբէլ նման նմա եւս ամբարշտութբ· երկոքին նոքա ած պաշտէին զԲահաղ եւ նմա երկրպագանէին. նմին իրի արգել Ած զիջանել ցօղոյ եւ անձրեւոյ զերիս ամս ողջոյն։ Ապա իբրեւ սատակեցաւ ամն յայսմանէ սովէ, հրամայեաց Ած ագռաւուց կերակրել զմարգարէն Եղիայ, որում եւ բերէին նոքա բ առաւօտս եւ ընդ երեկոյս զհաց եւ զմիս 'ի հեղեղատն Քոռաթայ. այլ յետ ժամանակի 'ի ցամաքիլ հեղեղատիս այսորիկ, հրամայեաց Ած Եղիայի գնալ 'ի Սարեփթայ, ուրանօր պատուէր ետ այրի կնոջ միում սնուցանել զնա։ Մերձեցեալ Եղիայի 'ի Սարեփթայ՝ ետես զայրին, որ ժողովէր զփայտ եւ ասաց նմա, զի բերցէ սակաւ մի ջուր եւ պատառ մի հացի. այրին այն ետ պատասխանի, եւ ես ինքն ունիմ միայն զմի բուռն ալեւր 'ի սափորի եւ փոքր ինչ իւղ, զորս կամիմ ուտել զաւակաւս հանդերձ եւ ապա ճաշակել զմահ. ասաց նմա Եղիայ, ալեւրն 'ի սափորի եւ իւղն մի՛ պակասեսցին։ Խօստումն նորա կատարեցաւ, եւ այրին ոչ թէ միայն կարաց կերակրել ընդ որդւոյն, այլ եւ սնուցանել զմարգարէն տարին բոլոր։ Յետ որոյ ա-

սաց Տ՟ր ցեղիայ, ե՛րթ և տես արքային Աքա-
աբու, թէ ՚ի մօտ եղեալ եմ իջուցանել զանձ-
րև յերկնից. աքաաբու գնացեալ զայս՝ ել
ը՟ առաջ եղիայի և ասաց՝ դու՞ ես խռովեցու-
ցանես զի՟էլացիս. այլ եղիայ պատասխանեաց
արքային, ո՛չ ես խռովեցուցանեմ զի՟էլ, այլ
դու և տուն հօր քո խռովեցուցիք զնա, վ՟ն
զի՝ ծառայէք բահաղու: Պահանջեաց ապա
մարգարէն, զի ամ՟ իէլացիք և մարգարէք բա-
հաղու ժողովեսցին ՚ի կարմելոս լեառն. և իբրև
ժողովեցան նոքա, ասաց եղիայ ցժողովուրդն,
մինչև ցե՞րբ կաղայցիք յերկուս ոտս. եթէ տ՟ր է
ճշմարիտ ա՟ծ, երկրպագէ՛ք ն՟ն. իսկ եթէ բա-
հաղն է ա՟ծ, բահաղու լերո՛ւք հետևողք: Ի ու-
յանպատասխանի մնալն ժողովրդեան՝ պատուիրեաց
ածել զերկուս արջառս, յորոց զմին մար-
գարէքն բահաղու մատուսցեն պատարագ,
իսկ զմիւսն ինքն. և միանգամայն թոյլ ետ նց
ընտրել յարջառոց անտի զ լաւն. այսու դաշ-
նադրու՟բ, զի նոքա յօգնու՟թ կոչեսցեն ինքեանց
զբահաղ, իսկ ինքն կոչեսցէ զճշմարիտն Տ՟ր,
և որոյ ա՟ծն լուիցէ առաքմամբ հրոյ, զնա և
խոստովանիլ Տ՟ր ճշմարիտ. իսկոյն ամ՟ ժողո-
վուրդն պատասխանեաց, թէ բոլորեքեան հա-
մաձայն են ընդ այս դաշն: Մարգարէքն բա-
հաղու սկիզբն կալան, խոնարհեցան ՚ի գուն՟
առաջի սեղանոյն և կարդային զբահաղ յառաւօ-
տէ մինչև ցկէս օր գոչելով, բա՛հաղ լո՛ւր մեզ
բա՛հաղ լո՛ւր մեզ. զհասարակ աւուրբն ասաց



նոցա

նց Եղիայ, աղաղակեցէք բարձրաձայն, զի ած ձեր գուցէ անպարապ է, կամ ննջէ և կամ 'ի զբօսանս է. յայնժամ նոքա առաւել ևս բարձրաձայն քան զառաջինն կոչեալ՝ ինքեանք զինքեանս վիրաւորեցին սրով ցայն վայր, մինչև արիւն ել 'ի նոցանէ. այլ 'ի բահաղէ չեղև ինչ ձայն և պատասխանի։ Իսկ իբրև այս եղև, հրամայեաց Եղիայ զենուլ զզուարակն իւր և պատրաստեաց զպատարագն. յետ որոյ հրամայեաց հեղուլ 'ի վերայ նորա այնքան ջուր, մինչև շրջապատել զզոհարանն բոլոր. պատրաստ արարեալ զամ ինչ՝ կարդաց առ տր այսպէս, ած աբրահամու, իսահակայ և իէլի, արա՛ զի ծանիցեն այսօր, թէ դու ես ած ճշմարիտ. նոյնժամայն էջ յերկնից հուր և ծախեաց զպատարագն և զսեղանն ջրով հանդերձ։ Իսկ 'ի լինել այսորիկ՝ ժողովուրդն ամ անկեալ յերկիր գոչելով, ածն Եղիայի է ած ճշմարիտ։ Եղիայ նոյնհետայն հրամայեաց զբահաղուն կալնուլ զմարգարէս, զորս արկեալ 'ի կիսոնի հեղեղատն, եղեն բոլորապէս. Թիւ որոց հասանէր մինչև ցութն հարիւր և յիսուն անձինս։

## Օգտակար խրատք։

ա. Ո[illegible] ցմարգարէն, [illegible]
[illegible]
Մի՛ այսպէս պատահի ամ պաշտօնէից տն, որք յորժամ ոչն կամին համբերել ամբարշ-



տութե

տութեան մարդկան , խոստովանեցուցիչս համարին ՚ի նոցանէ .

Ը. Մարգարէն եղիա գնաց առ սարեփթացի այրի կինն, յորժամ և ոչ ուր գոգցես պանդխտեալ էր ։

Այսմանիկ երևի, թէ ՚ի ժամանակի սաստկացեալ թշուառութեան, ՚ի բարձանց առաքի արագահաս օգնութիւն .

Թ. ՚Ի հենել եղիայի նախնոյր ՚ի կերակրոյ, աս-տուած կերակրիչն զնա ։

Ած ՚ի կիր առնու ոչ թէ միայն զսովորականն, այլև զանսովոր միջոցս առ ՚ի պահպանութե̄ և ՚ի սնունդ սիրելեաց իւրոց ։

## Պտուղք բարեպաշտութե̄ .

Մարգարէքն բահաղու լցին զօդն աղաղակաւ . այլ բահաղ ոչինչ ետ նց պատասխանի . Խղճալի են այնք՝ որք համարձակեն զայնպիսի ա̄ծս, որոց տայ զգայութի̄ ձեռն արհեստաւորին ։ Մեք՝ քանզի երջանիկ եմք մեք հաւատալով ՚ի ք̄ս փրկիչն, որ տեսանէ զմեզ և լսէ աղաչանաց մերոց .

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . Է ։

### Յաղագս այգւոյն Նաբովթայ ։

Նաբովթ յիզրայէլի ունէր զայգի մի առ երի պալատանն արքայի . Աքաաբ խնդրեաց ՚ի նաբովթ

Նաբովթայ տալ նմ՟ զայգին իւր, զի կամէր շի-
նել զայն պարտէզ խաւարտից. արքայն խոս-
տացաւ վճարել նմ՟ զայնքան դրամս, որքան
արժէր սեփականութե՟ նր՟. Նաբովթ եւս պա-
տասխանի, թէ զհայրենի ժառանգութին ան-
հնարին է վաճառել նմա: Աքաաբ այսուիկ
այնքան տրտմեցաւ, մինչեւ եղաւ ի մահիճս
եւ ոչ եկեր ինչ կերակուր. Թագուհին Յեզա-
բէլ եկեալ առ այր իւր մխիթարէր զնա ի
տրտմութե՟ անդ, խոստանալով ոչ անագան հա-
սուցանել նմա զայգին. յետ այսորիկ ի գի-
մաց արքայի՟ն առաքեաց հրաման առ ամ՟ ծե-
րակոյտն իէլացւոց բնակեալս ի նմին ժա-
մանակի ի միասին ը՟ Նաբովթայ ի միում քա-
ղաքի, զի նոքին ջանահնար լիցին գտանել կեր-
կուս բանսարկուս, որք ստութ՟ հաստատեսցեն
որպ՟ թէ Նա հայհոյեաց զած՟ եւ զարքայն, եւ այս-
պիսի հնարիւք մեղադրեալ զանմեղն, հանցեն
զնա արտաքս քան զքաղաքն եւ քարկոծ ա-
րասցեն: Ծերակոյտքն իէլացւոց ի կատար ա-
ծին զհրամայեալն, եւ անպարտն Նաբովթ ան-
նամատն եղեւ մահու: Լուեալ զայս Յեզաբէլ
գնաց առ Աքաաբ եւ ասաց, արի եւ առ զայ-
գին ի քոյդ ժառանգութի՟, զի մեռաւ Նաբովթ.
եւ իբրեւ կամք եղեն Աքաաբու տիրել այ-
գւոյն, ահա երեւեցաւ նմա մարգարէն Ե-
ղիա եւ ընդ այլոց բանից ասաց, թէ ի տեղւոջն,
ուր շունք լիզեցին զարիւն Նաբովթայ, եւ
զքոյդ լիզեսցեն նոքա զարիւն. իսկ Թագու-հ-



ւոյն

ւոյն եզաբելայ նախագուշակեաց, թէ 'ի դաշ-
տին իէլացւոց պատառեսցի նա 'ի շանց. և
այս ա̃մ լցաւ յետ քանի մի ամաց, և բոլոր
տունն աքաաբու բնաջինջ եղև: Նաբոթայն
զմահահարուխթ ընկալեալ վէրս 'ի պատերազմի
մեռաւ. և շունք լափեցին զարիւն նորա հոսեալ
'ի կառաց անտի, որով տանէին զնա. իսկ ար-
քայուհին յեզաբէլ գահավէժ լեալ 'ի պա-
տուհանէն՝ ամբակակոխ եղև յերիվարաց և
լափեցաւ 'ի շանց: Յովրամ որդի նորա և ժա-
ռանգն նետահարեցաւ, որոյ մարմինն ընկե-
ցիկ եղև 'ի պատկանեալն Նաբովթայ 'ի դե-
տին: Նաքաաբ ունէր ևս զեօթանասուն որդիս,
որք ամենեքեան 'ի սամարիա մեռուցան, և
գլուխք նոցա կթոցօք առաքեցան յիէւ, ու-
րանոր ձգեցան 'ի դաշտն Նաբովթայ. և այն-
պէս բանն տեառն՝ զոր խօսեցաւ եղիայ
վս տանն աքաաբու՝ անթերի կատարեցաւ:

## Օգտակար խրատք:

ա. Տառապանէից պատգամք որ ասացան ոչ միայն
մի եղիեցելոյ, այլև մի եղիանակաւորայ:

Աքաաբ մեղաւ հակառակ տասներորդն պա-
տուիրանի, իսկ կին նորա եղծ զիններորդն՝
վյ և ընկալան նոքա զարժանահաս պատու-
հաս:

բ. Հզօրք Աստ խստութ պատուհասին:

 Աման

Ա՛յս սպանումն միոյն նաբովթայ՝ արքայն Աքաաբ սպանաւ . արքայուհին յեզաբէլ դիշատեցաւ ՚ի շանց , և բովանդակ տուն արքային իսպառ հետակտուր եղև ։

Գ · ՚Ի գործելն զանօրէնութի՛ւն բազում գործոյն գործանիցէ , այլ ՚ի բարեգործութեան ցուցէ ողջոյն էն ընկերշանցն ։

Երբև կամք եղեն աքաաբու խլել զայգին ՚ի հպատակէ իւրմէ , և ահա գտան նմա օգնականք ՚ի չարագործութեան անդ . յեզաբէլ յանուանէ նորա գրեաց պատուտմունս հրամանս . երևեցան անխիղճ վկայք , և ծերակոյտն խորահեյեան ՚ի մահ դատապարտեաց զանմեղն նաբովթ ։

## Պտուղք բարեպաշտութ̃

Զարաչար շահեալն՝ չարաչար և կորնչի. ճշմարտութիւն այս հաստատի և վերայ ագահաւոր արանց ։ Աքաաբ խստիւ պատուհասի յաղագս յափշտակութեան իւրոյ զայգին նաբովթայ ։ Դիցուք մեզ անխախտ կանոն բաւականանալ միայն մերովքս , և ոչ ևս ցանկալ ընչից օտարին ։

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ · ԼԸ ։

### Յաղագս վերանալոյ եղիայի յերկինս ։

Մերձեցաւ ժամանակն , յորում պարտէր մարգարէին եղիայի կենդանւոյն վերանալ յեր-

կլինս · վյ և հրամայեաց նա աշակերտին իւ֊
րում եղիսէի մնալ ՚ի գաղգաղայ՝ ասելով,
ած առաքէ զիս ՚ի բեթէլ · այլ եղիսէէ ասաց
նմա, կենդանի է տր և կենդանի է անձն քո,
թէ թողից զքեզ։ Իջեալ ՚ի բեթէլ, եղիայ
վերստին խորհուրդ ետ եղիսէի մնալ անդ՝
ասելով, թէ ած առաքէ զիս յերիքով · այլ
եղիսէէ կրկին ասաց, կենդանի է տր և կեն֊
դանի՝ անձն քո, թէ թողից զքեզ։ Յետ այ֊
սորիկ իբրև հասին նոքա յերիքով, եղիայ պա֊
տուէր ետ եղիսէի մնալ անդ՝ ասելով, ած
առաքէ զիս ՚ի յորդանան · այլ եղիսէէ եր֊
դուաւ, թէ ո՛չ թողցէ զնա։ Ի ժամանակի
այսր ուղեգնացութն նց՝ աշակերտք մարգարէ֊
իցն եկին առ եղիսէէ հարցանելով ցնա, գի֊
տես, զի տրն քո այսօր առաջի աչաց քոց վե֊
րացի ՚ի քէն · եղիսէէ ետ նոցա պատասխանի,
գիտեմ և ես լուռ լերուք։ Իջեալ ՚ի յորդա֊
նան յուղարկեալ յարանց բազմաց, որք ՚ի հե֊
ռուստ դային զկնի նոցա, էառ եղիայ զմաշ֊
կեակն (վերարկու) իւր, և ծալեալ եհար նո֊
վաւ զջուրն յորդանանեան · ջուրն անջրպե֊
տեցաւ, և նոքա անցին զգետն ցամաք ոտիւք ·
յայնժամ եղիայ ասաց ցեղիսէէ, խնդրեա՛ յե֊
նէն զոր ինչ և կամիս, մինչև է իմ մեկնեալ
՚ի քէն · պատասխանեաց նմա եղիսէէ, թէ
ցանկամ ունիլ հոգի կրկնապատիկ քան որ ՚ի
քեզդ է · ասաց նմա եղիայ, զդժուարս խնդրե֊
ցեր · այլ եթէ տեսցես զիս ՚ի վերանալս ի֊
մում

մամ ՚ի քէն, կատարեսցի փափագ քո. իսկ եթէ ոչն տեսցես, մի՛ կատարեսցի: Եւ մինչ-դեռ նոքա երթալով երթային և խօսէին ընդ միմեանս, ահա յանկարծակի երևեցան հրե-ղէն կառք և երիվարք, որք զնոսա բաժանե-ցին ՚ի միմեանց. Եղիայ վերացաւ մրրկաւ յեր-կինս յանդիման տեսանելեացն Եղիսէի, որ աղաղակէր այսպէս, հա՛յր, հա՛յր, կառքդ իէլի և երիվարք նորա: Յայնժամ Եղիայ ընկէց ՚ի կա-ռաց անտի զմաշկեակն իւր, զոր էառ Եղի-սէէ, և յանուն տն այ Եղիայի եհար նովաւ զջուրսն յորդանանու որ նոյնժամայն հերձաւ ընդ մէջ և Եղիսէէ էանց ընդ գետն: Աղվա-ղակի յետ այսորիկ արար նա զսքանչելիս ՚ի վերայ դառնութե անդ ջուրցն Երիքովի. Եկեալ ՚ի տեղին, ուստի գետն բղխէր, էարկ յայն սակաւ մի աղ, որով ջուրն քաղցրահամեալ եղև առողջարար. իսկ ՚ի գնալ Եղիսէի ան-տի ՚ի բեթէլ, մանկտակոյտ մի ելեալ ՚ի քաղա-քէ ծիծաղէին զնովաւ և հայհոյէին գոռա-լով, ե՛լ կնտակ, ե՛լ կնտակ. Եղիսէէ դարձեալ ՚ի թիկունս կոյս անէծ զնոսա յանուն տն, և նոյնհետայն ելին ՚ի ծառաստանէ արջք երկու, և գիշատեցին զքառասուն և երկու անձինս ՚ի նոցանէ:

## Օգտակար խրատք

Ա. Սորչոր անչչէնս Թայն ո՛չ ճաղաչեցին չմահ, այլ



չենոքա

կենդանեաց վերջացան ծերկնն ։

Սոյն 'ի նոցանէ էր արդար նահապետն Ենովք․ որ կեայր նախ քան զհամայնաջինջն ջրհեղեղ․ իսկ միւսն մարգարէն Եղիա՝ որ էր յետ ջրհեղեղին ։

Է. Զնոյն տարեալ կենաց, պարտէ փոխարինել անձին ։

Եղիայ վերացեալն շարժմամբ յերկինս, երեւեցաւ 'ի Թաբօրական լերինն 'ի ժամանակի այլակերպութեան քի փրկչին մերոյ ։

Ը. [illegible]

Սուրբ հրեշտակքն, որք համբարձին զԵղիայ հըրակերպեան կառօք յերկինս, տանին և զհոգիս արդարոց 'ի գոգն աբրահամու, ուր նոքա պայծառակերպին իբրեւ զարեգակն՝ երկնային փառօք ։

## Պատուէրք բարեպաշտութե ։

Վայրահ մանկունքն ծաղրուցեալ զայլն որ, կրեցին զխստագին պատուհաս ։ Դուք, մանկունք՝ որ ընթեռնուք զայս, զգուշ լերուք, և մի՛ զձեզ այպանէք, զի մի՛ և դուք ենթարկեսջիք վատաբաղդութեան ։

## ԳԼ. ՏԱՍՆԵՒԹՆ. Ը.

### Յաղագս չափաւորին իւղոյ այրւոյ տարաւին.

Կին ոմն աղքատ ՚ի խնդրելն ինքեան օգնութի ՚ի մարգարէէն Եղիսէէ, յայտնեաց նմա, թէ այր իւր երկիւղած յոյժ վախճանեցաւ. այժմ՝ շարունակեաց նա ասելով, գիտէ առխա արծաթափոխատուն, և որովհետև չկարեմ ես պարտահատոյց նմա լինել, կամի զորդեակս իմ առնել ՚ի ծառայութի ինքեան։ Մարգարէն Եղիսէէ եհարց ցնա, թէ զո՞յ իր ինչ ՚ի տան նորա. ողորմելին կինն պատասխանեաց, թէ չունի ինչ բայց ՚ի կամխուակէ միոյ հանդերձ իւղով. յայնժամ հրամայեաց նմա մարգարէն խնդրել ՚ի դրացեաց անօթս իւրոց զքանի մի դատարկ աման. ապա եմուտ ՚ի տունն հանդերձ որդւովք նր, և փակեալ զդուռն հրամայեաց հեղուլ զիւղն յայն ամ ամանս. և զայս արար այրին. յամանէ անօթ անդադար հեղու իւղն ցայն վայր, մինչև լցան նոքա ամ ամանքն։ Յայնժամ հրամայեաց կինն այն՝ ևս բերել ամանս, այլ որովհետև ոչ ևս աւելի ՚ի ձեռս բերան ամանք, վայ և իւղն դադարեցաւ։ Վաճառեալ զիւղն, շահեցաւ կինն այն այնքան, մինչև պարտահատոյց լինել ընդ ամի, և մնացուածովն կարել սնուցանել զորդիս իւր։

## Օգտակար խրատք ։

Զ. Բարեպաշտ մարդիկ բազմիցս ըստ աշխարհի չքաւորք և շարժին բարեաց 'ի կշռութեան ։

Այս պատահեցաւ յաւուրս Եղիսէի առն միում բարեպաշտի, որ ոչ եթող ինչ կնոջ իւրում բաց յորդւոց և պարտուց ։

Է. Որք կշռեն արդեամբ և օրինօք բազում անգամ վարին պատրաստ յայտ յայտ ։

Զքաւոր այրին գանգատեաց մարգարէին Եղիսէի, թէ արծաթախնդրութեան կամէր առնել զորդիս նորա 'ի ծառայութիւն ինքեան ։

Ը. Աստ ցուցանէ զինքն հայր և պաշտպան որբոց և վրէժխնդիր վասն զրկանաց այրեաց ։

Զայս հաստատէ օրինակ այրւոյն, որ չունէր ինչ բաց յիւղոյ կամկամակէ միոյ ։ Աստուած այնպէս օրհնեաց զնա, մինչ զի կարաց նա պարտահատոյց լինել, և կերակրել զորդեակս իւր ։

## Պտուղք բարեպաշտութեան ։

Ողորմելի կինն, որում չեթող ինչ այրն զկնի իւր բաց 'ի պարտեաց, անմխիթար լայր · սակայն փոքրիկ ամանն իւղոյ օրհնեալ 'ի մարգարէէն Եղիսէէ՝ տայ նմա զհնարս պարտատուճար լինել լիւ ։ Եւ դուք չքաւորք, դիք զյոյս ձեր 'ի Տր 'ի ժամանակի թշուառութեանց

ձերոց, և նա 'ի փոքուէ կարէ զմեծամեծս գործել:

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Խ.

## Յաղագս գերութեան բաբելացւոց.

Ժողովուրդ այն բաժանեալ էր յերկուս թագաւորութիւնս՝ 'ի թագաւորութիւն Յուդայ, և 'ի թագաւորութիւն Իսրայէլի: Թագաւորութիւն Յուդայ կայր. բայց արքայք որք ունէին զհայրաքաղաք իւրեանց յերուսաղէմ քաղաքի, յորոց ութն միայն համարէին արդարք. իսկ 'ի թագաւորութեան Իսրայէլի ինն և տասն թագաւորք, որք ունէին զբնակութիւն իւրեանց 'ի Սամարիա, և յորոց միջի չէր ոք և ոչ մի երկիւղած այ: Ի վերջոյ երկոքին թագաւորութիւնքս այսոքիկ նուաճեցան և կործանեցան յասորւոց: Առաջինն աւերեցաւ իշխանն, և ամ գերդաստանքն՝ որ կային բաղկացուցանելն՝ վարեցան 'ի գերութի: Վերջին արքայն անուանիւր Ովսէէ. յաղթող նր էր արքայն ասորեստանեայց Սաղմանասար, որ բնակէր 'ի Նինուէ: Որդի նր Սենեքերիմ կամեցաւ բնաջինջ առնել զթագաւորութի Յուդայ, և պաշարեաց զԵրուսաղէմ արքայն Եզեկիա 'ի քաղաքն իւմ, այլ հրեշտակ այ եկեալ գիշերայն 'ի բանակին ասորւոց, եհար 'ի նոցանէ զհարիւր



ութ

ութեան և հինգ հազար արս ։ Սեննաքերիմ յորուցեալ Է տասանօսն և տեսեալ զայնքան բազմութի կոտորածին՝ դարձաւ անդրէն ՚ի Նինուէ ։ Յայնմ հետէ թագաւորութին յուդայ ծաղկեցաւ կրկին աւելի քան զամս հարիւր · վերջին թագաւորքն էին ԺԸ մեծի մասին ամբարիշտք, և մանաւանդ մանասէ, որ եհեղ զանչափ անպարտ արիւն, մինչև ելից Նովաւ զեղէմ ։ Յետ որոյ արդար դատաստանն Այ եհաս և՚ի վեր թագաւորութեն յուդայ · Ած մատնեաց զնա ՚ի ձեռս Նաբուգոդոնոսորայ արքային բաբելացւոց ։ Այս թագաւոր մտեալ յերէմ կալեալ առաւ զառաջինն զյովակիմ արքայ և փոխանակն յետ այսորիկ ձեռբակալ արար և զաքէայորդին յեքոնիա հանդերձ իշխանօքն յուդայ, և զնմանեան ընդ նս վարեաց ՚ի բաբելոն ։ Զկնի ինն ամաց հրամայեաց Նա բերել զաչս արքային սեդեկիայ, իսկ զորդիս Նորա առաջի աչաց Նր մեռուցանել ։ Զայսկայ տաճարն սողոմոնի յաճիւն դարձաւ, իսկ քաղաքն եղէմ ՚ի քարակուտակ · ամենայն ժողովուրդն անասնորէն վարեցաւ ՚ի բաբելոն ։ Այս ամ պատահեցաւ մեզ հարիւր ամօք յառաջ քան զծնունդն քի · յայնմ հետէ զամս եօթանասուն եղէմ աւեր կայր, ցրուեալ ժողովուրդն յուդայ ՚ի գերութե էր ։

## Օգտակար խրատք ։

ա. Զ հարուստ ժամանակս ոչ ասէ ԺԲ · ուղղուէ

ճանաչման ։

Օ՜ կնի աւերածոյն թագաւորութեան իսրայէլի Աստուած պահպանեաց զթագաւորութիւնն յուդայ տեւել քան զամս հարիւր ամ 'ի տալ մարդկան զմիջոց ուղղելոյ զկարգս իւրեանց ։

Է. Որքա՞ն երկարատեւ էին երկոցունց թագաւորութիւնքն, այն_ քան խստագին պատուհաս հասանէ յանցաւորաց ։

Որովհետեւ ժողովուրդն յուդայ ոչ կամեցաւ դառնալ, վասն այնորիկ եւ Աստուած ոչ խնայեաց 'ի տաճարն, որ յաւուրս սողոմոնի յայտնապէս լի էր ածականն ճառագայթիւք ։

Ը. Երջանիկ է նա, զոր այլոցն վտանգք զգուշաւոր գործեն ։

Պարտ էր յուղղութիւն գալ ժողովրդեանն յու_ դայ 'ի հայելն յիսրայէլեանն ժողովուրդ, եւ քաղաքին երուսաղէմի՝ յանկանելն 'ի սամարիա ։

## Պատուէրք բարեպաշտութեան ։

Որպիսի սպառնագին օրհասս հաս քեզ ո՜վ եղեմ՝ 'ի բողբոջել բարկութեան ածն ․ տաճար քո կործանեցաւ ․ արքայդ շղթայեալ կայ երկա_ թովք, եւ ժողովուրդդ գրկեալ 'ի հայրենա_ տուրն ժառանգութենէ անտի իւրմէ ․ վարեալ կայ 'ի գերութի ։ Քրիստոնեայք՝ հայեցարո՛ւք յայս օրինակ բարկութեան ածն, եւ մի՛ անարգէք հոգա_ կապ տաճարօք նուիրելովք ածն Ս. Յ ։



ՊՐ.Տ

# ԳԼ. ՔԱՌԱՍՆԵՒՄԷԿ. խա.

## Յաղագս Աստինեայ:

Արքայն Ասուէր, որ յայտնի է ան-
ուամբս Արտաշէս՝ ունէր յիշխանութեան իւրում
զհարիւր քսան և եօթն գաւառս. Մեծ միա-
պետս այս արար զփառաւոր կոչունս ամ̃ մե-
ծամեծաց իւրոց և ծառայից ՚ի քաղաքն Սու-
սիս. այս ընդունելութի̃, որ շարունակեցաւ
զաւուրս հարիւր և ութսուն՝ արարաւ վասն
ցուցանելոյ զմեծութի̃ իւր և զպերճափառութի̃:
Յաւուր միում արքայն զուարճացեալ գոլով
առաքեաց կոչել զարքայուհին Աստինէ, զի նա
եկեսցէ առ նա ամ̃ արքայական զարդուք. զայս
արար նա ցանկալով ցուցանել զգեղեցկութի̃
նր̃ մեծամեծացն և ժողովրդեան. այլ ամբար-
հաւաճն Աստինէ ոչ կատարեաց զկամս նորա:
Արքայն շարժեալ ՚ի սրտմտութի̃ վս̃ անհնազան-
դութե̃ նորա, եհարց ցխորհրդականսն՝ թէ որպի-
սի պատիժ վայելէ ամուսնոյ իւրում. խորհրդ-
դականքն ասացին, թէ թագուհին յանցաւոր է ոչ
միայն առ̃ջի արքային, այլ և ամ̃ ժողովրդեանն. վս̃
զի կանայք հետևելով օրինակի նր̃ կարեն յայսմ-
հետէ արհամարհել զարս իւրեանց: Արքայն
հերքեաց յինքենէ զամուսինն մեծամիտ. և
արգել նմա երևիլ յաչս իւր. և առաքեաց ՚ի
նմին իսկ ժամանակի զհրաման ը̃ ամ̃ գաւառս

 իւր

իւր , զի իւրաքանչիւր այր լիցի ՚ի տան իւ-
րում լիակատար տէր . ապա ժողովեցան առ ար-
քայն բազում գեղեցիկ կոյս աղջկունք , յորոց ար-
քայն կամէր ընտրել ինքեան զնոր ամուսին :
՚Ի միջի օրիորդացն էր և ամենագեղեցիկ հրէ-
ուհի մի Եսթեր անուն , որ էր որբիկ անհայր և
անմայր . այլ քեռի նորա և հոգաբարձուն էր գե-
րեվարեալ հրէայ ոմն Մուրթքէ անուն : Յորժամ
բազում օրիորդքն այնոքիկ մի զկնի միւսոյ ածան
առ թագաւորն , և ոչ մի ՚ի նոցանէ այնքան հա-
ճոյ թուեցաւ նմա որպէս Եսթեր : Արտաշէս ընտ-
րեաց զնա ամուսին , և եդ ՚ի գլուխ նորա
զթագն Աստինեայ : Ոչ գիտէր արքայն , թէ նա
է ազգաւ հրէայ , զի Մուրթքէ հոգաբարձու-
նորա պատուիրեալ էր նմա չասել ինչ զայնմանէ .
և Մուրթքէ զամենայն օր յաճախէր ՚ի պալատն ար-
քունի , և հարցանէր զԵսթերայն ողջունէ . ՚ի
նմին ժամանակի երկուքին ներքինիք արքային
կռեցին զդաշն , և խորհէին սպանանել զԱրտա-
շէս : Մուրթքէ խելամուտ եղեալ այսմ ,
վաղվաղակի ազդ արար Եսթերայ , և նա ծանոյց
արքային : Յետ հարցափորձի և քննութեան գոր-
ծոյն ներքինիքն կախեցան , իսկ իրողութիւնս այս
արձանագրեցաւ ՚ի տարեգիրս ըստ արքայականն
հրամանի : Եւ ՚ի վերայ այսր ամենայնի Մուրթքէ
ըստ վսեմ ծառայութեանցն մնաց անվարձ :

## Օգտակար խրատք։

ա. Մարդ սովորաբար լինի հպարտ 'ի բարձրանալ անձին իւրոյ։

Այս տեսանի 'ի գեղեցիկն աստինէ, որ յամբարհաւաճութենէն ոչ կամեցաւ հնազանդել արքային, եւ վասն որոյ զրկեցաւ յարքայականն արժանաւորութենէ։

բ. Մի՛ բազում անգամ բարձրացուցանէ զխոնարհամիտս Երկինք։

Ինչպէս անմայրն եսթեր 'ի գերութենէն եղեւ արքայուհի պարսից։

գ. Կանայք պարտին հնազանդել արանց իւրեանց։

Եւ 'ի Նոր կտակարանի հրամայի, զի կամք կնոջն հնազանդեսցի առն կամաց։

## Պտուղք բարեպաշտութեան։

Թագուհին աստինէ արտաքսի յարքայական առագաստէ. ողորմելին եսթեր յաջորդէ զտեղի նր։ Տեսէք, թէ ո՞րպ պատժէ Ա՟ծ զամբարհաւաճութիւն, բարձրացուցանելով զխոնարհս, եւ խոնարհեցուցանելով զբարձրամիտս։ Դիտելով մեր զայս, փախիցուք միշտ յամբարհաւաճութենէ. ջանադիր լիցուք եւ յարտաքին մակերեւութի ցուցանել զճշմարիտ խոնարհութին։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ․ ԽԲ ։

## Յաղագս Հռոմայ ։

Արքայն Արտաշէս բարձրացոյց առաւել քան զամենայն նախարարս զայր ոմն Համան անուն. առաջի մեծապատւոյ առնս այսորիկ ամենայն ոք պարտէր անկանել 'ի ծունկս և երկրպագանել. այլ Մուրթքէ զարգացուցանող Եսթերայ՝ զայս ոչ առնէր ։ Համան, որոյ հպարտութեան չկարելի լինէր այս, հաստատեաց 'ի միտ բոլորապէս ջնջել զհրէայս գտեալս 'ի Թագաւորութեան նորա. և վասն այսորիկ ասաց ցարքայն, թէ հրէայք ունելով ըստ ամենայնի զայլ օրէնս անհամաձայն պալատից, ո՛չ վարին այնպէս որպէս արքայն հրամայէ. և միաբանգամայն խորհուրդ ետ, թէ բարւոք եղիցի, եթէ ամենայն հրէայք բնաջինջ լիցին, և 'ի ձեռն հնարիցս այսոցիկ մարթ է յաւելուլ գանձարանին երբեմն զբիւր դահեկանս արծաթի ։ Ընկալեալ արքային 'ի յարգանս զայս խորհուրդ, զամենայն արծաթն եղեալ առ սպանելի հրէայս շնորհեաց Համանայ. ապա ետ հրաման ջնջելոյ զամենայն հրէայս 'ի նշանակեալն աւուր ։ Մուրթքէ տեղեակ լեալ այսմ, նոյնհետայն ազդ արար Թագուհւոյն, իբր զի նա խնդրեսցէ խնայել յազգականս իւր. այլ 'ի նմին ժամանակի ոչ ումեք էր ներեալ մատչել առ արքայն, և ստուգանողին այսորիկ



սպառ

սպառնայր մահն. իսկ եթէ արքայն տայր ու-
մեք զոսկեայ գայիսոն իւր, նա զերծ մնայր
՚ի մահաբեր պատժոյ անտի: Եսթեր զերե-
սուն աւուրս ողջոյն չէր կոչեալ առ արքայն.
՚ի վերջոյ սրտապնդեալ գնաց առ նա առանց
ա̃մ կոչմնից՝ զարդարեալ յա̃մ արքայականն
զարդ: Արքայն հայեցաւ ՚ի նա զայրագինս
յոյժ, ուստի գունատեալ եսթերայ անկաւ
ուշաթափ. այլ ա̃ծ կակղեաց զսիրտ արտաշէսի
որ մերձեցաւ առ նա գայիսոնաւն, որով և
եսթեր խրախուսեալ յուշ եկն, և խնդրեաց
յառնէ իւրմէ ճաշել ընդ իւր համանաւ
հանդերձ. արքայն կամաւորեցաւ, և համան
արժանացաւ այսմ պատուոյ: Ի սմին ժամա-
նակի արքայն հրամայեաց եսթերայ խնդրել
զոր ինչ կամի, և խոստացաւ շնորհել նմա
մինչև ցկէս թագաւորութ̃ն՝ եթէ խնդրեսցէ
՚ի նմանէ, զի այնքան զմայլեցաւ արքայն առա-
քինութ̃ք և գեղով ամուսնոյ իւրոյ. այլ եսթեր
սպասելով քաջադէպ միջոցի վ̃ս փրկութ̃ե
հրէից, խնդրեաց ՚ի նմանէ զժամանակ առ ՚ի
մտախոհ լինել, զի առաւել ևս ճոխաբար շա-
հեսցի զողորմութ̃ի ն̃ր: Յետ այսորիկ համան ա-
սէր ցկին իւր, թէ ոչ կարեմ հանդարտել
մինչդեռ մուրթքէ յարքունիս գտանի. զոս-
արրայ կին ն̃ր խորհուրդ ետ նմա շինել
զկախաղան մի յիսուն կանգուն բարձրութ̃.
և ը̃ առաւօտն թախանձագինս խնդրել յարքա-
յէն զհրաման կախելոյ զայնմանէ զմուրթքէ. այս
հաճոյ

Հաճոյ թուեցաւ Համանայ, և նա հրամայեաց փաղփաղուկի պատրաստել զխաչափայտն։ Ի վատաբաղդութեն նորա պատահեցաւ, զի արքայն ըզգիշերն զայն ողջոյն ոչ կարաց ննջել, վասնորոյ և հրամայեաց բերել առաջի իւր զդպրութի համայն արժանայիշատակ գործոց, ուրանօր ՚ի թիւս այլոց գտաւ նշանագրութիւն յաղագս դաւաճանութեան՝ որ փոքր ինչ յառաջքան զայն յայտնեցաւ ՚ի ձեռն Մուրթքէի · յայնժամ արքայն եհարց, թէ վարձատրեալ է Մուրթքէ յաղագս այսց հաւատարիմ ծառայութեց որպիսի և իցէ փառօք կամ առանձնաշնորհութք, և ընկալաւ զպատասխանի, թէ հաւատարմութի նորա մնայ անվարձ։ Ընդ արշալուսն առաւօտուն Համան գնաց ՚ի պալատն առ ՚ի խնդրել յարքայէ անտի զհրաման կախելոյ ըզՄուրթքէ, այլ ՚ի մտանել նորա անդր, նոյնժամայն եհարց ցնա Արտաշէս, թէ զինչ վայելէ առնել առն այնմիկ, զոր ինքն արքայ կամի գերազանցել փառօք։ Համան ետ պատասխանի, թէ որում արքայ կամի ցուցանել զշնորհս, այնմ վայելէ զգեցուցանել զպատմուճանն արքայական, դնել ՚ի գլուխ նորա զթագն, և հեծուցանել յայն երիվար, յոր արքայ նստի, և առաջի նորա ը̄ հրապարակս քարոզ կարդալ, թէ ահա այսպէս գերակայի այրն զոր արքայն արժանաւորէ փառաց։ Այսպիսի ետ խորհուրդ Համան քաջայոյս լինելով, թէ այս յարգանք իւրոյ անձին առանձին



ցուցցի

ցուցցի· այլ որքա՜ն սաստիկս խաբեալ վրիպեցաւ ՚ի յուսոյ· արքայն ասաց ցՀաման, ե՛րթ փութալես և զայս ամ(ենայն) յարգանս ցո՛յց Հրէին Մուրթքէի։ Յայնժամ Համան հարկեցաւ ըզՄուրթքէ մահաբեր թշնամի իւր անցուցանել ընդ քաղաքն յամ(ենայն) պերճապայծառութ(եամ)բ և ՚ի փառս, որովք պատուաւորեաց զնա արքայ։ Յաւարտ ածեալ Համանայ զայս, գնաց ՚ի տուն իւր, և պատմեաց կնոջն զամ(ենայն)· որ ինչ եանց ընդ նա. սակայն ՚ի նմին իսկ ժամանակի մինչդեռ նոքա խօսէին, կոչեցին զնա ՚ի ճաշ առ թագուհին Եսթեր։ Արքայն խնդամըտեալ ՚ի ճաշկերութի անդ ասաց արքայուհւոյն, զի նա խնդրեսցէ ՚ի նմանէ, զոր ինչ և կամի։ Եսթեր ասելով՝ թէ ես հրէուհի եմ, խնդրեաց յարքայէն, զի նա մի՛ հրամայեսցէ բնաջինջ առնել զազգատոհմն նորա։ Արքայն եհարց ցնա նոյնժամայն, թէ ո՛ ունէր ՚ի մտի կորուսանել զհրէայս· յայնժամ թագուհին մատնացոյց լինելով ՚ի Համանն ասաց, թէ թշնամի և չարերար հրէից է Համան։ Զայս լուեալ արքային, բորբոքեցաւ բարկութ(եամ)բ, և լռիկ ել ՚ի պարտէզն։ Համան իջեալ ՚ի գուճս առաջի թագուհւոյն խոնարհաբար խնդրեաց ՚ի նմանէ միջնորդել նմա զողորմութի, այլ չեղև ինչ ճար օգնելոյ յանցաւորին. նա կախեցաւ զայն իսկ կախաղանէ, զոր պատրաստեաց ՚ի տան իւրում. տեսան որդիք նորա ենթարկեցան այնմ իսկ վրիժակի·

մուրթ

մուրթքէ կալաւ յարքունիս զայն տեղի, յորում էր համան ։

## Օգտակար խրատք ․

ա․ Պա՛րտ է աշխատել յաղագս անձանց Թագաւորաց չխաբելոյ ի խորհրդականաց ։

’Ի ներգամիտ խոհրդոյ համանայ տեսանի, թէ որպիսի եղանակաւ անհարազատ նախարարք կարեն ’ի խաբս արկանել զարքայս իւրեանց ։

բ․ Ո՛չ ոք բարձրացուցանէ մեծ յաւէտ քան զնա, նմա ոչ է պարտ նախանձել ընկերաց աշխատանս իւր ։

Որպէս վարեցաւ համան, որ ոչ թէ միայն ոչ կարացաւ զհոգաբարձութիւն իւր, այլ և ստիպեցաւ գիւրել զմեծարանս մահու թշնամոյն իւրոյ ։

գ․ ’Ի լսելն կամ ’ի տեսանելն զխորհուրդ ինչ վնասակար, նոյնժամայն պարտ է ազդ առնել զայն-ժամէ Թագաւորաց ։

Զայս արար և մուրթքէ ․ զչարախօսութիւն հասոյց ’ի գիտութիւն արքային, և չարութիւն ոչ մնաց անպատուհաս ։

## Պտուղք բարեպաշտութեան ․

Մտերիմն բարեբաղդութեան կամեցաւ ջնջել զայրն անաւագ, սակայն հանգամանքն



փոխի

փոփոխեցան, և հզօրն անկաւ փոխանակ որ-կարին։ Դառնաղացեալն համան բոլորապտուղ մատուցանէր զոհ կախաղանին կորստեան, իսկ մուրթքէր ընծայր ամենամեծ պատիւ։ Մե՛ր մի՛ ցանկասցուք կամ գործեսցուք ումեք զոճիրս, զի մի՛ և մեք 'ի նոյն անկցուք 'ի խորխորատ, զոր վս այլոց պեղեմք։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԽԳ.

## Յաղագս Յոբայ։

Յօստեր աշխարհի՝ որ յարաբիա, էր այր ոմն յոբ անուն՝ այր անարատ, արդար՝ բարեպաշտ և բացակայ յանօրէնութեանց. նա ունէր զեօթն ուստերս, զերիս դստերս և զանբաւ խաշինս։ 'Ի մէջ որդւոց նորա էր բարեկամութի մեծ, որք բազում անգամ առնէին զկոչունս և զուարճանային. զառամեալ հայրն անդադար աղօթէր վ̃ս նոցա առ ա̃ծ՝ խորհելով, թէ գուցէ որդիք նորա ընկղմեալ 'ի հանապազօրեայ զեղխութիս, մեղիցեն առաջի ա̃յ։ Կամեցեալ ա̃յ ցուցանել զառաքինութի ծառայի իւրոյ յոբայ յամ փառաւորութե, ենթադրեաց զնա պէսպէս վտարաբաղդութեանց, զի տեսցեն ա̃մենեքեն թէ յոբ միշտ մնացէ բարեպաշտ և հաւատարիմ առ ա̃ծ։ 'Ի խրախճանալ



որդւոց

որդւոց նորա ընդունելութեան անդ, այն ինչ մեկ֊
նեցաւ նա անտի, զի զուարճութիւն նորա առա֊
ւել ևս ազատական լեցի, և ահա եհաս առ֊
նա այր մի և յայտնեաց, թէ ասպատակ արա֊
բացի հինի ասպատակեաց զամենայն էշս և զեզինս
նորա, և բաց յայնմանէ կոտորեաց զհամայն հո֊
վիւս: Եւ մինչ դեռ առաջինս այս հրեշտակ
մեկնեցաւ, եկն միւսն և ծանոյց, թէ հուր
անկեալ յերկնից այրեաց զհօտս ոչխարաց նորա
և զամենայն հովիւսն: Եկն ապա երրորդն և ասաց
ց յոբ, թէ քաղդեացի ասպատակաւորք ասպատա֊
կեցին զամենայն ուղտս նորա և սպանին միանգամայն
զուղտապանսն: Չորրորդն եկն արշաւակի և
եբեր բարեմիտ հօրն զքստմնեցուցիչ համ֊
բաւ զմահուանէ ամենայն որդւոց նորա ջարդելոց
կործանմամբ շինուածոյն, յորում նոքա
խրախանային: Սիրտ յոբայ այնքան խստագին
հարուածովք ճմլեալ ճնշեալ յանկարծակի
ընկղմեցաւ 'ի խաւարազգեստ իմն վհատութեան:
Բայց յանցանել առաջին ներգործութեան այսր
հարուածոյ, յուշ եկն յոբ և համբարձեալ
յերկինս զաչս էառ արտասուալից, ասաց, Տէր
ետ և Տէր էառ. եղիցի անուն Տեառն օրհնեալ
յայսմհետէ մինչև յաւիտեան: Խստագինս այս
փորձութիւն ոչ բոլորապէս վախճան էառ տանջա֊
ւքն վասն յոբայ. եղև նա զոհ ցաւոց. մարմին նորա
վիրալից եղև. և զրկեալ յամենայն կայից, մերկ և
անօգնական թօթափել գլորիւր յաղբակուտա֊
կս: Կոխնի բարեկամք նորա ոչ թէ միայն



չխոու

չփութային առ նա ՚ի մխիթարութ՟ն, այլ ծան-
րաբեռնէին զնա ձանձրացուցիչ ծննդովք մր-
տաց իւրեանց. և կինն իսկ նորա տանջէր զնա
զկսկծեցուցիչ յանդիմանութ՟բք վ՟ս հաստատա-
պէս ապաւինելոյ նորա միշտ ՚ի տ՟ր, յորմէ
որպէս թէ չընկալաւ ինչ օգուտ ը՟ս ասից նորա.
և միանգամայն խորհուրդ տայր նմա սահման
դնել չարեաց իւրոց յօժարական մահուամբ:
Եւ խնայէին ՚ի նա և ազգականք ն՟ր, որք ըղ-
տարաբաղդութ՟ս ն՟ր համարելով արժանահաս
պատուհաս ա՟ծառաք, կոչէին զնա կեղծա-
ւոր: Յոր խոստովան լինէր, թէպէտ առաջի
ամենատես աչաց ամենակարողին և ոչ մի ոք
՚ի մարդկանէ կատարելապէս առաքինի կոչիլ
կարէ, սակայն ՚ի վկայս բերէր զա՟ծ, թէ
խիղճն իւր ՚ի մանկութէ անտի հեռաէ յոչինչ
իմիք յանդիմանեաց զինքն: Թէպէտ և այսքան
արիական էր առաքինութ՟ն սխրալի առնն այ-
սորիկ, այլ իբրև մարդ վիճակեալ թուլութեց,
երբեմն արտաքս վազէր ՚ի համբերութէ. ժամ
ընդ ժամ զգայուէին ՚ի բերանոյ նորա բանք,
որովք յանդգնէր նա տրտունջ բառնալ զա-
մենիմաստութենէ և զբարութէն արարչին: Ի
վերջոյ ինքն ա՟ծ յարանկցեալ յորդոյ ՚ի խօսիլ
ն՟ր ը՟ նախնի բարեկամաց իւրոց, նախ երևեալ
որոտագին ամպով, եցոյց նմա զթուլութիւն
մարդկային մտաց, և յուշ ածեալ նմա զգե-
րագոյն արարածս բնութ՟ն, որք ապացուցանեն
զանվախճան իմաստութ՟ն արարչի նորա, ուստի
նմա

նմա լաւ ես քննել զշաւիղս վերնախնամ տեսչութե՛ · այս դարձեալ առ բարեկամն նո՛ր խօսիւ կշտամբեաց զնո՛ յաղագս անտեղի նա-խատանացն հասուցելոց առ այս փառաբանող, և առ 'ի հաստատել, թէ նորա անխրատեցան 'ի բարեկամն՝ զոր կշտամբեցին, և թէ ինքն (Յոբ) ողորմած է յորբս, հակառակ եկեալ հանեալն առ նա թշուառութեան դարձոյց նմա զառողջութիւն և զմեծամեծ հարստութիւնս յաւէտ քան որոց ունէր նա յառաջն · Յոբ վերստին հայրացաւ բազմամարդ գերդաստա-նի, յորմէ և սերեցան երջանիկ սերունդք, և զեմ զմնացուածս կենաց իւրոց յերկարելոց եօ հարիւր և քառասուն ամ, վայելէր նա 'ի կատարեալ երջանկութե ·

## Օգտակար խրատք:

ա. [illegible]

Ամենագէտն ծանեաւ, թէ յոբ էր անարատ և արդար 'ի բովանդակ երկրին յայնմիկ չէր ոք նմին զուգակշիռ:

բ. [illegible]

Յոբ պրկեցաւ 'ի գոյից, յորդւոց և յառողջու-թենէ · կորոյս զա՛մ զցանկալիս ցանկալիս որոյ:

Գ. Ի՞նչ մխիթարութիւն զգալոց է բարեգործաց աղքատն:

Ճ՛շմարիտ հատուցումն յորոյ փոխարէն զնա-
տուցն, զոր կերայ.

## Պտուղք բարեպաշտութեան

Ոսկի հրով մաքրի, իսկ մարդ վտա-
րանդութեամբ։ Համբերութիւն առնէ զմեզ ներկա-
և մաքուրս, և տալով եւ նկրտեցուցանէ ըզ-
սիրտ առ բարին և հաճոյ է 'ի չարէն. Իսկ
օգնականութեամբ քոյ ամենակալ զօրութիւն, զգա-
ստասցուք համբերութեամբ թշուառութեանց, որք
հարկաւոր են յաշխարհի կեանս, և վիշտք մեր թե-
թեւասցին։ Ապաւինութեամբ հնազանդութեան կամաց
քոց՝ հայր երկնաւոր՝ եղիցի զաւազան, որով
անձնապահ լիցուք յանցս կենցաղական փշալից
ճանապարհի.

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԽԴ.

Յաղագս երից մանկանց արգելելոց 'ի հնոցն բաբելոնի:

Նաբուգոդոնոսոր արքայ բաբելացւոց
հրամայեաց ձուլել զարձան ոսկի, բարձրու-
թիւն նորա վաթսուն կանգուն, և լայնութիւն նորա կան-
գուն վեց, և կանգնել 'ի գեղեցիկ դաշտա-
վայրի միում յաշխարհին բաբելացւոց. ապա
հրամայեցաւ համայն հպատակաց նորա անկանել

առաջի Թերափիմոյն և երկիրպագանել · իսկ զոչերկրպագուսն նոյնժամայն ընկենուլ ՚ի հնոցրն հրաբորբոք ։ Լուեալ ամենեցուն զհնչիւն փողոց և ամ գործարանացն նուագարանաց, անկեալ երկիրպագին Թերափին · այլ երեք անձինք ՚ի հրէից մանկունք ազնուականք, սեդրաք, միսաք և աբեդնագով ոչ կամեցան երկիրպագանել անշունչ արձանին ։ Նոքոյն հրրամայեաց ածել զնս առ ինքն և սպառնացաւ բորբոքեալն հնոցաւ, եթէ ոչ կատարեսցեն զկամս իւր, ասելով տեսցուք որ ածն փրկեսցէ զձեզ ՚ի ձեռաց իմոց · առ որ պատասխանի հետևեցուցին մանկունքն, թէ ած՝ զոր մեքն պաշտեմք՝ կարող է առանց իրիք փոքրագոյն վնասու պահպանել զմեզ ՚ի բոցոյն · իսկ եթէ և զայս չարասցէ, յայնժամ ևս ոչ պաշտեսցուք զքև կանգնեալ Թերափին ։ Նոյնժամայն արքայն զայրացեալ՝ հրաման ետ ջեռուցանել զհնոցն եօթնապատիկ առաւել քան զառաջինն, և զօրականք ը հրամանի նր կալեալ կապեալ զերիս մանկունսն արկին ՚ի ջեռուցեալն հնոց՝ ամ հանդերձիւք նց ։ Զհնոցն այն այնքան սաստիկս էր բորբոքեալ, մինչև բոցով նր խանձողեցան և զօրականքն, որք արկին ՚ի հնոց անդր զհրէայ մանկունսն ։ Երեքին մանկունքս այսոքիկ ոչ թէ միայն կացին ծփացին ՚ի հնոցին անվնաս, զի հրեշտակն՝ որ էր ընդ նոսա՝ զհրոյ քաղցրացոյց զներգործութի այլ և երգէին զերգս գոհաբանական Ածմար_



տին

տին Ր.Ժ : Տեսեալ Նաբուգոդոնոսորայ, թէ չորք են անձինք ՚ի հնոցին և ոչ երեք, յանկարծ զարհուր հարաւ, և հրամայեաց արձակել անտի զմանկունսն. կոչանել որոց ՚ի հնոցէն՝ ոչ թէ միայն հերք նոցա էին ամբողջ, այլ և ՚ի զգեստ-նոցին չբուրէր իւիք հոտ հրոյ : Հուսկ յետոյ Նաբուգոդոնոսոր հրաման ետ, զի ոչ ոք յան-դգնեսցի հայհոյել զԱծն, զոր սեդրաք, մի-սաք և աբեդնագով պաշտէին :

## Օգտակար խրատք :

Ա. Ողջմտութիւն պէտք պահել պա՛րտ է նա մե-ծին յոյժ :

Ո՛րպէս արարին մանկունքն, որք լաւ համարե-ցան անձնատուր լինել հնոցին հրոյ, քան թէ անցանել զտառ աստուծոյն գրած :

Բ. Հրեշտակք Տն հովանաւորեն եւ պահպանեն զար-դարս :

Հրեշտակին պահապանին թոյլ չետ հրոյն ներ-գործել ՚ի բարեպաշտ մանկունսն :

Գ. Ո՛չ է պա՛րտ երկրպագել զայլ ստեղծագործութե̃ :

Ա՛յլազգ վարեցաւ Նաբուգոդոնոսոր, որ կանգ-նեաց զարձանն ոսկի, զի երկիրպագեսցեն այնմ :

## Պատուէր բարեպաշտութե̃ :

Երեք մանկունքն բարուոք դաստեցին



կուռն

կործանել ՚ի հնոցի հրոյն բորբոքելոյ, քան թէ զաստուծոյն լուծանել զպատուիրան Ա՟յ. Մի դուք խոստովանողք անուանին ք՟ի, զի՞նչ տանջիք որդեօք ՚ի տեսանելն անկենդանութեան զհնոցն ջեռուցեալ. փոքր միւս ևս՝ և նուաղէք հաւատ ձեր: Պնդեցուք մեզ կանոն աղօթել առ Տ՟ր մեծազօրայն և վեհ, զի մի՛ տարցէ զմեզ ՚ի փորձութ՟ի:

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԽԵ.

Նորոգէ դանիէլին օրինակն ՚ի գուբն առիւծուց:

Դարեհ արքայ բաբելացւոց տեսեալ զգերագոյն հանճար դանիէլի, կարգեաց զնա գլխաւոր տեղակալ ՚ի թագաւորութեան իւրում: Այսօրինակ գերամեծարութ՟ի ՚ի վերայ գրգռեաց զնախանձոտ պալատականսն, որք ջանահնար լինէին կորուսանել զնա. վասն որոյ հաւանեցուցին զարքայն դարեհ զայնպիսի հանել հրաման, զոր անկարելին իցէ դանիէլի կատարել. և յանուանէ հրամայեցաւ, զի զաւուրս երեսուն մի՛ ոք մատուսցէ ըզ խնդրուածս իւր ա՟յ իւրում, այլ դարձցին ամենեքեան ՚ի խնդիր յարքայէն. իսկ եթէ ոք կարդասցէ առ ա՟ծ, զայնպիսին յառիւծուցն արկանել նոյնժամայն ՚ի գուբ: Դանիէլ ոչ հետե-



ւեցաւ

ւեցաւ այսմ հրամանի , այլ երիցս անգամ
յաւուրն աղօթէր առ Ճշմարիտն Ա՟Ծ : Երբև
լուաւ զայս արքայն , տրտմեցաւ յոյժ վասն
դանիէլի և կամէր ազատեցուցանել զնա . սա_
կայն ամբոխն ներհակ արքայականն կամաց ըն_
կէց զդանիէլ 'ի գուբն առիւծուց , որում
ասաց դարեհ , թէ ած՟ զոր դու պաշտես ,
փրկեսցէ զքեզ . և կնքեաց զվէմն կափարիչ
բերանոյ գբոյն այնորիկ , զի մի ոք չար ինչ
նխութեսցէ դանիէլի : Արքայն այնքան յանհնա_
րինս եմուտ այսր պատճառաւ , մինչ զի զայն
որ անճաշակ մնաց և զգիշերն ողջոյն չարխեաց
աւանց քնոյ . վաղվաղ ըն՟ առաւօտն եկաւորէլ
'ի գուբն առիւծուց ձայն արձակեաց , դանի
էլ ծառայ Ա՟Յ կենդանւոյ , կենդանի՞ իցես
դու . դանիէլ ետ նմա պատասխանի , ած՟ ա_
առաքեաց զհրեշտակ իւր , որ այնպէս եխից զբե_
րանս առիւծուց , մինչ զի նոքա և ոչ ևս մեր_
ձեցան յիս . Խնդացեալ արքայն ընդ այս ,
նախ հրաման ետ հանել զդանիէլ 'ի գբոյ
անտի և ապա արկանել յայն զարս չարախօս
զդանիէլէ հանդերձ կանամբք նոցա և որդ_
ւովք , և առիւծքն 'ի քթթել ական պատա_
ռեցին զյանցաւորսն զայնոսիկ : Վաղվաղակի
յետ այնորիկ հրաման ետ դարեհ , զի երկիցեն
ամենեքին 'ի զայրացուցանելոյ զած՟ն դանիէլի :
Յետ ժամանակաց ինչ յաւուրս թագաւորու_
կիւրոսի՝ երկիրպագանէին 'ի բաբիլոն թե_
րափին բէլայ , որում զօրհանապազ մատուցա_
նէին

նէին ՚ի պատարագ պցորեան մաքուր յոյժ
երկոտասան քոռ, զքառասուն ոչխար և զգինի
վեց մար ։ Զայս ամ՟ լափլիզէին քուրմքն ՚ի
միասին ը՟ ընտանեաց իւրեանց, ասելով ար-
քային, թէ կուռքն զամ՟ օր պահանջէ զայնչափ
քանակութի՟ պարէնից ։ Դանիէլ ՚ի յայտ էած
զխաբէութիւն, զի արքայն կամելով հաւատեա-
իրազեկ լինել, ինքնին առաջի եդ բէլայ ըզ-
կերակուր և մատուցեալ իւրով կնքեաց ըզ-
դրունս մեհենին, ուրանօր եկեալ ը՟ առաւօտն
ետես, զի դուռն կնքեալ էր, իսկ առաջակայն
կերակուր ծախեալ, ՚ի ձայն մեծ աղաղակեաց
մեծ ես բէլ, և ոչ գոյ նենգութի՟ ՚ի քեզ և
ոչ մի ։ Ծիծաղեալ դանիէլի եցոյց արքային
զհետս արանց, կանանց և մանկանց ՚ի վերայ
մոխրոյն, զոր յառաջագոյն ցանել ետ ինքն դա-
նիէլ ընդ ամ՟ յատակս մեհենին, յոր քուրմքն
մտանէին գիշերի և զամենայն ինչ առաջի ե-
դեալ ուտէին և ըմպէին ընտանեօք իւ-
րեանց ։ Հաւատեալ արքային զխաբէութիւն,
հրամայեաց կալնուլ զքուրմսն, յորոց ան-
ցեկացեալ գաղտագողի դրանցն, ընդ որս
մտանէին նոքա ՚ի մեհեան անդր, աղա զամենեսին
զնս՟ պատուհասեաց չարաչար մահուամբ ․ իսկ
զբէլ ետ ՚ի ձեռս դանիէլի, որ կործանեաց
զայն ՚ի մեհենին ։ ՚Ի բաբաբիլօն էր ևս մեծ
վիշապ մի, զոր պաշտէին բնակիչքն իբրև
զա՟ծ ․ դանիէլ կամելով հանել զժողովուրդն
՚ի մոլորութէ՟ անտի, էառ զձիւթ, զճարպ և



զքուրդ

կպրուդ, զորս 'ի միասին եփեաց և զզանգեալն զայն խառնուրդ ետ կլանել վիշապին, և օձս այս ոչ յաղթեցաւ յայնմանէ: Յայնժամ ասաց դանիել առաջակայիցն, ահա այսպիսի են ա̃ծք ձեր: Որտամտել բաբիլացւոց վերստին արկին զդանիել 'ի գուբն առիւծուց, ուրանօր եկաց մնաց նա զաւուրս վեց: 'Ի գբի անդ կային եօթն առիւծք, որոց տային յաւուրն զերկուս մարմինս մարդկան և զերկուս ոչխա-րուձակս· այլ յայնոսիկ վեց աւուրս ետուն նց և ոչինչ, զի նոքին գիշատեսցեն զդանիել: Ո այսու ժամանակաւ մարգարէն Ամբակում տանէր յանդն զկերակուր հնձուոր մշակացըն· հրեշտակ տ̃ն եած զնա 'ի բաբիլոն յայն խուկ տեղի, ուր կայրն առիւծուցն գուբ· իսկ 'ի դադարեցուցանել դանիելի զքաղցն իւր, հրեշտակն տարաւ անդրէն զԱմբակում յառաջին իւր տեղի: Յաւուրն եօթներորդի եկն արքայն 'ի բերան գբոյն, և հրամայեաց արձակել զդանիել· իսկ ատելիք նր, որք ընկեցանին անդր ը̃ հրամանի արքային, նոյնժամայն գէշէշ պատառեցան յառիւծուց անտի:

## Օգտակար խրատք:

ա. Ո ձիթաբերան ծծպաշտուն պտղոյ է խառնել ուռուցի ծն աշխարհի:

Դանիել երիցս անգամ յաւուրն աղօթէր

առ Տր̃

ռուճշմարիտն Ած, և 'ի ժամանակի հալածանացն
եւս զնոյն գործէր :

Ե. Ոչ ով փորձ տեղեալ զմարդկութեան, նա յանձն առնորդեալ 'ի նոյն անձինս :

Այս կատարեցաւ 'ի վերայ առաքելոցն Դա-նիէլի յաղթանակիւ նոյին 'ի գուբն առիւծուց :

Զ. Զերծանող 'ի մոլորութեն ե-բերանոց ուշիւք նորին կարէն գտանել զներքոյն տառապեալ Այ :

Նախնացեալք ունէին զմիջոցս ճանաչելոյ Ըն-տրեալս աստուած , այլ միայն 'ի խաւարամած կուրութեան խորհեանց :

## Պտուղք բարեպաշտութե :

Պանծել զօրհնաբանութի մերընծայել զպարտս Տն Այ և 'ի յաջողութե և 'ի ձախոր-դութե : Մի՛ թողցուք զօր մի առանց աղօթից . առաւօտուց թօթափելով զքուն , փառաւորես-ցուք զանուն Տն . և 'ի նինջելն վերբերդեցուք նմա 'ի բարձունս զերգս գոհաբանական :

## ԳԼՏՄՈՒԹԻՒՆ· ԽԳ:

### Յաղագս ապաշխարին Նինուէի :

Նինուէ էր այնքան մեծ քաղաք , մինչ զի վասն անցանելոյ Գ այն հարկաւոր էին ա-



ւուրք

ատաղք իբրեւ երեք · ՚ի նինուէացիս ոչինչ էր
բարի եւ ոչ մի · չարութիւն ոչ էր անսահման :
Արդ առաքեաց ած առ նա զմարգարէն յօ-
նան քարոզել զապաշխարութին · յանձն չարար
զայն, զոր հրամայեաց նմա տր, այլ փախու-
ցեալ ելանէր ՚ի նաւ մի : ՚Ի ժամ նաւարկութե-
անն ՚ի ծովուն յարեաւ մրրիկ մեծ, յորմէ
գործեցաւ այնպիսի ալէկոծութին, մինչեւ անակ-
նաւանելքն իմն վտանգի մօտաւորեալ էր նաւուն :
Սոսկալեալ նաւավարացն արկին ՚ի բաց ծո-
վուն զամ զվաճառսն առ ՚ի թեթեւութին նաւուն.
սակայն այս ամ հնարք ոչինչ օգնեցին · յայ-
սմ միջոցի պառակեալ ննջէր ՚ի խորշ մի
նաւուն յովնան, զոր զարթուցեալ նաւավարացն
ասացին նմա կարդալ առ ած իւր իբրեւ
զայլս · եւ յետ այսորիկ համաձայնեցան վիճակս
արկանել առ ՚ի գիտել, թէ ո՞ արդեօք իցէ
պատճառ թշուառութեա այսորիկ · եւ իբրեւ
արկին, նոյն ժամայն ել վիճակն յովնանու, որ
՚ի նմին իսկ ժամու խոստովանեցաւ զմեղս
իւր, որք սոսկալեալ էին զնա փախչել յե-
րեսաց ան : Յովնան խորհուրդ ետ նոցա ըն-
կենուլ զինքն ՚ի ծով անդր, զի դադարեսցի
ծովն յալէկոծութէ · այսքն՝ որք ՚ի նաւուն է-
ին, արարին զայս, եւ ծովն իսկոյն դադար է-
առ : Զովնայոյզն յովնան կլեալ եղեւ ՚ի կէ-
տէն, ՚ի փոր որոյ մնաց զերիս տիւս եւ զերիս
գիշերս · յայսմ նեղութե կարդայր առ ած,
եւ տր լուաւ ձայնի աղաղակի նր եւ հրամա-

 յեաց

յեաց կիտին ընկենուլ զնա անվտանգ ՚ի
ցամաք: Այս կրկին անգամ հրամայեաց
աստուած յովնանու գնալ ՚ի Նինուէ,
և քարոզել զապաշխարութի. և գնացեալ յո-
նան առ նինուէացիսն նախապատմեաց, թէ
քաղաք նոցա յետ երից աւուրց կործանե-
ցի: Նանկչայն լուեալ զայս, դիմեցին յա-
պաշխարութի, և դարձան առ տր. ինքն արքայն
մերկացեալ յինքենէ զծիրանին, զգեցաւ ըզ-
քուրձ, և մոխիր ցանեաց զգլխովն իւրով, և
բաց յայսմանէ հրաման եհան, զի ոչ թէ մի-
այն մարդիկ, այլ և անասունք իսկ անճաշակ
մնասցեն ՚ի կերակրոյ: Տեսեալ այ զբեկումն
սրտից նց, գթացաւ և դարձոյց և անցոյց ըզ-
պատուհասն, զոր ածելոցն էր զնոքօք. սակայն
այս այնքան ցաւագին ցուցաւ յովնանու, մին-
չև ցանկայր մահու, վս այն զի կանխասացութի
նր ոչ կատարեցաւ: Վս այսորիկ դժգոհելով
յովնանու, ել ՚ի քաղաքէ անտի, և ոչինչ հե-
ռի յայնմանէ արար ինքեան զխրճիթ մի հովա-
նի՝ սպասելով, թէ որպիսի վախճան հասցէ
քաղաքին այնմիկ. յայնժամ բուսոյց ած ըզ-
դդմենի, որ հովանացի ՚ի ժամ տապոյ ՚ի վեր
բնակարանի մարգարէին, և յովնան ՚ի վերայ
այսորիկ ուրախ եղև յոյժ, այլ ուրախութի
նր չէր տևողական, զի առաքեաց ած զորդն,
որ եհարն զդդմենին, և ցամաքեցաւ այն.
իսկ իբրև սկսաւ արևն այրել զգլուխ մար-


դա

դարէին, յայնժամ նա 'ի տագնապոյն և 'ի փղձկողութենէն ցանկայր մեռանիլ. որում ասաց աստուած, դու խնայեցեր 'ի դդմենին, յոր չերկեր ինչ աշխատ և ոչ անկեցեր. զի՞նչ է բոյս այս 'ի համեմատելն ընդ քաղաքին, որ պարունակեալ ունի յինքեան աւելի քան զհարիւր քսան հազար անմեղ մանկունս: Յօնան ծանեաւ, թէ որ այնքան ողորմած է, որքան և արդարադատ:

## Օգտակար խրատք.

ա. Ողորմած է աստուածն, թէ 'ի մեծամեծ յանցաւորս մեծամեծ էին և յանցանքն:

Զայս ապացուցանէ Նինուէ քաղաք, որ այնքան ծանրաբեռնեալ գոլով մեղօք, մինչ զի կամեցաւ ած պատուհասակոծ առնել զայն.

բ. Բարեխօսաց աղաղակութիւն լսելի ո՛րքան է.

Նոյնպէս վարեցան Նինուէացիք, որով և յետոյ ընկրկեցին յանձնէ իւրեանց զկորուստն մահակալուտ:

գ. Մարգարէն ցնծեալ էր օրինակ այ քի.

Մեղադրեցին համարել զնա սպառնալիս վասն այնորիկ, զի նա 'ի մտի կամէին մնաց զայնքան աւուրս, որքան քս 'ի գերեզմանի:

## Պտուղք բարեպաշտութե՟ն.

Նինուէացիք սկսան ողբալ զկանգանըս իւրեանց դառն արտասուօք յասել մարգարէին յօնանու, Թէ քաղաքն կործանեսցի։ Եւ մեզ օրինակ լիցի նինուէ քաղաք. ա՟ծ գթացաւ ՚ի վերայ նր՟ ՚ի տեսանելն ըղջարձ նր՟. և մեզ անշուշտ պէ՛տք են դիմել առ այս դեղ բժշկուե՟ն հոգեկան ախտից, առ այս մաքրութիւն ՚ի մեղաց։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. խէ։

## Յաղագս Յովսէփայ.

Որքայն նաբուգոդոնոսոր ունէր զըսպարապետ մի հողոփեռնէս անուն. սա բազմամարդ զօրօք անցանէր յերկրէ յերկիր, և ՚ի սուր սուսերի մաշէր զա՟մ հակառակորդսն։ Իսրայէլացիք լուեալ զայս, կարգեցին պահս և զապաշխարութի՟ ՚ի պաշտպանութի՟ իւրեանց. սքանչացեալ հողոփեռնեայ ընդ այս, անցոյց զզօրս իւր առ ՚ի պաշարել զբետուղուայ ամրոցն հրէից. այլ յառաջագոյն ժողովեալ ըղտեղեկութիւն զժողովրդեանն հրէից առ ՚ի խելամուտ լինել, թէ ուժե՞ղ են նոքա և քաջարի։ Աքիոր առաջնորդ որդւոցն ամմոնայ



խօր

խորհուրդ եւ նմա տեղեկանալ յառաջ
քան զմն ինչ, թէ հրէայք մեղուցեալ են
արդեօք առաջի տն իւրեանց թէ ոչ. եթէ
մեղուցեալ են, դիւրաւ մարթ է յաղթել
նց. այլ եթէ անմեղ են առաջի տն, ասորեք
խայտառակեսցիմք առաջի նց: Հողոփեռնէս այ-
ացքեալ բանիւք շարժեալ ՚ի սրտմտութե բար-
կուե, հրամայեաց ածել զաքիոր ՚ի բե-
տեղուայ առ խելացիսն, զի եւ նա կրեսցէ ընդ
նց զհաւասարակշիռ պատիժ պատուհասի.
Տայր հրաման եւ կալնուլ զմն աղբեւրս,
յորոց ջուրն գնայր մտանէր ՚ի քաղաք անդր,
եւ ՚ի վերայ ջրհորն եղելոց ՚ի մերձակայս քա-
ղաքին կացոյց զպահապանս: Յայնժամ ՚ի
պաշարեալն քաղաքի անդ յառաջացաւ այն-
պիսի պակասութի ջրոյ, մինչզի քաղաքացիքն
լոռ եւս համարեցան անձնատուր լինել,
քանզի մեռանէին ՚ի ծարաւոյն սաստկութե.
եւ ՚ի վերջոյ հաւանեցան համբերել եւս զաւուրս
հինգ, յորս եթէ Ած ոչ տացէ նոցա զօգ-
նութի, յայնժամ տացեն զքաղաքն. ՚Ի սմին
յայսմ քաղաքի կայր չքնաղագեղ այրի կին
ումն յուդիթ անուն, որում շնորհապարտ են
բնակիչքն յաղագս ազատութե իւրեանց ՚ի յան
դուգն յարձակմանէ անտի ասորւոց: Յուդիթ
ոչ ումեք ինչ ասացեալ զդէմ եդեալ դի-
տաւորութե իւրմէ, խնդրեաց միայն ՚ի քաղա-
քացւոց անտի արխամիս աղօթել առ տր վասն
իւր. ապա ՚ի թշնամեացն գնաց ՚ի բանակ, եւ

խոստացաւ Հողոփեռնեայ ցուցանել զհնարս
որով առաւել ևս փաղփաղակի հնարիցէ առ-
նուլ զքաղաքն ։ Այս խորհուրդ կամաւորե-
ցաւ նա բացայայտել այսու պայմանաւ, զի՛
մի արգելցէ զք նմա ընդ առաւօտս և ընդ ե-
րեկս աղօթել արտաքոյ բանակին ցայն վայր
մինչև զխոստումն իւր ածցէ ՝ի կատար ցան-
կալի ։ Գոլով Հողոփեռնեայ ծայրացեալ ծո-
փացեալ ՝ի խնդութե, հրամայեաց պահապանացն
չարգելուլ նմա ելանել ը̄ նաժշտի իւրում
յառաւօտս և յերեկոյս ՝ի բանակէն ։ ՚Ի չոր-
րորդն աւուր Հողոփեռնէս հրաւիրեալ զյու-
դիթ ՝ի սեղան իւր, ընկալաւ զնա այսու բա-
նիւ, Նստո, կե՛ր և ուրախ լեր ը̄ մեզ ։ Զի՞
գեղ քո քաղցր է մեզ ։ Յուդիթ ետ պատաս-
խանի, այո՛ տէ՛ր իմ, անպայմանս ուրախ եղէց
ը̄ ձեզ, զի զա̄մ աւուրս կենաց իմոց չէ իմ
տեսեալ բնաւ զայսպիսի պատիւ ։ Հողոփեռ-
նէս զմայլեալ գեղով դիմաց նր̄, զինէ հա-
բեցաւ առաւել քան զչափորութիւն ։ Ծառայք
նորա անձնատուր եղեն նոյնպէս անժուժկա-
լութե ։ Հուսկ յետոյ ՝ի խորանէ անտի ամ̄քեան
ցրուեցան, և մնացին միայն Յուդիթ և Հողո-
փեռնէս, որ յուժաթափութենէ տապլեցաւ
հանգչէր յանկողինս ։ Յայնժամ Յուդիթ ար-
տասուելով ասաց, տէ՛ր ա̄ծ Իէ̄լի, զօրացո՛ զիս
՝ի ժամուս յայսմիկ ։ Ապա հանեալ զհողոփեռ-
նեայն զսուր կախեալ ՝ի վեր քան զանկողինս
նորա, գլխատեաց զնա, և աղախին նորա եդ-



զայն

զայն 'ի մտաղախ։ Ընդ արշալոյսն գնաց յուդիթ
ը՟ սովորութ՟ն իւրում 'ի բանակէ անտի յա-
ղօթս և աղախին նր՟ ը՟ նմա, և 'ի լուսանալն
աւուր եմուտ 'ի քաղաքն և ոչ ևս դարձաւ
'ի բանակ թշնամեացն. և 'ի ժողովել ծերա-
կուտին քաղաքի 'ի հրապարակն, եհան 'ի մա-
ղխէ անտի զգլուխ հողոփեռնեայ. Ընդ էն
ձեռքեան խնդացին և 'ի ծափել սաստկութն
տարրքն զերկեմուտս։ Տեսեալ ասորւոց զնս՟,
ծիծաղէին ասելով՝ զի՞ որդ փառահանան մը-
կունք եղանել յորջոյ իւրեանց. և սկսան հա-
մախմբել շուրջ զհողոփեռնեայն զխորանաւ. կար-
ծէին նոքա, թէ զօրագլուխ նոցա տակաւին
'ի քուն է. 'ի վերջոյ մուտ տարեալ 'ի խո-
րան անդր, թէ և գտին զմարմին նորա, այլ
զգլուխն ոչ երբէք։ Զօրացն լուեալ զայս,
լքին զբանակն և անձնամատն եղեն փախստեան։
Քաղաքացիքն բեռնեղուայ գտին զայնքան մեծ
աւար 'ի բանակին ասորւոց, մինչ զի բաժա-
նէին զայն զամբողջ երեսուն աւուրս. Աքիոր
որ էր երբեմն հեթանոս՝ դարձաւ առ ճշմա-
րիտն ած. իսկ յուդիթ երգեաց տն՟ այ՟ զերգ
փառաբանական։

## Օգտակար խրատք։

ա. Իմաստաբար խօսեցան նախնիքն, թէ աշխարհս
կառավարի իմաստութն՟ այ՟։

Ժողովրդեանս հասարակացորէն գիտնականութեան , վարեցաւ յիմաստասիրական յանձնառուժկալութենէն Ինքն գլխաւորապէս եղև , իսկ քաղաքն բնակչուաց տարածեցաւ 'ի պաշտամանէն . Իմաստասիրութիւն ան կառավարէ զմեզ .

Է . Միջնադարեան ուղղութեան դէմ 'ի գաղափարապաշտական ժա-մանակն է տիրեաց .

Իսկ ընտրեցեք բնակեղուաց քաղաքին որ դի-մէին յարգելի , դժուարաւ մտրթեանց յուղարկեալ 'ի կարգաց ամբողջ զայնքան մեծագործութիւնս

Ը . Մի՛ թշուառ անկեալ 'ի նիր արքունի գործեր ... 'ի կայ աշխարհ գերագոյն ... և եղեւեղ իս .

Ժողովրդեանս ընկալաւ զմեծ իւր ող 'ի ձեռաց քաղաքաց զօրավարաց ուրանք , որք անցեր կեանս .

## Պատուէրք քաղաքապաշտութե .

Արդ յայն եղեալ կանդուղեալ յամե-ն ... երբեք միացէ ապարդիւն , զայս հաստա-տէ յուղիղ , որոց ձեռօքն փրկեցաւ բնակեղ ուայ 'ի պաշտամանէ անուանս , մինչդեռ ոչ եւ ... ամենեցեն յայս աղօթեալ նոր : Իսկ որդ-յաւերել սուրբ և պատերազմի զնմ . և 'ի ... անհանգիստ ժամանակին , անհրաժե-շտ յայս մեր և ուրախութե դա միայն եղե-ցեն ամենակարող տր .

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽԲ.

### Յաղագս անքաչելմանուէց ծերունւոյն Տօբիթայ:

Ծերունին տօբիթ էր այր բարեպաշտ յազգէ նեփթաղիմայ. միածին որդի նր՟ կոչեցաւ նոյնպէս տօբի, որ ՚ի մանկութենէ հետէ զարգացաւ ՚ի բարեպաշտութն՟: Ծերունին տօբիթ բնակէր ՚ի նինուէ մինչև ցգերեվարութին՟ իսրայելացւոց. և որովհետև պաշտէր նա զած՟ յամ՟ սրտէ, և ամենեքին համարէին զնա անձն առաքինի, վսյ՟ և ՚ի գերութն՟ անդ շահեցաւ զօգտութի՟: Յոգունք յազգատոհմէ նորա ըսպանան և անկեալ կային անթաղ, այլ տօբիթայ տեղեկացեալ, թէ ոք յեղբայրակցաց անտի իւրոց դիաթաւալ կացուցեալ դնի ՚ի հրապարակս և ՚ի փողոցս, գնայր գիշերի, և զդի նորա ամփոփեալ դնէր ՚ի դիր հանգստեան: Միանգամ պատահեցաւ, զի նա վաստակաբեկ դարձեալ ՚ի տուն, պառկեալ ՚ի ննջելն խոնարհեցաւ առ որմովքն, և ծերտ անկեալ ՚ի ձնձղկանցն բունոյ յաչս նորա՝ զրկեաց զնա ՚ի տեսանելեաց. յայսմ ձախորդութն՟ նորա ծաղր զնովաւ առնէին բարեկամք նորուն՝ ասելով ցնա, ուր է յոյս քո. որպիսի օգնականութեան ակն ունիս յողորմութէ՟ անտի, զոր դուդ առատաձեռնեալ բաշխէիր: Կին նր՟ եբեր յաւուր միում զուլ մի, զորոյ լուեալ տօբիթայ

զմիկոց, եհարց ցնինն, յերգէ՛ գողունի ուղե-
ւորդ. կինն վնկ այնքան արտմտեցաւ ՚ի վերայ
նորա, մինչ զի զօր ամ յերես ածէր նմա ըղ-
ձախորդութին: Տօբիթ վշտահար՝ բաւ եւս հա-
մարէր մեռանել, քան թէ կեալ ՚ի տագնապի
եւ ՚ի տառապելութե. վա՛յ եւ արտասուածին աչօք
վերամբարձեալ յերկինս հայցէր յայ զվախճան եր-
ջանիկ: Ի կողմանս մարաց յեկբատան ան-
ուանեալ գաւառի բնակէր միւս եւս գերե-
վարեալ հրէայ ոմն Ռագուէլ անուն. ունէր
նա զդուստր սառրայ կոչեցեալ, որ թէեւ
տասն կնութե եօթն արանց հետզհետէ, սա-
կայն ազմոդեա դեւն չար սպան զամենեսին զնս
յառաջնումն գիշերի: Աղախին հայրենի տան
նր կշտամբելով զնա ասէր, մի՛ թէ կամիս եւ
զիս սպանանել որպ սպաներդ զեօթն արս քո:
Լուեալ սառրայի զայսպիսի կծողական կըշ-
տամբութիւն, խոյս ետ յուր ննջետող եւ առ վըշ-
տին ոչ եկեր եւ ոչ էարբ բնաւ զամբողջ ե-
րիս աւուրս, այլ անդադար վերընծայէր այն
յայ զաղօթս իւր, զի բարեհաճեսցի ՚ի բաց բառ-
նալ ՚ի նմանէ զնախատինս: Բովանդակութի
մտաց աղօթիցն նր էր այսպէս, տէ՛ր ած,
դու՝ որ սաստես սաստիկ կատաղութե մրրկաց
եւ վերականգնեալ յարուցանես զհանդարտութի,
եւ յետ արտասուացն հեղման եւ ողբոց աղաղա-
կի շնորհես զուրախութի, կարճեա՛ ուրեմն
եւ զիմ աղէտս: Զաղօթս զայս մատոյց
սառրայ յեկբատան քաղաքի ՚ի նմին իսկ ժա-



մու

մու, յորում ծերունին տօբիթ փափագմամբ հայցէր ինքեան զմահ ՚ի Նինուէ ։ ՚Ի մի և ՚ի նոյն ժամու լսելի լինէին աղօթք երկաքանչիւրոցն, թէ և բնակութիւք նոցա հեռի էին ՚ի միմեանց ։ Հրեշտակն ռափայէլ առաքեցաւ յազատել նոյն ՚ի ձախորդութեանց անտի՝ նոցին պատահելոց ։

## Օգտակար խրատք ։

ա. Տօբիթ կրթեաց զորդի իւր զերկիւղ Տն ՚ի մանկութենէ հետէ ։

Պարտ է սկսանել զհրահանգ որդւոց ուսուցանելով զերկիւղն Տն ։

բ. Սովորաց համբերելով նախատանացն՝ յերկնից առ որ ցանկացաւ գահացանին մրցանակին ։

Լաւագոյն հնարք սանձելոյ զչարախօսութիւն է լռութիւն. չարեաց չարիս հատուցանել՝ անվայելուչ է քրիստոնէի ։

գ. Տօբիթ ոչ ևս հայցէր, այլ Տն զարգացոյց նմա շնորհս առաւել տեսանել աչաց ։

Այս օրինակ վարի Տն ՚ի խնդրելն մեր ՚ի նմանէ զոր ինչ վնասակար մեզ ։ Աղօթք հաւատացելոցն միշտ լսելի լինին, այլ մեք ոչ միշտ զնոյնն ստանամք, զոր խնդրեմքս ։ զի Տն ըստ ամենիմաստութեան իւրում և սիրոյն առ մեզ զօգտակարն յաւէտ քան զվնասակարն ։

## Պտուղք բարեպաշտութեան.

Մեծ էր յոյժ ձախորդութիւն պատահել տօբիթայ, այլ նա մնաց հաստատուն յանձին իւրում, և բարեպաշտութիւն նորա էր անկեղծաւոր։ Ած մեծ, եթէ կամք իցեն քեզ փորձել զմեզ ձախորդութեամբք, յայնժամ դու միայն լե՛ր մեզ տեղի ապաստանի և մխիթարութիւն։

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԽԹ.

### Յաղագս ուշիմութեան երիտասարդին Տօբիայ։

Ծերունին տօբիթ փոխ ետ զտասն տաղանդս արծաթոյ առն ումեմն բնակչի հը ռագաւ քաղաքի մարաց. իսկ վերջինս այս գաբայէլ անուն ետ նմա յաղագս արծաթափոխատուութեան զմուրհակ։ Արդ այս գաբայէլ ի մոտի եղ տօբիթ՝ առաքել զորդի իւր զտօբիա ստանալ զփոխ տուեալ պարտսն. ցանկացեալ տօբիայ ունել զքաջարելու ռահակից ընկեր, եգիտ զերիտասարդ մի բարի, և սա էր հրեշտակն ռափայէլ, զոր առաքեաց Ած վասն նորա. բայց տօբիա անգէտ էր այսմ, զի հրեշտակն ըստանձնեալ էր զձևակերպ մարդոյ։ Երիտասարդն տօբիա ի խօսիլն ընդ նմա՝ ե հարց ցնա ասելով, գիտե՞ս զճանապարհ ի հռագաւ. պատասխանի ետ հրեշտակն, թէ բազում անգամ եղեալ եմ անդ և օթագա



յեալ

յետոյ տա գաբրայէլի, և այս բան կարի զուար-
թացոյց զտօբիա։ Գաբրայէլ էր նա ինքն, յորմէ
պարտ էր ստանալ զարծաթի գանձականն, ուստի
և զայսմանէ յայտնեաց տօբիա հօր իւրում։
Հրեշտակն ողջոյն ետ ծերունւոյն տօբիթայ
այսպիսի բանիւ, առաքեսցէ քեզ տր զուրա-
խութի. Կոյրն տօբիթ պատասխանեաց, ուստի՞ է
ինձ ուրախանալ, զի չկարեմ տեսանել զլոյ-
սաւորն. Հրեշտակն մխիթարելով զնա՝ ասաց.
համբերէ՛ խուն մի, և այ օգնեսցէ քեզ. և
՚ի պատրաստել այս իրաց ճանապարհորդութե.
որդին ետ հրաժարական ողջոյն հօր և մօր իւ-
րում։ Հայրն յարձակեալ զորդին անվրդով
հոգւով ասաց, երթայք, տր եղիցի ձեզ ճա-
նապարհորդակից, և հրեշտակ նր առաջնորդես-
ցէ ձեզ. իսկ մայրն ներհակ այսմ աղբերա-
ցուցանելով զարտասուս՝ դժենոյր զորամութի
վն արձակելոյն զնա, որ միայն էր մխիթարութե
ծերութե իւրոյ, Այսպիսի կերպիւ ճանապար-
հորդեաց երիտասարդն տօբիա ընդ ուղեկցի
իւրում առեալ ընդ ինքեան զշունն տան հօր
իւրոյ։ Գնացեալ իբրև աւուր միոյ ճանա-
պարհ, կամք եղեն տօբիայ լուանալ զոտս իւր
՚ի տիգրիս գետն, ուրանօր եկեալ, ետես նա
զամենամեծ ձուկն մի, որ գայրն ՚ի գետոյն
իբր ՚ի կլանել զնա. յայնժամ սկսաւ տօբիա
զահի հարեալ աղաղակել առ ճանապարհորդա-
կից իւր ասելով, թէ ձուկն կլանել կամի զիս.
հրեշտակն հրամայեաց նմա բռնել հարկանել և



զայն

զայն հանել 'ի ցամաք. և կալեալ ձուկն այն կայտա-
ռայր զոտիւք տօբիայ. յայնժամ հրամայեաց նմա
հրեշտակն յերկուս պատառել զայն, և հանել
զսիրտն, զլեարդն և զլեղին այնորիկ՝ առնուլ
ը̅ իւրեան: Եհարց ցնա տօբիա, առ ինչ պի-
տանան են իրքս այսորիկ. և ընկալաւ պատաս-
խանի, թէ այնորիկ անշուշտ հարկաւոր են 'ի
հալածել զպիղծ ոգիս և 'ի բուժել զաչս:
Յաւարտ ճանապարհորդութե̅ն սկսաւ տօբիա
փութանիլ և հոգալ, թէ ո՞ւր իջևան կալցեն.
և հրեշտակն ասաց նմա, թէ հանգիցուք առ
Ռագուէլայ, որ ունի զամենագեղեցիկ դուստր
սարրայ անուն. դու կարես ժառանգել զս-
տացուածս նորա, եթէ առցես զնա կնութե̅:
Պատասխանեաց տօբիա, ես լուայ' զի սարրայ
տուաւ եօթն արանց 'ի կնութի, այլ ասմոդեւս
դեւն չար սպան զամենեսեան զնո̅ յառաջնում̅
գիշերի ամուսնութե̅. ասաց նմա հրեշտակն նախ՝
թէ սոցին ունի իշխանութի միմիայն 'ի վե̅ այնո-
ցիկ ամուսնոց, որոց մոռացեալ զա̅ծ՝ անսա-
նորէն թաւալին թաթաւին 'ի մարմնական
հեշտութի. ապա ուսոյց նմա, թէ ո՞պ հալա-
ծեսցէ զայսն չար, այսինքն՝ եթէ նա զառաջին
զերիս աւուրս յա̅ռ մտցն յամուսնութիւն՝
անցուսցէ աղօթիւք, և ապա այրեսցէ զլեարդն
հանեալ 'ի ձկանէն, յայնժամ ասմոդեւս ոչ
եւս ուժեսցէ ունել իշխանութի ինչ 'ի վերայ
նոցա:



Ոգտա

# Օգտակար խրատք:

ա. Հրեշտակն Ռափայէլ երևեցաւ 'ի ձև երի_ տասարդի:

Յայսմանէ երևի, թէ հրեշտակք թէպէտ ան_ մարմինք են և անտեսանելի, սակայն կարեն առ ժամանակ մի յանձին բերել զնմանութիւն մարդկան:

բ. Ծերունին Տոբիթ բարեմաղթէր ճանապարհորդ որդւոյ իւրում՝ շատ բարիս 'ի ճանապարհի:

Ծնողական օրհնութիւն որդւոց առաւել է քան զարծաթ և զոսկի՝ որով շահեսցին նոքա գանձ անկողոպտելի:

գ. Այսպէս Տոբիթ ասէր, սակաւն է ինչ առարկա_ նաց, մինչդեռ խաղաղ պահէ զինս:

Եւ մեք պարտիմք յիշել զայս, և զօր ամ_ հանապազ գոհանալ զԱյ, զի նա շնորհեաց մեզ զսուրբ վարդապետս, և ըստ բարութեան իւրում պահպանէ զայնոսիկ:

# Պտուղք բարեպաշտութեան:

Հրեշտակք ունին զերթևեկութիւն առ այնպիսի անձինս, որք հանգոյն Տոբիթայ բա_ րեպաշտք են և երկիւղածք յԱյ. և ներհակ այսմ որ ոք զուարճանայ չար զրուցօք, ա_ նի խորթեան ընկերշաւոց զայն չար: Ապաշխարես_ ցուք զմեղ, զի մի թողցէ մեզ մեկնել 'ի ճանապարհէն, որ տանի յառաքինութիւն, եւ հր_



րեշ

բերանոյն պահապան զդեղեւնէլ ատամանեալ ուղղեսցէ զոտս մեր ։

# ԳԼ. ՏԱՌԻԹԻՒՆ. Ժ.

## Յաղագս հարսանեաց երիտասարդին Տօբիայ ։

Ձօրին եկեալ հասեալ յեկեղեցին, ագռաւու հաւագուելոյ, որ ընկալեալ զնա մարգարէապէս, լսի՞կ իմ ասաց ցնմին իւր, փորդ նման է պատանիս այս եղբօր իմում տօբիթայ · ապա եհարց ՚ի նոցանէ, թէ ուստի՞ են · պատասխանի ետուն նոքա, թէ մեք եմք ՚ի թուոյ գերելոցն բնակելոց ՚ի նինուէ ։ Լուեալ զայս հաւագուէլ, նոյնժամայն եհարց թէ ո՞ղջ է ծերունին տօբիթ · ասաց նմա հրեշտակն, թէ այրն՝ զորմէ հարցանեսդ, է հայր պատանեկիս այսորիկ ։ Յայնժամ հաւագուէլ անկաւ զպարանոցաւ տօբիթայ և համբուրեաց զնա ասելով, ած օրհնեսցէ ըզքեզ որդեակ, զի դու ծնունդ ես առն բարեբարոյ և առաքինի · կին նր և դուստր աղբերացուցանէին զարտասուս խնդութեան ։ Ապա հաւագուէլ եղեն զգառն և պատրաստեաց հիւրոցն զընթրիս · սակայն տօբիա ոչ կամէր ուտել զհաց, մինչև լուիցէ հաւագուէլ զխնդիր նր և տացէ նմա զսարրայ դուստր իւր կնութ ։ Հաւագուէլ լուեալ զայս զբանս հարսն կարծելով, թէ մի՞ գուցէ նոյն



պատա

զատուհեսցի տօբիայ՝ որ պատուհասեցաւն մա-
ցն եօթն արանցն սառրայի. այլ հրեշտակն
տուաց ցնա, թէ որովհետև դուստր քո նշա-
նակեալ է յամուսնութի տան տաւբինայ, վա՞յ
և ոչ այլ ոք կարէ առնուլ զնա։ Լուեալ
զայս հօրն, էառ զձեռն դստերն և եդեալ
զայն յաջն տօբիայ՝ ասաց, ած աբրահամու,
իսահակայ և յակոբայ եղիցի ընդ ձեզ յա-
ջողեան, միացուսցէ զսիրտս ձեր և տացէ
ձեզ զելսն ողորմութի։ Յետ այսորիկ իբրև
եմուտ տօբիա ընդ նորահարսին իւրում յա-
ռագաստ, նախ քան զամ՝ հալածականս արար
զայսն ազմոդեաս եդեալ ի կրակետղ զլեարդ
ձկանն. և հրեշտակն ուաքեալ կապեաց զայն
տարադէր արար զնա յանապատն եգիպտական
սահմանաց։ Նորապսակ ամուսինքս աղօթէին
զաւուրս երիս, զի օրհնեսցէ տր զամուսնութի
իւրեանց։ Տօբիա ասէր ցսառրայ կին իւր.
որովհետև մեք ընկալեալ եմք զկեանս ի
ձեռն բարեպաշտ ծնողաց, ուրեմն անպատեհ
է մեզ մոռանալ ի նոր յայս վիճակի հեթա-
նոսաբար, ոյք ոչ ունին զած գիտութի ճշմարիտ։
Ի վր այսր ամի հայր հարսինն հրամայեաց
ի հասարակ գիշերի բրել գերեզման՝ կա-
կածելով, թէ գուցէ այսն հար սպանցէ և
զտօբիա։ Յայսպիսի մտայուզութիս գոլով նր
տարաքեաց զաղախինն ի ննջարան անդր տե-
սանել, թէ կենդանի իցէ նորափեսայն. և
իբրև ծանեաւ աղախինն, թէ առողջ է. նոյն-
ժա

ժամայն հաւաքուել և կէին նր մատուցին այ
զամենամեծ փառաբանութիւն և հրամայեցին
ընուլ անդրէն զփորերայն գերեզման յառաջ
քան զլուսանալ աւուրն ։ Յայսմ ժամանակի
գնաց հրեշտակն առ գաբայել մուրհակաւն
հանդերձ, և եբեր ոչ միայն զդրամսն, այլ և
զգաբայել իսկ, որ ՚ի միասին ընդ նմա բա-
րեբանեաց զբարերարութիւն ա̃ն ։ Յաւարտ հար-
սանեացն ետ հաւաքուել դստերն զկէս ըն-
չից իւրոց և աւանդեաց կտակաւ, զի նա ըն-
կալցի զկէսն մահուան նր և զմնացորդ կէսն
նորին հաստատէ կացացեալ ՚ի ծառայից,
յաղախնեաց, յանասնոց, յաւղտուց և յե-
զանց ։ ՚Ի ժամ հրաժարականն ողջունի ծնօղքն
համբուրեցին զդուստր իւրեանց և յաւէլ
ակեալ աւանդեցին նմա զչորս պատուիրանս
նախ՝ զի պատուեսցէ զսկեսուր իւր և զըս-
կեսրայրն իւրև զհարազատ ծնօղս իւր ։ երկ-
րորդ՝ զի սրտի մտօք սիրեսցէ զայր իւր ։
երրորդ՝ զի փոյթ ունիցի՝ զծառայից, և չոր-
րորդ՝ զի զճիշդ ուղիղ և մաքուր պահպանեսցէ ։
՚Ի վերայ առնելն յառաջ անցեալ գնացին
պատանին տոբիա և հրեշտակն, իսկ կին առաջ-
նոյն ընդ ծառայիցն և ը̃ անասնոց գնայր
՚ի թիկանցն ։

## Օգտակար խրատք ։

ա. Հրեշտակն ասաց, թէ ամբրաց նշանակէ չամանակն

երջանաւորդէն փօխեայ զիւր բարեպաշտութեանն ։
Ուրեմն իրաւամբ հաստատեցին նախնիքն, թէ ամուսնութիւնք կատարին յերկրի, այլ հաստատին յերկինս ։

Է. Զգուշանալ տալոյ ցպատանին փօխեա, ծնողաց եւ դոյն տան բոլորեցունցն եւ առաջնոյն ։

Կատարելութիւնք, որ զարդարեն զհոգի մեր, յոյժ լաւ են եւ թանկագին քան զոսկի եւ ըզհարստութիւն, որք են խախուտ իմն գերակայութիւնք, զհետ որոց առ մատաղութեան մեր անդադար զանկանիմք ։

Ը. Տօթեա եւ տօրբայ շէնքեանց օձքան շամպանուէն աղջկանց ։

Արանց, եթէ ձեր նորապսակք զհետ երթասցեն սմին օրինակի. զի յայնժամ յամ տունն տահասարակ առաւել լինելոց եւ օրհնութիւնք եւ բարեբաղդութիւնք ։

## Վասն բարեպաշտութեան ։

Տօթիս ուրախ եղև յոյժ կամելն իւրեան զեկին ընչաւէտ եւ բազմապտուղ. իսկ սորայ յաւէտ բարեբաղդ դատաս, զի ամուսնաւ ընդ առն առաքինւոյ ։ Հարստութին չէ հակառակ բարեպաշտութե. յորժամ անդամ բազմապատկին ինչք բարեպաշտ արանց ։ Այնպէս կեալ մեր յայս օրինակի. մի՛ խնդրեսցուք ըզհարստութի յամուսնութե, այլ դիցուք մեզ կանոն

կանոն և հիմն հաստատուն ընտրելաշատութեն միայն, զորմէ կախի համայն բարեդրութիւն վիճակի մերոյ:

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԾԱ.

## Յաղագս վերադարձին պատանւոյն Տօբեայ:

Ծերունին Տօբիթ մեծ իմն ապաժուժութ սպասէր վերադարձի որդւոյ իւրոյ. այլ 'ի չերևիլ նր 'ի նշանակեալն ժամանակի, ըսկսաւ նա կարծել, թէ գուցէ մեռեալ իցէ պարտապանն նր Գաբայէլ. իսկ մայր նր իբրև որդեկորոյս յանչափս լայր և ողբս յօրինէր, ոչ ևս կամէր մխիթարիլ բնաւ. այլ զօր ամ ելեալ յայն ճանապարհ՝ ը̄ որ պարտն էր եկաւորիլ որդւոյն, ակնարկէր, թէ գուցէ երևեսցի 'ի հեռաստանէ: Յաւուր միում նստեալ զճանապարհայն, ետես նա զշուն մի փախստեայ, զոր առեալ էր ընդ իւր որդին նր, յետ որոյ երևեցաւ և որդին ը̄ ուղեկցի իւրում: Այրն Տօբիթ ցանկացաւ ելանել ընդ առաջ որդւոյն, այլ 'ի վայր անկաւ 'ի զօրութենէ նուազութէ, և ծառայն վերականգնեաց զնա և եղև նմ յեցուկ զօրութե: Իսկ իբրև եմուտ որդին 'ի տուն, անկաւ 'ի գիրկս ծընողացն, համբուրեաց զնս և ամենեքին լացին 'ի խնդութենէ: Յետ խուն մի հանդարտելոյ նց, Երիտասարդն Տօբիա հանեալ զ լեղի



ձկանն

ձկանն , եօծ նովաւ զաչս հօր իւրոյ · զկնի
քանի մի րոպէից անկաւ . յաչաց նր թեփ
՚ի նմանութե կեղեւոյ ձուոյ · չքացան լուսունքն
և նա սկսաւ տեսանել զն առաջնոյն : Այս
այսպիսի շնորհաց ամն վերառաքեցին զգոհա-
բանութե այ ոչ միայն տօբիթ և ընտանիք նր ,
այլ և ամ որք՝ որ լուաւ զայս : Յետ եօթն
աւուրց եկն և երիտասարդն կինն տօբիայ և
եբեր ը ինքեան զօրհնութի ամն : Յայնժամ
ամ տօբիթայն ազգականք եկին առ ՚ի շնոր-
հաւորութե նմ , որք մնացին առ նմա զաւուրս
եօթն , զորս և անցուցին ամ ուրախութե :
Ծերունին տօբիթ սկսաւ խորհուրդ առնել
ընդ որդւոյ իւրում , թէ զինչ տացեն ու-
ղեկցին ՚ի վարձ վաստակոցն · որդին անդէն
պատմեաց հօրն , թէ զորքան բարիս գործեաց
նմա ուղեկիցն ՚ի ժամ ճանապարհորդութեն ,
և խորհուրդ ետ վարձատրել զնա կիսով բե-
րեալ գոյիցն · սակայն հրեշտակն հրաժեշտ ար-
ւեալ յընծայից անտի՝ ասաց նոցա , թէ պարտ
է վս այնր բարեբանել և փառաւոր առնել
զած : Յուսկ յետոյ յայտնեցաւ և ասաց , ես
եմ ռափայել մի յեօթն հրեշտակաց անտի ,
որք առաջի ամն կանգուն կան : Լուեալ զայս՝
ամենեքեան զարհուրեցան և անկան ՚ի վերայ
երեսաց իւրեանց յերկիր : Հրեշտակն ասաց
ցնոսա , մի՛ երկնչիք , զի այ այսպէս հաճոյ եղև.
և իբրև կամէր մեկնիլ , ասաց ծերունւոյն տօ-
բիթայ , թէ որովհետև դու ածահաճոյ ոք-
էիր

էիր, վս և բարեպաշտութիւն քո ոչ մնաց առանց
փորձութեան. և զայս ասացեալ, ծածկեցաւ հր֊
րեշտակն յաչաց, և ոչ ուրեք 'ի նոցանէ ե֊
րևեցաւ զկնի այնորիկ: Անդամք գերդաս֊
տանիս այնորիկ խոնարհեցան յերկիր և գո֊
հացան զԱյ փառաբանելով զսքանչելիս նորա.
Յետ այնորիկ ծերունին տօբիթ ապրեցաւ
ևս զքառասուն և երկու ամ, և յաւուրս քան
զմահ իւր հրամայեաց որդւոյ իւրում եր֊
նել 'ի նինուէէ՝ ասելով, ես աներկմիտ մի֊
ամիտ եմ, զի նինուէ յաղագս մեղաց իւրոց
անշուշտ տառապեսցի: Նմին իրի և երիտասար֊
դըն տօբիա չուեաց առ աներ իւր և առ զո֊
քանչն, որոց եցոյց զանբաւ յարգանս մինչև
ցվախճան կենաց նց, և յետ վախճանին նա֊
տուեաց արտասուօք զհողացեալ մարմինս նց
'ի գերեզմանս: Նա ժառանգեաց զամ ինչ
մնացեալ զկնի հանգուելի. 'ի վերջոյ ետես
զորդիս և զթոռնեայս իւր: Սերունդք նորա
զարդարեցեալ առաքինական վարուք և կրօնաւո֊
րութբ սիրելի էին այ և մարդկան՝ յայնմիկ
կողման բնակելոց:

## Օգտակար խրատք:

Ա. Յետ յաջող վերադարձին տօբիայ ազգականք նր
նախ հատուցին փառս այ, և ապա տօնախմբե֊
ցին շնորհաւորեալ հարսանեացն և ընտանեացն:

Ողջախոհ պարտ է լինել · մարթ է ուրախանալ ընդ բարեկամս, այլ ոչ է պիտոյ մոռանալ զնախ քան զամ գոհանալն զՏէր Այ ։

Ե· Տօնից [illegible] տալ [illegible] ԱԾ ընկերց [illegible] հրեշտա[illegible], որ [illegible] նորա

Բարեպաշտ և իմաստուն դաստիարակք են պահապան հրեշտակք են մանկանց · վասն զի յոգունք ոչ գիտեն գնահատել և զարժանաւորութիւնս ծնողաց, և յաճախակի վճարեն նոցա զապերախտութիւն ։

Զ· Հրեշտակն ՚ի [illegible] [illegible], [illegible] [illegible] անհնարին էր [illegible] ։

Աստուածուղղութիւնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ հայրական պատիժ, որ հաւատացելոց այնքան պիտանի է, որքան որդւոց՝ երկիւղն, յորում կրթեն և պահպանեն զնս ։

## Պատուէրք բարեպաշտութեան ·

Օրկեալն ՚ի տեսանելեաց աչօքիթ ոչ զրկեցաւ ՚ի լուսոյ · զօրավիգն և պաշտպան նմա էր ԱԾ ։ Նա անկարօտ էր բժշկի ՚ի դարձուցանել աչացն զտեսութիւն · զի որդին բժիշկ նմին հանդիսացաւ ։ Բարեբաստ է որդին, որ վարուքն իւրովք կարէ փարատել զվիշտս և ըզտրտմութիւնս ՚ի ծնողաց իւրոց ։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԸ.

## Յաղագս Շուշանայ.

Ի Բաբելոն էր երևելի այր ոմն ազ-
գաւ Իսրայէլացի՝ Յովակիմ անուն. սա ունէր
զկին Շուշան անուն դուստր Քեղկեայ, որ դո-
լով ՚ի բարեպաշտութեան կրթեալ վարս և յօրէ-
նսն Մովսէսի, պաշտպան լինէր առաքինութեանց
սերմանելոց և արմատացելոց յինքեան ՚ի
ձեռն բարեհամբոյր կրթականութեան: Յովակիմ
էր և այր պատուաւոր և սիրելի ամենե-
ցուն, յամենայնի վայելէր արժանապէս յո-
գերութեն ծերակուտին Իսրայէլացւոց, որ երթ
և եկ առ նա լինէին: Նստի յայսցանէ երկու
դատաւորք ՚ի բազմագիտի այց առնելոյ տան նորա,
զանօք որքամնեին մէջ զհրաշագեղն Շուշան և
՚ի վերջոյ սիրահարեալ վառեցան չարաչար նոքա.
այլ որովհետև դատաւորքս այսոքիկ բարե-
կամ էին Յովակիմայ, վայ և մերկացան իրերաց
այր իւրաքանչիւր զիւր կիրս, հաստատապէս
՚ի միտ եդեալ ՚ի կատար ածել զմտութեան
իւրեանց զչարախոհութիւն: Նոքա քաջ գի-
տէին, թէ ողջախոհն Շուշան յորժամ անգամ
երթևեկս առնէ յայգի իւր ՚ի լուանալ անդ
յաղբեր իւրում ՚ի ժամ տապոյ արեգականն.
Վայ յաւուր միում ՚ի միտ հաստատեալ զայս
չարիս, մտին նոքա յայգին յառաջ քան զեկ-
նորա և թաքեան ՚ի ծառսն: Շուշան աղէ

գոլով այսպիսի պժգալի մտահաճուե՟ երկուց ծերոցս այսոցիկ, եկեալ յայգին, առ պատկառանաց իւրոց և ամօթխածուե՟ն հրամայեաց երկոցունց նաժշտաց որք Բ. իւրն էին՝ առ վայր մի մեկնիլ անտի, և ինքն միայնիկ սկսաւ լուանիլ առ աղբերն. սակայն յանկարծաթափ գրաւեցաւ յանակնունելի իմն սարսափ և 'ի զարհուրանս 'ի տեսանելն անդէն առ ետեղք առաջի իւր զերկուս ծերունիսն, որք յանդիման եղեալ նմ՟՝ առաջի արարին զախտաւոր ցանկութ՟ կրից իւրեանց պահանջելով 'ի նմանէ զհաճեհաւանութ՟ և զբաւականութ՟։ Շուշան սեպացեալ յայսպիսի անբարեմասն վիճակի սկսաւ աղաղակ արձակել և կոչել յօգնութ՟ ինքեան զընտանիսն, այլ դատաւորքն յիւրեանցն կողմանէ առաւել ևս բարձրաձայն աղաղակէին։ Ի ձայնէ աղաղակացն փութացան անդր ամ՟ ընտանիքն։ Շուշան զառիթ աղաղակի իւրոյ դնէր 'ի վր՟ ծերոցն, որք առաջի եդին նմ՟ զզազիր առաջարկութ՟. իսկ ծերքն կշտամբէին զնա իբրև զյանցաւոր կալեալ 'ի նոցանէ 'ի գործ ամուսնականն հարազատուե՟ քակտիչ. ուստի անմեղն Շուշան յերկրորդումն աւուր կոչեցաւ յատեան դատողական։ Գոլով չքնաղագեղ և քընքուշ, քօղ էարկ նա զերեսօք իւրովք. այլ դատաւորքն հրամայեցին 'ի բաց դնել զայն, զի այնուիկ առաւել ևս զամօթի հարցեն և վշտահար արասցեն զնորին ողջախոհութ՟ի։

Երկուքն ՚ի նոցանէ սուտ վկայեցին ասելով.
Թէ յերեկն տեսաք զնա յայգւոջ ը̅ն պատան-
ւոյ միում, որ փախեաւ և ոչ կարացաք ու-
նել զնա։ Թէպէտ Շուշան ջատագովէր զիւր
անմեղութի̅ և կոչէր զԱ̅ծ յօգնութի̅, այլ ժո-
ղովուրդն առաւել հաւատաց ստայօդ ապա-
ցուցութե̅ց դատաւորացն, քանթէ բանից
բերանոյ նորա. և վ̅ճկ Շուշան եղև յանցա-
ւոր ող դատապարտեցաւ ՚ի մահ. սակայն ա̅ծ
պաշտպանն անմեղաց, լուաւ ձայնի յուսա-
հատեալ Շուշանայ և զարթոյց ՚ի մարգարէին
Դանիէլի զցանկութիւն պաշտպանելոյ անմե-
ղութե̅ն այնպէս, զի նա ՚ի յայտ ածեալ զան-
արգարութի̅ դատաւորացն այնոցիկ, զյանցա-
ւորսն մատնեաց արժանահաս դատապարտութե̅
զոր նոքա շահեցանն։ Դանիէլ խնամեալ յամ-
բոխ անդր բազմամբոխ ժողովրդեան ժող-
վելոց ՚ի զննել իրողութե̅ն, ուրանօր ածէին
զՇուշան ՚ի տեղին պատժապարտութե̅, աղաղա-
կեաց ահեղաձայն՝ ասելով, անպա՛րտ եմ ես
յանիրաւ դատապարտութե̅ դատաւորաց և ՚ի
հեղմանէ անմեղ արեան։ Դարձեալ զայս ժող-
վրդեանն զկայ էառ, և երկուց սուտ վկայիցն
ապա՛րտ եղև յայնժամ կալ առաջի ատենին
դատողութե̅։ Դանիէլ հրամայեաց մեկնել զն̅ն յի-
րերաց, զի անցնիւր ՚ի նոցանէ փոխանակ
իւրոյ անձին առանձինն լիցի պատասխանա-
տու. ապա եհարց յառաջինն, թէ ընդ որով
ծառովն տեսեր դու յայգւոջ զՇուշան ընդ
պա

պատմութեան · պատասխանեաց սուտ վկայն, թէ
է հերձեալն ոտսն · ասաց նմա դանիէլ, սուտ
վկայես, զի ահա որոց և հրեշտակ այն հերձցէ զքեզ:
Ետ այսպէս մերժեալ զնա մէջեննէ, առա
ջի արար միւսոյն զնոյն խնդր հարցուած · պա
տասխանեաց նա, թէ ընդ սղոցեալն ոտսն ·
ասաց և նմա դանիէլ, հրեշտակ այն սղոցես
ցէ զքեզ մէջ սուտ վկայութեան: Ի ժամ այս
օրինակ անհամաձայնութե նոցա այն ժողովուր
դքն՝ որ անդն կայր՝ ի ձայն բարձր փառա
ւոր արար զայն զպարծանքն անմեղութե · խոյ
զայնուհետև ծերունի դատաւորսն ըստ օրինացն
մովսիսի դատապարտեալ քարկոծ արարին վաղ
վաղակի:

## Օգտակար խրատք:

Ա. Պարտ է երկնչել ՚ի վտանգէ փորձոյ և ոչ
՚ի բանսարկութեանց · բանսարկուք և սուտք երբ
Ստաւորքն խայտառակեսցին:

Շնորհքն շուշան պատուաւորեցաւ ՚ի մեծ յաղ
թութեան, այսպէս անմեղութիւն նորա առե
գակնօրէն հանդիսացաւ առ ամէն զարհուրագին
անիրաւաբանութեան:

Բ. Պարտ ՚ի վերայ ծնողաց կրթել զորդիս
իւրեանց ՚ի բարեպաշտութե և յերկիւղ այն:
Շուշան էր չքնաղագեղ, միանգամայն և առա
քինի և երկիւղած այ: Ունէր նա զբարեպաշտ
ծնողս

ծնողս, որք կրթեցին զնա ըստ մովսիսականն օրինաց ։

Դ. Պաշտպանք ճշմարտութեան են յոյժ հարկաւոր անձինք 'ի հասարակութեան ։

Եթէ չէր արդարացուցեալ Դանիէլ զանմեղն Շուշան յատենի անդ, անշուշտ կրեալ էր նա զպատիժն որոշեալ ։

## Պտուղք բարեպաշտութեան ։

Եւ արդարն Շուշան դատապարտեցաւ 'ի մահ ըստ ամբաստանութեան երկուց սուտ վկայիցն զանհարազատութեան նորա ամուսնականն պարտաւորութեան, սակայն Դանիէլ նանրացոյց զանիրաւն զդատաստան, և սուտ վըկայքն շահեցան զարժանին զպատուհաս ։ Ութերորդ պատուիրանն անջինջ մնասցէ հանապազ 'ի միտս մեր, զի մի՛ սուտ ինչ պըղծեսցէ զբերանս մեր ։

# ՑԱՆԿ

## Առաջին մասին։


Պատմութիւնք — երեսք։

ա. Յաղագս արարչագործութեան աշխարհի 9։
բ. Յաղագս արարչագործութեան մարդոյ 10։
գ. Յաղագս անկման նոցին ՚ի դրախ-տէն 12։
դ. Յաղագս պատուիրանազանցութեան նախա-հարցն 14։
ե. Յաղագս Կայենի, որ սպան զհաբէլ զեղ-բայր իւր 17։
զ. Յաղագս ջրհեղեղին 20։
է. Յաղագս աշտարակաշինութեան բաբելոնի 23։
ը. Յաղագս աբրահամու և սառրայի 25։
թ. Յաղագս սոդոմայ և գոմորայ 27։
ժ. Յաղագս պատարագելոյն զիսահակ 30։
ժա. Յաղագս հարսանեացն իսահակայ 32։
ժբ. Յաղագս իսահակայ, որ օրհնեաց զոր-դիս իւր 35։
ժգ. Յաղագս սանդղոյն, զոր ետես յակոբ ՚ի տեսլեան 39։
ժդ. Յաղագս հրաշալի ամուսնութեան յակովբայ 41։
ժե. Յաղագս գօտեմարտութեան յակոբայ ընդ այ 44։
ժզ. Յաղագս յովսեփայ վաճառեցելոյն յեղբարց իւրոց 47։
ժէ. Յաղագս արկանելոյն յովսեփայ ՚ի բանտ վն ողջախոհութեան իւրոյ 51։

ԺԸ. Ըշտապութե յաղօթս 'ի Քանակէ 53:
ԺԹ. Յաղագս եղբարցն յաղօթս եղանակելոց
ձեւերպատո 'ի ժամանակի ամենայն աստուածու 58:
Ի. Յաղագս այնորիկ, թէ զի արդ ծանօթին
եւ յաղէտ եղբարց եւրոյ 61:
ԻԱ. Յաղագս եկեղեցականաց ծառայութե 66:
ԻԲ. Յաղագս խոստովանութե հաղորդութե 69:
ԻԳ. Յաղագս այնորիկ, թէ որպէս եհան մա-
ռեն ձեւերպատոց շնորհացելոցն 73:
ԻԴ. Յաղագս այնորիկ, թէ զիարդ էած ան-
շորհեան խորհելն ըստ անհնազանդ ձեւ-
րէր անէանելոյ: 77:
ԻԵ. Յաղագս պատմութեանց պարապմանց ա-
ռանձնելոց 'ի ընտանի ախտա 80:
ԻԶ. Յաղագս ամաչանօթե 84:
ԻԷ. Յաղագս ամօթալէ 89:
ԻԸ. Յաղագս ճահճանացն հեշտեաց 91:
ԻԹ. Յաղագս արքայից աստուածոյ 95·
Լ. Յաղագս գոշխատա 98:
ԼԱ. Յաղագս տաւնին հաւատացելոցն 'ի աստուա-
ծոյ 101:
ԼԲ. Յաղագս երեւութէ 104:
ԼԳ. Յաղագս աբեղայութեան 108:
ԼԴ. Յաղագս ժամանակաւորին եղելոց 'ի ժամա-
նակս տաւնի 112:
ԼԵ. Յաղագս արքային առաջնորդի 114:
ԼԶ. Յաղագս մարգարէիցն բարձրանո 118:
ԼԷ. Յաղագս այգեացն նախօրէին 121:
ԼԸ. Յաղագս վերահասից եղ եւայն ձեւրէին 124:



Յաղ

ԼԹ. Յաղագս չամաչելոյն եւ ոչ այլոց
տուրուան 128:
Խ. Յաղագս գերութեն բաբելացւոց 130:
ԽԱ. Յաղագս եղիերայ 133:
ԽԲ. Յաղագս համանայ 136:
ԽԳ. Յաղագս յոբայ 141:
ԽԴ. Յաղագս երից մանկանց արկելոց ՚ի հնոցն
բորբոքեալ 145:
ԽԵ. Յաղագս դանիէլի արկելոյն ՚ի գուբն
առիւծուց 148:
ԽԶ. Յաղագս ապաշխարին նինուէի 152:
ԽԷ. Յաղագս յուդիթայ 156:
ԽԸ. Յաղագս անբարեխառնութեց ծերունւոյն
փորձիլայ 161:
ԽԹ. Յաղագս ուղեգնացութե երիտասարդին
փորձիլայ: 164:
Ծ. Յաղագս հարսանեաց երիտասարդին
փորձիլայ 168:
ԾԱ. Յաղագս վերադարձի պատանւոյն փորձիլայ 172:
ԾԲ. Յաղագս շուշանայ 176:

ՅԼ՛՛ ՎԲ՛՛ ՎԱԷՐՄ. ՎԴԵՂ՛՛:



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

61
50 –

